Մեր ՀԱՅՐԸ սուրբ Ավետարանն է, ՄԱՅՐԸ մեր՝ Առաքելական սուրբ Եկեղեցին (Եղիշե, Ե դար):

Որդյա՛կ իմ, ՀՈՐԴ խրատը լսիր ու ՄՈՐԴ օրենքը մի մերժիր (Առակ. 1:8):

Այն աչքը, որ իր ՀՈՐԸ կծաղրի և իր ՄՈՐԸ հնազանդվելը կանարգի, ձորերի ագռավները պետք է փորեն ու արծիվների ձագերը պետք է ուտեն (Առակ. 30:17):

Եվ դարձյալ տալիս եմ ձեզ խորհուրդը սուրբ ԵԿԵՂԵՑՈՒ. ինչ բարի գործ որ կատարեք, թող լինի բարեգործություն և փառք հանդերձյալ կյանքի համար: Ամեն (Արձակում):

ԽՐԱՏԱՆԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ

Գիրք 5

Նա, ով չի նորոգում եւ բարձրացնում նախնիների առաքինությունը՝ ամոթ ու նախատինք է իր պապերի համար եւ մի նոր անեծք:

Սիրաք 20:28

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ

**Ծերերի պսակը բազմահմտությունն է
և նրանց պարծանքը՝ երկյուղը Աստծուց**

(Սիրաք 25:8)

Գիրք Ե

ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գիրք 5

Առաջաբան

Այս հատորյակը պատրաստված է մեծ պահոց շրջանի համար: Այստեղ ինքնըստինքյան, շեշտը դրված է պահքի և ապաշխարության վրա: Նաև ձեր ուշադրությունն ենք հրավիրում սբ. Մակար Մեծի քարոզի վրա, որում ասվում է, որ քրիստոնյային սպասվում է երկակի պատերազմ՝ արտաքին և ներքին: Ու քանի դեռ արտաքինի հետ հարցերն ի սպառ չեն լուծվել, ներքինի մասին խոսք լինել չի կարող: Արտաքինն աշխարհից և ցանկականից ձերբազատվելն է, իսկ ներքինը, որը նկատելի է դառնում միայն առաջինը հաղթահարելուց հետո, սրտի մեջ եղող հոգևոր արատներն են, որոնցից և պարտ է մաքրվել քրիստոնյային: Եվ այս նույն միտքը մի քանի անգամ կրկնվում է քարոզի մեջ՝ ցույց տալու համար նրա մեծ նշանակությունը: Սա միգուցե առաջին հայացքից պահքի և ապաշխարության հետ կարծես թե կապ չունի, բայց եթե ուշադիր լինենք, կտեսնենք, որ պահեցողությունը, ապաշխարությունը և այլ առաքինի գործեր մի նպատակ պիտի ունենան: Այն, որին մեզ մղում է սբ. Մակար Եգիպտացին իր քարոզում: Իսկ եթե այդ նպատակին չծառայի, ոչ միայն իզուր կլինի ապաշխարության մեր ջանքերը, այլև՝ վնասակար, որովհետև բազում հոգևոր արատներից մաքրվելու և սրբվելու փոխարեն, կընկնենք հպարտության, ինքնահավանության և խաբուսիկ ապահովության մեջ:

Իր քարոզը սուրբ հայրը միայն վանականներին չէ, որ ուղղում է, այլ նաև՝ աշխարհի մեջ եղող քրիստոնյաներին: Մինչև երկրորդ դարը համարյա չեն եղել վանքեր, բայց առաքյալներից սկսած մարդիկ ապրում էին այս մղումով, որի մասին գրում է հայր Մակարն իր քարոզում: Հիշենք Հոբին, որ ունենալով ամեն բան, չուներ կապվածություն և ոչ մի բանի հետ, դրա համար էլ, երբ զրկվեց ամեն ինչից, հանդարտությամբ ասաց. «Աստված տվեց, Աստված էլ տարավ»: Ուրեմն, կարելի է ապրել կենցաղական աշխարհում, սակայն նրանից հրաժարված վիճակի մեջ լինել, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Բայց այս եմ ասում, եղբայրներ, թե այսուհետև ժամանակը կարճ է: Նրանք, որ կին ունեն, այնպես ապրեն, որպես ունեցած չլինեին, և նրանք, որ լաց են լինում, որպես թե՝ լաց չլինեին, և նրանք, որ ուրախանում են, որպես թե՝ ուրախացած չլինեին, և նրանք, որ բան են գնում, որպես թե՝ ունեցած չլինեին, և նրանք, որ աշխարհիկ կյանք են վարում, որպես թե՝ վայելած չլինեին, որովհետև այս աշխարհը, այնպես, ինչպես որ է, անցնելու վրա է» (Ա Կորնթ. 7:29-31): Եվ երբ մարդը կարողանա ըստ սուրբ հոր պատվերի հեռանա երկրավոր կապվածություններից և իր իղձերը կապի երկնավորի հետ, այդժամ նոր կսկսի նկատել ներքին պայքարը, այսինքն՝ իր ապականված սրտի վիճակը, թե ինչպես է սիրտը նախանձում, ցանկանում, թշնամանում, փառամոլվում, հպարտանում և այլն: Տիրոջ այն խոսքի համեմատ, թե. «Ինչ ելնում է բերանից, սրտից է գալիս, և այն է մարդուն պղծում, քանի որ սրտից է, որ ելնում են չար խորհուրդներ, սպանություններ, շնություններ,

պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ, հայհոյանքներ: Այս բոլորն են, որ պղծում են մարդուն» (Մատթ. 15:18-19):

Եվ երբ մարդը տեսնում է այդ, այնժամ սկսում է լալ ու սգալ իր մեղավորության վրա, ինչպես բոլոր սուրբ հայրերը: Իսկ նրանք, ովքեր չեն հասնում այն վիճակին, որ իրենց իրական վիճակը ճանաչեն, ինչպես գրված է, թե. «Տերը տրտմեց նրանց սրտի կուրության համար» (Մարկ. 3:5), քայլում են ինքնագոհ, բոլորին վերևից նայելով, իբրև թե՝ իրենք արդեն լուսո որդիներ են, իսկ մյուսները՝ մոլորված մեղավորներ: Եվ սա մեծ խաբկանք է, որ ուրախացնում է մեր թշնամուն: Բայց մենք ջանանք, ըստ մեր սուրբ հայրերի օրինակի, թոթափել մեր վրայից աշխարհային լուծը, թեկուզև մնալով աշխարհի մեջ: Քանի որ, ոչ բոլորը կարող են հեռանալ վանք և անապատ: Թե՛ այն պատճառով, որ ընտանիքի տեր են, և թե, ցավոք, այն պատճառով, որ այս վերջին չար օրերում մենք ուղղակի չունենք գործող վանքեր, որոնք ճշմարտապես գտնվեին իրենց դերի մեջ: Բայց գրված է, թե. «Որտեղ որ մեղքը շատ է, շնորհն էլ շատ է», այսինքն՝ մեր վիճակի մեջ կարող ենք Աստծո շնորհով հասնել մաքրակենցաղ և սրբակենցաղ վարքի, եթե ճշմարտապես ձգտենք այն ձեռք բերել ըստ սուրբ հայրերի:

Պահքի և ապաշխարության մասին այս խրատները, հուսանք, որ կաջակցեն մեզ պահոց շրջանում և ընդհանրապես, ամբողջ տարվա ընթացքում, և կաջակցեն՝ ազատվելու աշխարհային ցանկություններից, կապվածություններից և երազանքներից, որպեսզի Տիրոջ գալուստը, ահեղ դատաստանը և մահը մեր առջև ունենալով, ջանանք հասնելու ներքին պատերազմին: Որպեսզի Տիրոջ շնորհով և մարդասիրությամբ, արժանանանք հաղթանակի՝ մաքուր և սուրբ անոթ դառնալով Նրա օրհնյալ ձեռքերում, որպեսզի Պողոս առաքյալի խոսքը կատարվի. «Ձեր փորերից կենդանի ջրի գետեր պիտի բխեն»: Հիշենք Դավթին, թե ինչպես այդ մեծ մարգարեն և սաղմոսերգուն հասավ այն վիճակին, որ սկսեց տեսնել իր սրտի չարությունը, լալով ու սգալով իր վիճակը բերեց Տիրոջ առջև՝ աղաղակելով առ Աստված, և ասելով. «Սիրտ սուրբ հաստատիր իմ մեջ, ով Աստված, և հոգի ուղիղ նորոգիր իմ փորում» (Սաղմ. 50): Տա Աստված, որ մենք էլ հասնենք այս վիճակին, որպեսզի տեսնելով մեր սիրտը, ըստ Դավթի, աղաղակենք Տիրոջը, Նարեկացու պես մեզ համարենք ամենահետինը, որպեսզի, ըստ Տիրոջ հետևյալ խոստման. «Ով իր անձը խոնարհեցնի, Աստված կբարձրացնի», մենք էլ հոգևոր բարձունքների հասնենք, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով և մարդասիրությամբ: Եվ արժանանանք Նրա խոսքին. «Երանի սրտով մաքուրներին» (Մատթ. 5:8), և Նրան փառք և պատիվ հավիտյանս: Ամեն:

Սուրբ Հայր Մակար Եգիպտացու խոսքն այն մասին, որ քրիստոնյային սպասվում է երկակի պատերազմ՝ ներքին և արտաքին

Ով անկեղծորեն ուզում է հաճեցնել Աստծուն և ով ստուգորեն ատում է թշնամական կողմը չարի, նա պետք է մղի երկակի պատերազմ՝ մաքառումներով և քաջագործություններով, ընդդեմ այս աշխարհի գործերի և երկրային զվարճանքների, ընդդեմ այն սիրո, որը մղում է աշխարհի հետ հարաբերակցության և ընդդեմ մեղավոր կրքերի: Իսկ անտեսանելի և ծածուկ գործերում պետք է պայքարել հենց չար ոգիների դեմ, որոնց համար ասում էր առաքյալը. «Մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ՝ իշխանությունների, պետությունների հետ, այս խավար աշխարհի տիրակալների հետ և երկնքի տակ եղող չոր ոգիների հետ» (Եփես. 6:12):

Խախտելով պատվիրանը և արտաքսվելով դրախտից, մարդն այս աշխարհում կապվեց երկու ձևով և երկու տեսակի կապանքներով՝ կենցաղային գործերով, աշխարհի հանդեպ եղած սիրով, այսինքն՝ մարմնավոր հաճույքներով և կրքերով, հարստության, փառքի, կնոջ և երեխայի, բարեկամի և հայրենիքի, տեղանքի և հագուստների, մի խոսքով բոլոր տեսանելիների հանդեպ եղած սիրով: Եվ այս կրքերից է, որ Աստծո խոսքը պատվիրում է հրաժարվել սեփական կամեցողությամբ, որովհետև ամեն մեկը տեսանելիներին կապվում է իր սեփական կամքով և պետք է, որ հրաժարվելով և ազատվելով այս ամենից, դառնալ պատվիրանների կատարելապես կատարող: Գաղտնապես կաշկանդում, շրջափակում, փշապատում և խավարի կապանքներով կապում են մարդուն չարության ոգիները, և այս պատճառով էլ մարդը, որքան էլ որ ցանկանում է, չի կարողանում սիրել Աստծուն, հավատալ և աղոթել, որովհետև առաջին մարդու հանցանքի ժամանակվանից հակամարտությունը իշխում է մեզ:

Եվ այս պատճառով, երբ մեկը լսում է Աստծու խոսքը, պետք է մտնի պայքարի մեջ՝ հեռացնելով իրենից կենցաղային և աշխարհային կապերը, կտրվելով բոլոր մարմնավոր հաճույքներից, իսպառ հրաժարվելով նրանցից, և այնժամ Աստծու մասին խորհելու մշտական ձգտմամբ, նոր միայն կարող է իմանալ, որ իր սրտում կա մի ուրիշ, այլ պայքար, մի ուրիշ ընդդիմություն, մի այլ պատերազմ՝ խորհուրդների և մտածումների միջոցով չար ոգիների կողմից հարուցված, որ նրան սպասվում է մի ուրիշ հոգևոր սխրագործություն: Այսպես, աներկբա հավատով և մեծ համբերությամբ, անդադար կանչելով Տիրոջը և ակնկալելով Նրանից օգնություն, կարելի է արդեն այստեղ ստանալ ազատություն ներքին կապանքներից, որոգայթներից, արգելքներից և չար ոգիների մթնդումից, այսինքն կրքերի գաղտնի ներգործությունից: Այս պատերազմը կարող է դադարել միայն Աստծո շնորհով և զորությամբ, որովհետև մարդն ի վիճակի չէ ինքն իրեն ազատել այս հակամարտությունից, խորհուրդների և մտածումների թափառումից, անտեսանելի կրքերից և չար որոգայթներից: Եթե մեկն այս աշխարհում տեսանելի իրերի կողմից կապվածություն ունի, կաշկանդվել է ամենատարբեր երկրավոր կապանքներով և տարվել չար և վնասակար կրքերով, այդ դեպքում նա չի իմանա, որ իր մեջ կա մի ուրիշ պայքար, ճակատամարտ և պատերազմ: Իսկ եթե մարդը ջանք թափի, թոթափի և ազատի իրեն այս տեսանելի աշխարհային կապանքներից, նյութական հոգսերից, մարմնավոր հաճույքներից և սկսի հարատև ձգտմամբ Տիրոջը փնտրել՝ հեռացնելով իրեն այս աշխարհից, այնժամ կհասնի այն վիճակին, որ կտեսնի իր մեջ հորձանուտը մարտնչող կրքերի, ներքին պատերազմի և չար խորհուրդների: Իսկ եթե մենք, ինչպես արդեն ասացինք, ջանասիրությամբ չհարժարվենք աշխարհից, ամբողջ սրտով չմերժենք երկրային ցանկությունները և չցանկանանք անմնացորդ մերձենալ Տիրոջը, չենք ճանաչի խաբեությունը, գաղտնապես մարտնչող ոգիների չարությունը, ծածուկ և չարաղետ կրքերի ներգործունեությունը, կմնանք օտար՝ ինքներս մեզ, որովհետև մեզ հայտնի չեն լինի մեր խոցերը: Մարդն ունենալով իր մեջ գաղտնի կրքեր, չի կարող գիտակցել այս բոլորը, քանի դեռ կամավորապես կապված է տեսանելիների հետ և կառչում է երկրավոր հոգսերին:

Իսկ ով ի սրտե հրաժարվել է աշխարհից և վայր է գցել իրենից երկրային լուծը, ազատել է իրեն ունայն ցանկություններից, փառքից, պաշտոնավարելու ձգտումից, մարդկային մեծարանքների ցանկությունից, ամբողջ սրտով հեռացել է այս ամենից, այդպիսինի հայտնապես գործվող հոգևոր սխրանքին գաղտնապես աջակցում է Տերը՝ ըստ նրա աշխարհից հրաժավելու չափի համեմատ: Եվ երբ նա անմնացորդ, այսինքն՝ մարմնով և հոգով ամրապնդված է և մշտապես հարատևում է Տիրոջը ծառայություն մատուցելու մեջ, այնժամ իր մեջ գտնում է հակամարտություն, թաքնված կրքեր, աներևույթ կապանքներ, ծածուկ պատերազմ, ճակատամարտ, նաև գաղտնի սխրանքներ: Եվ այս կերպ խնդրելով և ստա-

նալով, հոգևոր սպառազինությունը համալրվում է այն զենքերով, որի մասին գրեց երանելի առաքյալը, այսինքն՝ արդարության զրահներ, փրկության հույսի սաղավարտ, հավատի վահան և հոգևոր սուր (Եփես. 6:14-17):

Այս պարագայում է, որ կկարողանա դիմակայել սատանայի գաղտնի խարդավանքներին, որոնք պատրաստվում են չարանենգությամբ: Ձեռք բերելով այս զենքերը՝ աղոթքով, համբերությամբ, աղաչանքով, պահքով, առավել ևս, հավատքով, անձն ի վիճակի կլինի փութաջան կերպով մտնելու պատերազմի մեջ՝ իշխանությունների, պետությունների և այս խավար աշխարհի տիրակալների դեմ, և նման ձևով հաղթելով հակառակամարտ ուժերին, Սուրբ Հոգու աջակցությամբ և սեփական փութաջանությամբ բոլոր բարեպաշտ գործերում կդառնա արժանի՝ հավիտենական կյանքին, փառավորելով Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Նրան փառք և իշխանություն հավիտյանս. Ամեն:

Մեր սուրբ հայր Հովհան Ոսկեբերանի հորդորական խոսքը՝ քառասնօրյա սուրբ պահքի վերաբերյալ

Ուրախանում եմ և ցնծում, որ այժմ Աստծո եկեղեցին գեղեցկանում է իր բազմաթիվ զավակներով, և որ դուք բոլորդ այստեղ եք գալիս մեծ ուրախությամբ: Երբ նայում եմ ձեր լուսավոր հայացքներին, տեսնում եմ անհերքելի ապացույցը ձեր հոգևոր ուրախության, ինչպես որ ասում է իմաստունը. «Սրտի բերկրանքից ծաղկում է դեմքը» (Առակ. 15:13): Այդ պատճառով էլ ես այսօր վեր կացա մեծ ձգտումով, որպեսզի մասնակցեմ ձեզ հետ այս հոգևոր ուրախությանը, միևնույն ժամանակ, ցանկանալով ձեր համար լինել հռչակողը գալիք քառասնօրյա սուրբ պահոց շրջանի, որպես մեր հոգիների սպեղանու: Եվ մեր բոլորի Տերը, որպես որդեսեր Հայր, ցանկանալով մեզ մաքրել մեղքերից, շնորհել է բժշկություն՝ սուրբ պահքի միջոցով: Եվ այսպես, ոչ ոք թող չտխրի, ոչ ոք թախծոտ չերևա, այլ ցնծա, ուրախանա և փառավորի մեր հոգիների համար Հոգացողին, որ բացել է

մեզ համար այս սքանչելի ճանապարհը, և դուք մեծ խնդությամբ ընդունեք պահքի սկսվելը: Թող ամաչեն հույները (փիլիսոփաները), խայտառակվեն հրեաները, տեսնելով, թե ինչ ուրախությամբ և պատրաստակամությամբ ենք մենք ողջունում պահքի գալուստը, և թող գործնականում տեսնեն, թե ինչ տարբերություն կա մեր և իրենց միջև: Նրանք իրենց տոները և հանդիսությունները համարում են հարբեցողության և ամեն տեսակի անամոթության ու թեթևսոլիկության ժամանակ, որը և սովորաբար գործում են այդ շրջանում: Իսկ Աստծո եկեղեցին, հակառակ նրանց, տոն է անվանում պահքը՝ արհամարհելով ուտեստեղենի հաճույքը, և հետևում ամենատարբեր առաքինությունների: Եվ սա է ճշմարիտ տոնը, որտեղ հոգիների փրկությունն է,որտեղ խաղաղությունն ու համերաշխությունն է, որտեղից որ վռնդված է ամեն տեսակի կենցաղային ցոփություն, որտեղ չկա ոչ աղաղակ, ոչ աղմուկ, ոչ խոհարարների իրարանցում, ոչ անասունների մորթ, այլ այս բոլորի փոխարեն տիրում է բացարձակ հանդարտություն, լռություն, սեր, ուրախություն, խաղաղություն, հեզություն և այլ անհամար օրհնություններ:

Այսօր չես տեսնի տարբերություն հարուստի և աղքատի բացված սեղանների միջև, որովհետև ամենուր կերակուրը պարզ է, խորթ՝ ամենատարբեր շռայլությունների և ճոխությունների: Եվ հենց սրա համար էլ ցանկանում եմ, որ այս տոնին մի փոքր զրուցենք ձեր՝ սիրելիներիդ հետ, նախօրոք խնդրելով, որ մեր խոսքը լսեք հանդարտությամբ, որպեսզի այստեղից գնալով, ձեզ հետ բարի պտուղներ տանեք տուն: Մենք հավաքվում ենք այստեղ ոչ հենց այնպես և ոչ իզուր, միայն նրա համար, որպեսզի ձեզանից մեկը խոսի, իսկ մյուսը ձեռքը թափ տա մյուսի ասածի վրա, և հետո բոլորը ցրվեն այստեղից: Այլ որպեսզի և՛ մենք խոսենք օգտակար ինչ-որ բան, պիտանի՝ ձեր հոգիների փրկության համար, և դուք ստանաք պտուղ ու մեծ օգուտ մեր խոսքերից, և սրանով էլ դուրս գանք այստեղից: Եկեղեցին հոգևոր առողջարան է, և այստեղ եկողները պիտի ստանան համապատասխան դեղամիջոցներ,որպեսզի այն դնեն իրենց վերքերին և նոր հեռանան այստեղից: Իսկ ի՞նչ է լսելը, եթե գործնականում այն չենք կատարելու: Չէ՞ որ ոչ մի օգուտ չի լինի դրանից: Այս մասին լսիր երանելի Պողոսին, որ ասում է. «Որովհետև օրենքը լսողները չեն, որ արդար են Աստծո առաջ, այլ օրենքը կատարողները պիտի արդարացվեն» (Հռոմ. 2:13): Եվ Քրիստոսն էլ իր քարոզում ասում էր. «Ոչ ամեն մարդ, որ ինձ Տե՜ր, Տե՜ր է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա, ով կատարում է կամքը Իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ. 7:22):

Եվ այսպես, սիրելիներ, իմանանք, որ մենք ոչ մի օգուտ չենք ստանա լսելուց, եթե սրան չհետևի գործնականում կատարելը: Չլինենք միայն լսողներ, այլև կատարողներ, որպեսզի խոսքին համապատասխանող գործի ծառայեն, Խոսքը ոգեշնչման աղբյուր դառնա: Այժմ բացեք ձեր հոգին և ընդունեք խոսքը՝ պահքի մասին: Ինչպես որ պատրաստվում են ընդունել առաքինի և գեղեցիկ հարսնացուին՝ հարսանյաց սրահը

զարդարելով ծածկոցներով, մաքրում են ամբողջ տունը, թույլ չեն տալիս, որ այնտեղ մտնի ոչ մի անպիտան աղախին, և հետո արդեն առաջնորդում են հարսնացուին հարսանյաց հարկաբաժին: Սրա նմանողությամբ, ցանկանում եմ, որպեսզի դուք ևս՝ մաքրելով ձեր հոգիները, հրաժեշտ տաք զվարճանքներին և ամեն տեսակի անժուժկալություններին, գրկաբաց ընդունելով բոլոր օրհնությունների մորը, ողջախոհության, բոլոր առաքինությունների ուսուցչուհուն, այսինքն՝ պահքին, որպեսզի և՛ դուք բավականություն, մեծ հաճույք ստանաք և նա՝ պահքը, տա ձեզ համապատասխան դեղամիջոց: Բժիշկները, երբ մտադրվում են դեղամիջոց տալու նրանց, ովքեր ցանկանում են մաքրվել նեխած ու փչացած հյութերից, պատվիրում են ձեռնպահ մնալ սովորական կերակուրից, որպեսզի այն չխանգարի դեղամիջոցին ներգործելու և իր զորությունը ցույց տալու: Առավել ևս, մենք՝ պատրաստվելով ընդունել այս հոգևոր դեղամիջոցը, այսինքն՝ այն օգտակարությունը, որ առաջանում է պահեցողությունից, պետք է ժուժկալությամբ մաքրենք մեր միտքը և թեթևացնենք մեր անձը, որպեսզի անժուժկալությամբ աղտոտված պահեցողությունը չդարձնի մեզ համար անօգուտ և անպտուղ:

Տեսնում եմ, որ շատերին տարօրինակ է թվում իմ խոսքը, բայց խընդրում եմ ձեզ, անգիտակցաբար չտրվեք սովորության ստրկամտությանը, այլ մեր կյանքը դասավորենք համապատասխան մեր գիտակցության: Արդյոք մենք որևէ շահ կարո՞ղ ենք ունենալ, եթե ամբողջ օրը տրվենք կերակրով հագեցմանը և հարբեցողությանը: Ինչպես որ մարդկային ցեղի համար անժուժկալությունը կերակրի մեջ դառնում է պատճառ և աղբյուր անհամար չարությունների, այնպես էլ պահքը, և արհամարհանքը հաճելի ուտեստեղենի հանդեպ, դարձել են պատճառ՝ անպատմելի օրհնությունների:

Չարահնար դևը և մարդկային ցեղի թշնամին տեսնելով, որ առաջին ստեղծվածը դրախտում անհոգ կյանք էր վայելում և մարմնով հանդերձավորվածը երկրի վրա ապրում էր հրեշտակի պես, որոշեց գայթակղել և տանել նրան դեպի անկում՝ ավելի մեծ օրհնություններ խոստանալով, և սրանով զրկելով մարդուն նաև նրանից, ինչը նա արդեն ուներ: Ահա թե ինչ է նշանակում սեփական չափանիշների մեջ չմնալ և ցանկանալ ավելին: Այս մատնացույց անելով, իմաստունն ասաց. «Մահն աշխարհ է եկել բանսարկուի նախանձով» (Իմաստ. 2:24):

Տեսա՞ր, սիրելիս, թե ինչպես անժուժկալության հետևանքով մահը եղավ: Տես, ինչպես է հետագայում Աստվածային Գիրը դատապարտում զվարճությունները և ասում. «Ժողովուրդը նստեց, որ կերուխում անի, ապա վեր կացավ, որ պարի» (Ելից. 32:6), իսկ մի այլ տեղ. «Կերավ ու հագեցավ, ճարպակալեց ու ընբոստացավ այդ սիրելի մարդը» (Բ Օրինաց 32:15): Սոդոմի բնակիչները այս բանով և այլ հանցանքներով, իրենց վրա բերեցին Աստծու ահավոր բարկությունը: Լսիր, թե ինչ է ասում մարգարեն. «Սոդոմի անօրենությունն այս էր. ամբարտավանություն,

հացով լիացածություն, գինու մեջ հղփածածություն» (Եզեկիել 16:49), այս արատ՝ կարծես թե հանդիսանում է արմատը ամեն չարիքների: Տեսնո՞ւմ ես անժուժկալության չարիքը: Իսկ այժմ տես մեծ և բարենպաստ ներգործությունը պահքի: Անցկացնելով քառասուն օր պահքով, մեծ Մովսեսը արժանացավ ստանալու օրենքը, և երբ իջավ սարից ու տեսավ ժողովրդի անօրենությունը, նետեց այդ քարե տախտակները, որոնք ստացել էր մեծ ջանքով, և այն ջարդեց՝ անհնար համարելով հայտնելու Աստծու պատվիրանները հարբեցողությամբ և անօրենությամբ տարված ժողովրդին: Եվ սրա համար սքանչելի այս մարգարեն պետք է նորից քառասուն օր պահեցողության տրվեր, որպեսզի արժանանար վերստին ստանալու և ժողովրդին բերելու քարե տախտակները՝ ժողովրդի անօրենության պատճառով ջարդվածների փոխարեն (Ելք.24, 32, 34):

Եվ մեծ եղիան էլ, նույնքան ժամանակ պահք պահելով, և խուսափեց մահվան տիրապետությունից ու վեր բարձրանալով կրակե զրահակարքով երկինք՝ մինչ այժմ մահ չճաշակեց (4 Թագ, Բ:1, 11): Այն ցանկալի այրն էլ (Դանիելը)՝ երկար օրեր անցկացնելով պահեցողությամբ, արժանացավ սքանչելի տեսիլքի (Դան. 10:3): Նա սանձեց առյուծների կատաղությունը՝ վերափոխելով այն ոչխարների հեզության, չփոխելով նրանց բնությունը, այլ միայն տրամադրվածությունը՝ մինչդեռ նրանց գազանությունը մնաց նույնը:

Նինվեացիներն էլ ծոմապահությամբ բեկեցին Տիրոջ վճիռը՝ ստիպելով ծոմ պահել ոչ միայն մարդկանց, այլև անբան անասուններին, և այս կերպ հեռանալով բոլոր չար գործերից, արժանացան տիեզերքի Արարչի մարդասիրությանը (Հովնան 3:7):

Կարող ենք թվարկել և բազմաթիվ այլոց, որոնք փառավորվեցին պահեցողությամբ թե՛ Հին, և թե Նոր ուխտերի ժամանակաշրջանում: Բայց ինչի համար ես դիմեմ միայն ծառաներին: Հարկ է նաև նայել մեր բոլորի Տիրոջը: Մեր Տեր Հիսուս Քրիստոսն էլ քառասնօրյա ծոմապահությունից հետո մարտի մեջ մտավ սատանայի հետ, և մեզ բոլորիս օրինակ տվեց այն բանի, որ մենք էլ նույն պահեցողությամբ զինվենք, և Նրա միջոցով զորություն ձեռք բերելով, ելնենք պատերազմի սատանայի դեմ (Մատթ. 4:2): Այստեղ կարող է ինչ-որ մեկը իր սուր և արթուն մտքով հարցնել, թե ինչու Տերը այնքան ժամանակ պահք պահեց, որքան որ ծառաները, և ոչ ավել նրանցից: Այդպես արվեց ոչ հենց այնպես և ոչ իզուր այլ իմաստությամբ և իր անճառելի մարդասիրությամբ, որպեսզի չլինի թե մտածեն, թե Նա հայտնվեց ոչ իրական, և մարմին չառավ Իր վրա, և կամ՝ չուներ մարդկային բնություն, դրա համար էլ Նա այդքան օր պահք պահեց: Այդպիսով փակում է անամոթ բերանները վիճաբանություն սիրողների: Եվ Նա հաճեցավ պահք պահել այդքան ժամանակ և ոչ ավելի, ծառաներից, որպեսզի գործնականում սովորեցնի մեզ, որ հանդերձավորված է այնպիսի մարմնով, ինչպիսին որ մերն է, և որ Իրեն խորթ չէ մեր բնությունը: Ահա պարզ դարձավ մեզ և՛ ծառաների

օրինակից, և հենց Տիրոջ օրինակից, որ մեծ է պահքի զորությունը, և մեծ է հոգու օգուտը: Եվ սրա համար էլ, խնդրում եմ ձեր սերը, որպեսզի իմանալով օգտակարությունը պահեցողության, չզրկվեք դրանից՝ անհոգության պատճառով և պահքի գալստից չտրտմեք, այլ ուրախանաք ու ցնծաք երանելի Պողոսի խոսքի համեմատ. «Դրա համար էլ չենք տկարանում, այլ թեպետ և, մեր այս արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրե» (2 Կոր. 4:16):

Պահքը հոգու սնունդ է: Եվ ինչպես մարմնավոր կերակուրը պարարտացնում է մարմինը, այնպես էլ պահքը ամրացնում է հոգին, հաղորդ է անում նրան թեթև թռիչքի, ընդունակ է դարձնում վեր բարձրանալու և երկնայինը խորհելու, բարձրացնելով վեր այս կյանքի հաճույքներից և քաղցրություններից: Ինչպես որ թեթև նավերը՝ արագ ընթանալով անցնում են ծովը, իսկ ծանրաբեռնվածները հաճախ խորտակվում են, այնպես էլ պահքը մեր միտքը դարձնում է ավելի թեթև և աջակցում է՝ արագ անցնելու այս այժմեական կյանքի ծովով, օգնում հասնելու երկինք, երկնային խորհուրդներին: Չդողդղալով ներկայի համար, համարելով այն չնչին ստվեր և երազ: Քանի որ հարբեցողությունը և որկրամոլությունը ծանրացնում է մեր միտքը, մարմինը և գերության մատնում հոգին, փոթորկելով բոլոր կողմերից, թույլ չի տալիս, որ մարդն ամուր հիմք և դատողություն ձեռք բերի, ստիպում է նրան քարշ գալ ժայռերի միջով և ամեն ինչ գործել հոգու փրկության դեմ: Սիրելիներ, ուրեմն, անհոգ չլինենք մեր փրկության գործում, և իմանալով, թե որքան չարիքներ են առաջանում անժուժկալությունից, ջանանք խուսափել վնասակար հետևանքներից: Շքեղությունը և ճոխությունը արգելված է ոչ միայն Նոր Կտակարանում, որտեղ պահանջվում է բարեպաշտություն, առաջարկվում են առավել հոգևոր սխրանքներ, մեծ ջանքեր, նաև բազմաթիվ պարգևներ և անպատմելի լուսապսակներ, այլև Հին Կտակարանում էլ չէր թույլատրվում: Երբ դեռ ստվերի մեջ էին, միայն ճրագի լույսով էին առաջնորդվում, և հոգևոր գիտակցությունն էլ այնքան մեծ չէր, այլ այնպես, ինչպես կաթնակեր երեխաներինը: Որպեսզի մեզ չթվա, թե մենք առանց հիմք ունենալու ենք այսպես դատապարտում զվարճությունները (այսօր այդ բոլորին գումարվել է հեռուստացույցը), լսենք մարգարեին, որն ասում է. «Դուք, որ գալիս եք դեպի չարիքների օրը, մոտենում եք հասնելու ստությունների շաբաթին, դուք, որ ննջում եք փղոսկրյա գահավորակներին, մեղկանում ձեր անկողիններում, հոտերից ուլեր եք ուտում և նախիրներից՝ առատ հորթեր, դուք, որ պարում եք սրինգների նվագի տակ, և դրանք մնայուն բան համարեցիք և ոչ՝ անցավոր, դուք, որ խմում եք անխառը գինի և օծվում անուշ յուղերով» (Ամոս 6:3-6): Տեսնո՞ւմ եք, թե ինչպես է մերկացնում մարգարեն ճոխությունը և դրա հետ մեկտեղ, հրեաներին համարում անզգա, անմիտ և հանապազօր որկրամոլությանը տրված: Ուշադրություն դարձրեք այս արտահայտությանը, որ մերկացնում է նրանց անհոգությունը՝ կերակրի և գինու օգտագործման մեջ, ցույց

տալով սրանով, որ կերակրով և խմիչքով բավականություն ստանալը սահմանափակվում է միայն կոկորդով և բերանով, և ավելի չի տարածվում: Հաճույքները կարճաժամկետ են և ոչ՝ շարունակական, իսկ նրանից առաջացած սուգը մշտական է և անվերջ: Եվ սա ասում է՝ փորձով իմանալով. «Դրանք մնայուն համարեցի և ոչ՝ անցավոր»: Այսինքն, համարում էին մշտական, և ոչ՝ անհետացող, և մի վայրկյան իսկ չկանգնող: Այսպիսին է ամեն մարդկայինը և մարմնավորը. չի հասցնում ի հայտ գալ, արդեն իսկ չքվում է: Այսպիսին է զվարճությունը, այսպիսին՝ փառքը և մարդկային իշխանությունը, այսպիսին՝ հարստությունը, և ընդհանրապես, այսպիսին են հաջողություններն այս կյանքի: Այն իր մեջ չունի ոչ մի ամուր, ոչ մի մշտական և ոչ մի հաստատուն բան, այլ փախչում է ավելի արագ, քան գետերի հոսքը, և թողնում է ձեռնունայն ու դատարկ, նրանց, ովքեր կառչում-մնում են նման բաների: Իսկ հոգևորը, ընդհակառակ այդպիսին չէ: Այն ամուր է ու անսասան, փոփոխության չի ենթարկվում և մնում է հավիտյան: Ինչ անմտություն կլիներ կայունը փոխել անկայունի հետ, հավիտենականը՝ ժամանակավորի, մշտապես եղողը՝ վաղանցուկի, գալիքում մեծ ուրախությունների արժանացնողը նրա հետ, ինչը մեզ համար պատրաստում է ահավոր տանջանքներ: Խորհելով այս ամենի մասին, սիրելիներ, և դողալով մեր փրկության համար, արհամարհենք անպտուղ և կործանարար զվարճանքները, սիրենք պահքը և ամեն տեսակի այլ առաքինություններ և շտապենք ամեն օր բարի գործեր անելու, որպեսզի քառասնօրյա սուրբ պահքի ընթացքում հոգևոր գնումներ կատարենք, հավաքելով առաքինի գործերից մեծ հարստություն:

Իսկ երբ մոտենանք քառասնօրյա սուրբ պահքի վերջին, ավարտելով պահոց նավարկությունը, և Աստծո ողորմությամբ, վերջապես հասնենք խաղաղ նավահանգստին, այդժամ պետք չէ, որ տրվենք անհոգության, այլ ավելի մեծ ջանք և զգոնություն ցուցաբերենք:

Նավավարը, երբ նավարկելով անցնում է անթիվ ծովային անդունդներով և պատրաստվում արդեն իջեցրած առագաստներով մտնելու նավահանգիստ, այնժամ ցուցաբերում է հատուկ ուշիմություն և հոգատարություն, որպեսզի ինչ-որ կերպ նավը չբախվի ժայռերին և քարերին և չկորցնի իր կատարած աշխատանքի պտուղը: Այս կերպ և վարվում են վազորդները, երբ արդեն մոտենում են մրցասպարեզի վերջին, այնժամ ավելի մեծ ճիգ են գործադրում, որպեսզի որքան հնարավոր է, շուտ հասնեն վերջնագծին և արժանանան պարգևների: Հավասարապես և, ըմբշամարտիկները. բազում ջանքերից և հաղթություններից հետո, երբ հասնում են վերջնական փուլին, դափնեպսակ ստանալու փափագով, ավելի մեծ ջանք են թափում, որպեսզի դուրս գան հաղթական դափնեպսակով: Եվ այսպես, ինչպես նավավարը, վազորդը և ըմբշամարտիկը այդ ժամին ավելի են լարում իրենց ճիգերն ու զգոնությունը, երբ մոտենում է իրենց ջանքերի ավարտը, այսպիսի եղանակով էլ մենք, երբ Աստծո ողորմությամբ, հասնենք Ավագ շաբաթին, պետք է հատկապես էլ

ավելի զորացնենք պահքի սխրանքը՝ այն ավարտելով աղոթքի ջանասիրությամբ, կատարելով մեղքերի ընդհանրական և անկեղծ խոստովանություն, բարի գործեր, առատաձեռն ողորմություններ, ցուցաբերելով հանդարտություն, հեզություն և ամեն տեսակի առաքինություններ, որպեսզի նմանօրինակ բարի գործերով արժանանանք հասնելու Տիրոջ Հարությանը և բերկրելու Նրա առատաձեռնությամբ:

Ավագ են անվանում այս շաբաթը ոչ այն բանի համար, նրա օրերն ավելի երկար են, քան մյուս շաբաթներինը: Կան շատ ավելի երկար օրեր ունեցող շաբաթներ: Եվ ոչ նրա համար, որ նրա օրերի թիվն ավելի է քան մյուսներինը: Օրերի քանակը նույնն է, ինչ մյուսներինը: Այդ դեպքում, ինչո՞ւ են այն անվանում Ավագ: Որովհետև այդ ընթացքում կատարվել է մեծ և անճառելի բարերարություն: Այս շաբաթվա մեջ է, որ վերջանում է երկարաժամկետ պատերազմը, ոչնչացվում է մահը, կործանվում երդումը, ավերվում է սատանայի իշխանությունը, հափշտակվում են նրա զենքերը, Աստված հաշտվում է մարդու հետ: Երկինքը նրանց համար դարձնում է մատչելի, մարդիկ միանում են հրեշտակներին, բաժանվածները մերձանում, պատը քանդվում և արգելքն ավիրվում: Խաղաղության Աստվածը հաշտեցնում է երկինքը և երկիրը: Սրա համար էլ, այս շաբաթն անվանում ենք՝ Ավագ, քանի որ Տերը շնորհել է մեզ այս շաբաթվա մեջ այսքան շատ բարիքներ: Եվ այս պատճառով էլ, շատերն այս շաբաթվա ընթացքում ավելի են խստացնում պահքը և առավել ճգնում սուրբ հսկումներում և գիշերային աղոթքներում: Շատ ավելի առատաձեռն են դառնում ողորմություն տալու մեջ, ցանկանալով իրենց այս գործերով ցուցաբերել այն հարգանքը, որ նրանք տածում են այս շաբաթվա հանդեպ: Եթե Տերը մեզ այս շաբաթվա մեջ շնորհել է այսքան բարիքներ, արդյոք պետք չէ՞, որ մենք էլ, ինչով կարող ենք, ցույց տանք մեր հարգանքը և մեծարանքը: Թագավորները ևս իրենց գործերով ցույց են տալիս, թե ինչպիսի ակնածանք են տածում այս արժանապատիվ օրերի հանդեպ: Նրանք պատվիրում են, որ այս օրերին հանգիստ առնեն նրանք ովքեր զբաղված են քաղաքացիական գործերով: Փակվում են դատարանների դռները, դադարեցվում ամեն տեսակի վեճերը և մրցությունները, որպեսզի բոլորը կարողանան մեծ լռությամբ և հանդարտությամբ մոտենալ հոգևոր գործի ավարտին: Բացի սրանից, նրանք ցուցաբերում են նաև այլ ողորմածություններ. ազատ են արձակում շղթաներից զնդաններում փակվածներին, և որքան հնարավոր է, ջանում են նմանվել իրենց Տիրոջը: Եվ իսկապես, ինչպես որ Նա ազատում է մեզ մեղքի ծանր բանտից և տալիս բազում բարիքների բերկրություն, այդպես էլ մենք, ասում են թագավորները, ինչով կարող ենք, պետք է նմանվենք մեր մարդասեր Տիրոջը:

Տեսնո՞ւմ եք թե ինչպես է մեզանից յուրաքանչյուրն ամեն կերպ ջանում ցուցաբերել հարգանք և ակնածանք այն օրերի հանդեպ, որոնք դարձել են պատճառ՝ բազում բարիքների: Սրա համար էլ, խնդրում եմ, որ այդ

օրերին, առավել քան երբեք, գանք այստեղ՝ եկեղեցի, հետաձգելով ամեն կենցաղային մտածում, մտքի բարի և մաքուր աչքով: Մտնելով եկեղեցի, ոչ ոք իր հետ թող ներս չմտցնի կենցաղական հոգսեր, որպեսզի գնալով այստեղից, մեզ հետ տուն տանենք մեր ջանքերի համեմատ ստացված պարգևներ:

Եվ այս միջոցով էլ արժանանանք հասնելու Տիրոջ օրվան՝ Սբ. Զատիկի տոնին և արժանապես մոտենանք հոգևոր ճաշկերույթին, մաքուր խղճմտանքով հաղորդվենք անճառելի և անմահ բարիքի հետ և լցվենք երկնավոր օրհնությամբ, աղոթքով և բարեխոսությամբ նրանց, ովքեր հաճելի եղան հենց Իրեն՝ Քրիստոսին, մեր մարդասեր Աստծուն, Որի հետ և Հորը և Սուրբ Հոգուն փառք, իշխանություն, պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

Նարեկ

Բան Ծ

Արդ, դու, ողորմա՜ծ Աստված բոլորի, Տե՜ր Հիսուս Քրիստոս,
Եթե գթաս ինձ, այժմ էլ ելքի մի հնար կգտնես.
Հանուն օրհնյալ Հորդ փառքի մեծության
Եվ քո Սուրբ Հոգու գթառատ կամքի՝
Տե՛ս տառապանքներն իմ տաժանելի,
Որոնք բացել եմ ահա քո առաջ,
Լսի՛ր և սրտիս խորքերից բխած
Ամբաստանությունն այս ինքնամատույց.
Գթությա՛մբ նայիր իմ այս ցնորված ու խակ բնությանն
Եվ պարգևի՛ր իմ վերքերին բուժում,
Եղծմանս՝ նորոգում, կորստիս՝ մի ճար,
Այս բազմակործան մահվանից՝ զերծում,
Ապականվածիս՝ կյանքի ճանապարհ
Եվ հույսի մի դուռ՝ ամբարշտյալիս:
Արդ, եթե ես ինձ հակաբնույթ կամք ցուցաբերեցի,

Որքա՜ն առավել դու պիտի ցույց տաս
Մեծիդ ընտանի ու ինքնահատուկ բարերարություն.
Եթե փշերից ընծայաբերվեց քաղցրախորժ պտուղ,
Որչա՜փ ավելի կենացդ ծառից
Անմահական համ պիտի ստացվի.
Եթե թշվառս ինձ ատողների
Համար խնդրեցի ողորմածություն,
Դու ինձ, որ Քոնն եմ, ո՜վ ամենազոր,
Ինչպե՞ս կրկնակին պիտի չընծայես
Քո այդ աննվազ առատությունից:
Այժմ տե՛ս, Բարձրյա՜լ, մեծությունը Քո
Եվ նայելով իմ այս փոքրկության՝
Ընդունի՛ր սակավ խոստովանությունն անթիվ մեղքերիս.
Դու, որ տեսնում ես անթյուր ամեն ինչ բովանդակապես,
Բայց անտեսեցիր գայթումը Վեմի,
Անտե՛ս արա և սասանումները փոքրիկ ավազիս.
Ինչպես որ Դավթի պատժապարտությունն
Իսկույն վերացրիր, երբ ասաց՝ մեղա՜,
Նու՛յնն արա և ինձ, ո՜վ երկայնամիտ,
Հեծեծանքներիս ձայնին անսալով.
Դու, որ բոլորին շնորհատրում ես
Անաչառությամբ ու առատորեն՝
Որպես բարի ու բազմիմաստ հաղթող,
Եվ չես նախատում հետին ստրուկին,
Որպես ողորմած ու ամենաստեղծ՝
Ստացի՛ր կրկին և մի՛ կորցրու Քո
Արյամբ բուժվածիս, ո՜վ ամենագութ.
Քանզի միայն Դու կարող ես փրկել ու տալ քավություն,
Քեզ վայել է փա՜ռք ըստ ամենայնի հավիտյանս. ամեն:

(Սբ. Գրիգոր Նարեկացի)

ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ

*Որդիներ՛, ձեր հոր **խրատը** լսեցե՛ք ու ականջ դրե՛ք, որ իմաստությունը ճանաչեք, որովհետև ես ձեզ բարի ուսում եմ տալիս. իմ օրենքը մի՛ մերժեք (Առակ. 4:1-2):*

Աստվածաշնչից

1. Տեր Աստված պատվիրեց Ադամին ու ասաց. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք» (Ծննդ. 2:16-17):

2. Կինը տեսավ, որ ծառի պտուղը լավ է ուտելու համար ... Նա առավ պտղից, կերավ և տվեց իր մոտ կանգնած ամուսնուն, և նրանք կերան (Ծննդ. 3:6):

3. Ինչպես որ մեկ մարդով մեղքն աշխարհ մտավ, և մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածվեց մահը, որովհետև բոլորն էլ մեղանչեցին (Հռոմ. 5:12):

4. Եսավն իր անդրանիկությունը վաճառեց Հակոբին, իսկ Հակոբը Եսավին տվեց հաց ու ոսպապուր: Սա կերավ, խմեց ու վեր կացավ-գնաց: Այսպիսով, Եսավն արհամարհեց իր անդրանիկությունը (Ծննդ. 25:33-34):

5. -Եսավը Հակոբի եղբայրը չէ՞ր, -ասում է Տերը, -Ես սիրեցի Հակոբին, բայց Եսավին ատեցի (Մաղաք.1:2):

6. Ուտելիքը որովայնի և որովայնը ուտելիքի համար է: Բայց Աստված և՛ այս, և՛ այն պիտի կործանի (Ա. Կորնթ. 6:13):

7. Նրանց վախճանը կորուստ է. նրանց Աստվածը իրենց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթը, նրանք միայն երկրավոր բաներ են խորհում (Փիլ. 3:19):

8. Մեկը հավատում է, թե կարելի է ուտել ամեն բան, իսկ ով տկար է հավատի մեջ, բանջարեղեն է ուտում. ով ուտում է, թող չարհամարհի նրան, որ չի ուտում, իսկ ով չի ուտում, թող չդատի նրան, ով ուտում է, քանզի Աստված նրան ընդունեց (Հռոմ. 14:2-3):

9. Որովհետև Աստծո արքայությունը ուտելիք և ըմպելիք չէ, այլ՝ արդարություն և խաղաղություն և խնդություն՝ Սուրբ Հոգով (Հռոմ. 14:17):

10. Արդ՝ ուտեք թե խմեք, կամ ինչ էլ անեք, ամեն ինչ արե՛ք Աստծու

փառքի համար (Ա Կորնթ. 10:31):

11. Եվ Իսրայել գիրանալով աքացեց (գիրացավ, հաստացավ, ճարպակալեց) ու իր Արարիչ Աստծուն թողեց և իր փրկության Վեմը արհամարհեց (Բ Օր. 32:15):

12. Վայ ձեզ, որ այժմ հագեցած եք, որովհետև քաղցած պիտի մնաք (Ղուկ. 6:25):

13. Երանի՜ նրանց, որ քաղցած են այժմ, որովհետև պիտի հագենան (Ղուկ. 6:21):

14. Աշխատեք ո՛չ թե կորստական կերակրի համար, այլ այն կերակրի, որ տանում է հավիտենական կյանք (Հովհ. 6:27):

15. Եվ դուք մի՛ մտահոգվեք, թե ինչ եք ուտելու կամ ինչ եք խմելու, և մի՛ մտատանջվեք, որովհետև այդ ամենը աշխարհի հեթանոսներն են, որ փնտրում են: Իսկ ձեր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք է ձեզ: Այլ դուք հետամուտ եղեք Աստծու արքայությանը, և այդ ամենը ավելիով կտրվի ձեզ (Ղուկ. 12:29-31):

16. Ծոմապահության օր որոշեցեք (Հովել 1:14):

17. Իմ անձը խոնարհեցրի ծոմ պահելով (Սաղմ. 68:11):

18. Ծնկներս ծոմապահությունից տկարացան ու մարմինս պարարտությունից մաշվեց (Սաղմ. 108:24):

19. Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ լինեք կեղծավորների նման (Մատթ. 6:16):

20. Այս տեսակ դևը այլ կերպ չի ելնում, եթե ոչ աղոթքով ու ծոմապահությամբ (Մատթ. 17:20):

21. Երբ ճոխ սեղան ես նստում, քո կոկորդը բաց մի արա ուտելու համար, մի՛ ասա՝ ինչքա՜ն շատ բան կա սրա վրա: Հիշիր, որ վատ է չար աչքը, ի՞նչ կա չար աչքից ավելի չար... Ուր որ նայես՝ ձեռքդ մի երկարիր: Մի՛ փութա ձեռքդ երկարել նրա ափսեի մեջ ...Մարդու պես կեր այն, ինչ կա քո առջև, և մի ծամծմիր, որպեսզի ատելի չլինես (Սիրաք 34:12-19):

22. Ի սեր բարեկրթության, առաջինը դու դադարիր ուտելուց և ագահություն մի՛ արա, որպեսզի չգայթակղվես: Եթե շատերի մեջ նստես, նրանցից առաջ ձեռքդ մի երկարիր: Բարեկիրթ մարդը բավարարվում է քչով և իր անկողնում ծանր չի քնում: Առողջ քունը լինում է չափավոր ստամոքսի դեպքում. մարդ վեր է կենում արշալույսին, և նրա հոգին էլ թեթև է լինում: Անկուշտ մարդն ունենում է անքնության ցավեր, սրտխառնուք և որովայնի խիթեր... Լսիր ինձ, որդյա՛կ, մի՛ արհամարհիր ինձ և վերջում կհասկանաս իմ խոսքերը (Սիրաք 34: 20-26):

23. Երբ հզորների հետ սեղան նստես՝ ընթրիքի, ուտելուց առաջ լա՛վ իմացիր, թե ինչ են դրել քո առաջ, և նոր միայն ձեռքդ մեկնի՛ր ... Եվ եթե դու ախորժակի տեր մարդ ես,մի՛ ցանկացիր նրա խորտիկները, քանի որ դրանք էլ կանցնեն-կգնան սուտ կյանքի հետ (Առակ. 23:1-3):

24. Եթե մեռելները հարություն չեն առնում. «Ուտենք, խմենք, քանզի մեռնելու ենք»: Մի՛ խաբվե՛ք. վատ խոսքերը ապականում են լավ բարքերը (Ա Կորնթ. 15:32-33):

Հայրեր



1. Պահեցողությունը պետք է զգուշությամբ գործել, քանի որ սատանան կարող է կորստի մատնել թե պահեցողությունը, թե պահողին՝ մղելով նրան անպարկեշտ բամբասանքների գիրկը, ինքն իրեն ավելի գերադաս համարելով մյուսներից (Անտոն Անապատական):

2. Օգտագործիր ամենահասարակ և էժան կերակուրը (Անտոն Անապատական):

3. Քո հացդ կեր լռությամբ և չափավորապես, նաև տես, որ կերակուրդ լինի համեստ (Անտոն Անապատական):

4. Մի կեր այնքան, որ ամբողջովին հագենաս (Ատոն Անապատական):

5. Չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահքը մի լուծիր (Անտոն Անապատական):

6. Հավաքույթների և հյուրասիրությունների մի շտապիր գնալ (Անտոն Անապատական):

7. Եթե ջահել ես, ձեռքդ ուտելիքներին մի մեկնիր մյուսներից առաջ (Անտոն Անապատական):

8. Իսկույն մի մեկնիր ձեռքդ քեզ առաջարկված ուտելիքին (Անտոն Անապատական):

9. Մարմնի պահքը դա հոգու սնունդն է (Հովհան Ոսկեբերան):

10. Ճարպակալած որովայնը նուրբ մտքեր չի ծնի (Հովհան Ոսկեբերան):

11. Մի լսիր ինքնահաճո մարդկանց, որոնք իրենց դարձրել են որովայնի և մարմնական կրքերի ստրուկներ (Եփրեմ Ասորի):

12. Գինին մի խմիր մինչև գինովանալդ, չնայած, որ քեզ համոզում են ընկերներդ (Եփրեմ Ասորի):

13. Եթե ուզում ես հաղթահարել որկրամոլությունը, սիրի՛ր չափավորությունը, Աստծո վախն ունեցիր ու կհաղթես (Եփրեմ Ասորի):

14. Կերակրի և խմիչքի չափից ավելի օգտագործումը միայն տվյալ պահին է հաճելի, իսկ հաջորդ օրը տհաճությամբ ենք մտածում այդ մասին (Եփրեմ Ասորի):

15. Հոգու հարստությունը պահեցողությունն է (Հայր Պիմեն):

16. Երբ Դավիթը կռվում էր առյուծի դեմ, ապա նրա կոկորդից էր բռնում: Մենք էլ, եթե մեր կոկորդն ու որովայնը զսպենք, ապա Աստծով կհաղթենք անտեսանելի թշնամուն (Հայր Պիմեն):

17. Հոգին ոչնչով այնքան չի խոնարհվում, ինչքան, երբ մեկը զսպում է իրեն կերակրից (Հայր Պիմեն):

18. Եթե թագավորն ուզում է թշնամու քաղաքը գրավել, ապա նա ամեն բանից առաջ կտրում է այդ քաղաքը սնող ճանապարհները, ու քաղաքացիները սովից նեղվելով՝ հանձնվում են, որպեսզի չմեռնեն: Այսպես է լինում մարմնավոր ցանկությունների հետ, երբ մարդը կենցաղվարում է պահքով և ծոմով, ապա ցանկությունները ուժասպառ են լինում նրա հոգում (Հովհաննես Կոլով):

19. Քանի որ պահք չպահելով վռնդվեցինք դրախտից, այդ պատճառով էլ պահեցողություն անենք, որ նորից դրախտ մտնենք (Բարսեղ Կեսարացի):

20. Ատի՛ր ուտեստեղենի տենչանքը (Աբբա Եսայի):

21. Եթե մարդը չարհամարհի իր մարմինը, չի կարող աստվածային լույսը տեսնել (Աբբա Եսայի):

22. Ոչ մի տեսակի կերակուր՝ թե հասարակ, թե համեղ, ցանկասիրաբար մի կեր (Աբբա Եսայի):

23. Պահքը սանձ է մեղքի համար (Հայր Եպարքոս):

24. Պահեցողությունը մաքրում է հոգին, վեհացնում միտքը, չափի ու հակակշռի տակ է պահում կրքերը, ցրում է ցանկության ամպերը, մարում է սեռական կրակը և վառում է ճշմարտության լույսը (Օգոստինոս Երանելի):

25. Հացը կշռով կեր, իսկ ջուրը՝ չափով, ու շնության ոգին կփախչի քեզանից (Եվագր Պոնտացի):

26. Վախկոտ զինվորը դողում է փողի ձայնից, իսկ որկրամոլը՝ մոտակա պահքի ազդարարումից (Նեղոս Սինայեցի):

27. Համ ու հոտի հաճույքը մեռնում է արդեն իսկ, երբ կերակուրը անցնում է կոկորդով, բայց հասնելով գերեզման՝ (ստամոքս), այնտեղ կենդանացնում է կրքոտությունը (Նեղոս Սինայեցի):

28. Կերակրի չափավոր օգտագործումը, հայրերի կարծիքով, այնպես պետք է լինի, որ կերակրի ամենօրյա օգտագործումից հետո դեռ քաղց զգաս: Կերակրի այսպիսի օգտագործումը կպահի հոգին և մարմինը հավասարակշռված վիճակում, և ետ կպահի մարդուն ծայրահեղորեն պահքին ու ծոմապահությանը տրվելուց, որով տկարանում է մարմինը, ետ կպահի նաև գերհագեցումից, որը ճնշում է հոգին (Հովհաննես Կասիան):

29. Սրբերից մեկն ասել է. «Եթե տրվում ես հիշաչարությանը, ապա հիշաչար եղիր դևերի դեմ, թե թշնամանում ես, ապա թշնամություն տածիր մարմնիդ հանդեպ, քանի որ մարմինը՝ ստանալով իրենը, մեծ պատերազմ է մղում հոգու դեմ» (Աբբա Իսիքիա):

30. Պահքի զորությունը և նրա նշանակությունը մենք հասկանում ենք թեկուզ և այն բանից, որ այն համեմատաբար ավելի ատելի է թշնամու համար: Երբ գալիս են ինձ մոտ՝ խղճի խայթից մղված կամ խոստովանության նպատակով, ես մյուս պատվերների հետ միասին, միշտ խորհուրդ եմ տալիս պահել Սուրբ պահքերը: Ամեն ինչի հետ համաձայնվում են, միայն թե, երբ գործը հասնում է պահքին, սկսում են.

«Չեմ կարող, չեմ ուզում» և այլն: Թշնամին միշտ հրահրում է, նա չի ուզում, որպեսզի պահվեն Սուրբ պահքերը (Բարսիլիսկոս Մեծ):

31. Հարց. -Ինչի՞ց է լինում, որ ես ուզում եմ զսպել որովայնս և քչացնել կերակուրը, բայց չեմ կարողանում: Եթե անգամ քչացնում եմ, ապա նորից, որոշ ժամանակ անց, վերադառնում եմ իմ նախկին չափին, նույնը նաև խմիչքին է վերաբերվում:

Պատ. -Թող Աստված հիշի քո սերը, եղբայր իմ, որ հիշեցրեցիր ինձ իմ կրքերի մասին, քանզի ես ինքս էլ տառապում եմ դրանով: Ոչ ոք չի կարող ձերբազատվել սրանից, բայց միայն նա, ով այս չափին հասնելով ասաց. (Հեծությանս ձայնից հաց ուտելս մոռացա: Ոսկորս մարմնիս կպավ((Սաղմ. 101:5-6): Այսպիսի մարդը շատ շուտով կկարողանա նվազեցնել սնունդն ու խմիչքը, քանզի արցունքը նրա հաց կդառնա, և վերջապես հանգում է նույն բանին, որ սկսում է Սուրբ Հոգով սնվել: Հավատա ինձ, եղբայր, ես այդպիսի մի մարդ գիտեմ, որ հոգևոր սննդից այնպիսի հիացմունք է ապրում, որի քաղցրությունից ամբողջ շաբաթ մոռանում է մարմնավոր սննդի մասին: Եվ երբ հասնում է հացի ժամը, մի տեսակ զզվանքով, չի կամենում ուտել: Իսկ ուտելիս, դատապարտում է ինքն իրեն՝ ասելով. ինչո՞ւ ես մշտապես այս հոգևոր վիճակում չեմ կարողանում մնալ: Եվ կամենում է այս դիրքի մեջ ավելի առաջանալ: Իսկ մենք, եղբայրս, որտե՞ղ ենք գտնվում, գնանք մեռնենք: Ներիր ինձ, որ սեփական գործերիցս ոչինչ չգտա գլուխ գովելու, և ի ափսոսանք ինձ, ուրիշի գործով եմ հպարտանում (Բարսիլիսկոս Մեծ):

32. Կերակրով հագենալը՝ շնության մայրն է, իսկ ճնշված որովայնը՝ մաքրության (Հովհաննես Սանդուղք):

33. Թշնամին հզոր պատերազմ է մղում մեր սրտերում՝ հագեցած որովայնի միջոցով (Հովհաննես Սանդուղք):

34. Իմացիր, որ դևը հաճախ գրգռում է ստամոքսը և մարդուն չի թողնում կշտանալ, եթե նույնիսկ մարդ խժռի Եգիպտոսի ամբողջ ուտելիքը և խմի Նեղոսի ողջ ջուրը:

Որկրամոլը պահքի ժամանակ հաշվում է, թե ինչքան է մնացել մինչև Զատիկը, և շատ օրեր առաջ ուտեստեղեն է պատրաստում: Որկրամոլության ծառան խորհում է, թե ինչ ուտելիքներով պիտի մեծարի տոնը, իսկ Աստծո ծառան մտածում է, թե ինչ շնորհներով ինքը հարստանա (Հովհաննես Սանդուղք):

35. Երբ օտարական է գալիս, որկրամոլը ամբողջովին ծանրաբեռնվում է սիրո վրա, որ մղվում է որկրամոլության կողմից և մտածում, որ առիթը եղբորը հյուրասիրելու, իրեն համարել է թույլտվության պատճառ: Ուրիշների գալուստը նա համարում է պատճառ թույլտվության՝ գինի օգտագործելու, և իբր, ծածկում է դիմացինից իր պահեցողությունը, դառնում է որկորի ստրուկը (Հովհաննես Սանդուղք):

36. Որկրամոլների սրտում երազանքներ են կերակրի մասին, իսկ արտասվողների սրտում՝ մտածումներ են վերջին օրվա և տանջանքների

մասին (Հովհաննես Սանդուղք):

37. Տիկը, երբ այն փափկացնում են, շատ ավելի հեղուկ է իր մեջ կրում, իսկ եթե աչքաթող անեն այն՝ կչորանա և առաջվա տարողունակությունը չի ունենա: Որովայնը ծանրաբեռնողը լայնացնում է այն, իսկ ով պատերազմում է որկրամոլության դեմ, նրա որովայնը կամաց-կամաց սկսում է ձգվել, իսկ ձգված վիճակում այն էլ չի կարող շատ կերակուր ընդունել, և այդժամ, բնականորեն, իր վիճակից ելնելով, կդառնա պահեցող (Հովհաննես Սանդուղք):

38. Դևերի պետն ընկած արուսյակն է, իսկ կրքերի գլուխը՝ որկրամոլությունը (Հովհաննես Սանդուղք):

39. Երբ նստում ես սեղանի շուրջ, որը լի է ուտեստեղենով, քո մտավոր աչքերով պատկերացրու մահը և դատաստանը, քանի որ նման ձևով կարող ես գոնե մի քիչ զսպել շատակերության կիրքը: Երբ խմում ես, միշտ հիշիր քացախն ու լեղին քո Տիրոջ, և այս ձևով կարող ես հասնել ժուժկալության սահմանագծին, կամ ծայրահեղ դեպքում, կխոնարհեցնես խորհուրդները (Հովհաննես Սանդուղք):

40. Ոմանք ասում են, երբ մեր անձը ցանկանում է տարբեր ուտեստներ, ապա պետք է նրան ճնշել հացով ու ջրով, սակայն սա նույնն է, թե փոքր երեխային ասես, որ մի քայլով բարձրանա հոգևոր աստիճանի ամենավերին գագաթը: Եվ այսպես, ասենք որպես հերքում այս խորհրդին. եթե անձը ցանկանում է ամենատարբեր ուտեստեղեն, ապա նա փնտրում է իր բնությանը բնորոշ բաներ և սրա համար հակառակ մեր խորամանկ որկորի, պետք է ցուցաբերել խելամիտ զգուշավորություն: Եվ երբ չկա զորեղ պայքար մարմնի կողմից և ընկնելու առիթ չի նախատեսվում, այդժամ հեռացնենք առաջնահերթ, պարարտացնող կերակուրը, հետո՝ այրող, բորբոքող կերակուրը և հետո նոր՝ հաճույք պատճառողը: Թե հնարավոր է, տուր որկորիդ չափավոր և հեշտամարս կերակուր, որպեսզի դրանցով հագենաս և ազատվես նրա անկուշտ ագահությունից, և արագ մարսողության միջոցով ազատվես բորբոքումից, ինչպես պատուհասից: Եթե ուշադիր լինենք, կտեսնենք, որ կերակուրներից շատերը, որոնք փքում են փորը, բորբոքում են վավաշոտություն (Հովհաննես Սանդուղք):

41. Որովայնին իշխողը չորացնում է հեշտանքը, և նրա միտքը չի գերեվարում տռփանքը (Աբբա Փաղաքիա):

42. Սիրում ես համեղ կերակուր: Իսկ ո՞վ չի սիրում, միայն նա, ով համտեսել է Երկնային Խաղաղությունը և սանձում է որովայնը՝ այս պարոնին, որ բազում չարիքների աղբյուր է (Հոգեշահ գրքերից):

43. Ինչպե՞ս ճարպկորեն է կարողանում թշնամին վիժեցնել մեր բարի գործերը: Պահքից հետո հաղթում է անժուժկալությամբ և անչափավորությամբ, երկյուղալի և գորովալից աղոթքի որպեներից հետո՝ ծիծաղով և դատարկաբանությամբ: Եվ այսպես, ամեն ինչում, ամենուր և միշտ կանի իրենը՝ մեր անվճռականության, անհոգության և անզգուշության պատճառով (Հոգեշահ գրքերից):

44. Ժուժկալությունը սովի է մատնում դևերին, որովհետև նրանց կերակուրը համեղ ուտեստներն են: Սակայն ոմանք հյուծվելով չափազանց պահեցողությունից և ժուժկալությունից, հեռացել են Աստծուց (Հոգեշահ գրքերից):

45. Ճաշի ժամանակ մտքում աղոթելը կկանխի շատակերությունը (Հոգեշահ գրքերից):

46. Մի նստիր ճաշի՝ զայրացած վիճակում, թշնամին ինչ-որ մեկի հանդեպ զայրույթ է գրգռում քո մեջ, որպեսզի ի վնաս քեզ դարձնի կերակուրդ և ըմպելիքդ («Հոգևոր Պատերազմ» գրքից):

47. Պահեցողության պատճառով մեծամտանալը անմտություն է, քանի որ կարո՞ղ է արդյոք վարպետը մեծամտանալ նրանով, որ ինքը շատ գործիքներ ունի, եթե նա դրանցով ոչ մի օգտակար բան չի անում: Եվ այդպես էլ պահքը և մնացած բոլոր մարմնավոր ջանքերը միջոց են՝ առաքինություն ձեռք բերելու, և ոչ թե իրենք են հանդիսանում առաքինություն (Հայր Զոսիմա):

48. Մի՛ նեղիր ինքդ քեզ պահքերով ու ծոմապահությամբ, ընդհակառակը, պարարտացրու մարմինդ կերակուրներով, արածդ որդերի համար փառավոր ճաշ պատրաստելուց այլ բան չի, զվարճացրու ինքդ քեզ ոգելից ըմպելիքներով, բայց մի օր մի կաթիլ ջրի կարոտ պիտի քաշես և այն էլ՝ հավիտյան գտնելու կարողություն չպիտի ունենաս: Ինչպես առածն է ասում. «Որկրամոլները իրենց գերեզմաններն իրենց ատամներով են փորում» (Տեր Գաբրիել քահանա):

49. Երբ պահեցողությունը լինում է նիհարելու և առողջությունը վերականգնելու նպատակով, որքան էլ որ օգտակար լինի, կրոնական արժեք չի ներկայացնում (Շնորհք Պատրիարք):

50. Ձրջումը, աղոթքը, ապաշխարությունն անբաժան պետք է լինեն պահեցողությունից, քանի որ սրանք են հիմնական պայմանները, որտեղ գործում է Աստծո բուժիչ ու քավիչ զորությունը (Շնորհք Պատրիարք):

51. Պահքն ու հաճույքն իրար հակադիր երևույթներ են (Շնորհք Պատրիարք):

52. Ծոմապահությամբ և պահեցողությամբ է լինում մարմնի առողջությունը: Ով առողջ և զորավոր է, նա կարող է չափավորապես հեռու մնալ համեղ ու սննդարար կերակուրներից և ըմպելիքներից՝ դրանով ճնշել մարմինը, սպանել ախտավոր կրքերը, զգայական բաղձանքների անկարգ ցանկությունները, որպեսզի կարողանա իր մարմնի անդամները ծառայեցնել Աստծուն՝ սպասավորելով հիվանդներին, թաղելով անտեր մեռելներին, ուխտի գնալ սրբազան վայրերը, համբերել վշտերին, ճգնություններին, մինչև իսկ մարմինը տալ գանակոծության կամ մահվան՝ Աստծո սիրո համար: Սրանցով նվաճված մարմինը կհնազանդվի հոգու կամքին: Ինչպես որ մարմինը կերակուրներով զորանալուց՝ տկարանում է հոգին, այնպես էլ պահեցողությամբ մարմինը տկարանալուց՝ զորանում է հոգին: Ըստ դրա. «Երբ տկարանում եմ՝ այն ժամ զորանում եմ» (Բ Կոր. 12:10), ուրեմն պետք է ճնշել մարմինը ծոմով, պահեցողությամբ և չափավորությամբ, որ հլու հնազանդ ծառայի

Աստծուն մինչև վերջ (Պողոս պատրիարք):

53. Բոլորն էլ պարտավոր են պահել պահեցողության կանոնները, որ կարգել է սուրբ եկեղեցին: Իսկ եթե մեկը պահքը ավելորդ և անօգուտ համարի, կգայթակղվի և կգայթակղեցնի, մեծապես մեղանչելով, որովհետև դատեց սուրբ հայրերին, որոնք Սուրբ Հոգով կարգեցին եկեղեցու կանոնները (Պողոս պատրիարք):

54. Հովիվը, եթե իր շանը շարունակ ոչխարի մսով կերակրի, նրան գայլ կդարձնի, իսկ եթե մեկն իր մարմինը հարատև պարարտ կերակրով սնի, ապա կդարձնի իրեն գազան և արդեն ընբոստացած, այլևս չի հնազանդվի հոգու կամքին, այլ բռնադատելով՝ կծառայեցնի իր հաճույքներին (Պողոս Պատրիարք):

55. Վայ՜ նրան, ով ծառայում է և անվարձ մնում, բայց վայի վրա էլ ավելի վայ, ով ծառայում է որկրամոլությանը և մարմնին, ու տուժում է դրանից: Եվ վայ նրան, ով ոչ սանձ է դնում նժույգի բերանին, ոչ վախենում է գահավեժ լինելուց, և ոչ ժուժկալությամբ նվաճում է մարմինը, այլ անտարբեր է վերահաս գլորման հանդեպ (Պողոս պատրիարք):

56. Որովայնամոլության և արբեցության կուռքերը փշրենք ժուժկալությամբ, քաղցով և ծարավով, որպեսզի չլինի թե հարուստի հետ շիկացած հնոցի մեջ այրվենք և մի կաթիլ ջրի անարժան գտնվենք (Սարգիս Շնորհալի):

57. Առաջին պատվիրանը պահքն է, որ Աստված տվեց Ադամին՝ ասելով. «Բոլոր պտուղներից կեր»: Սա ուտիքի համար էր: «Բայց միայն մեկ պտղից մի կեր» (Ծննդ. 2:16-17), սա էլ պահքի համար էր: Ադամը, քանի որ պահեցողություն չարեց, զրկվեց դրախտից և չարչարանքների այս աշխարհը ժառանգեց: Ուստի, եթե մենք սրբությամբ պահք պահենք, կվերադառնանք դրախտ՝ մեր հայրենի տունը (Հովհաննես Երզնկացի):

58. Եթե մեկը չորեքշաբթին և ուրբաթը, շաբաթապահքը և կամ այլ պահք լուծարի ... թող ապաշխարի: Որովհետև չորեքշաբթին Քրիստոսի մատնության օրն է, իսկ ուրբաթը՝ խաչելության. իսկ բոլոր պահքի օրերը սահմանված են սուգի ու տրտմության և մեր մեղքերի համար ապաշխարելու նպատակով (Հովհաննես Երզնկացի):

59. Մի սիրիր ուտելիքը և ըմպելիքների հագուրդը, եթե ոչ՝ մարմնդ կդարձնես պոռնկության քաղաք ու սատանայի ամրոց (Եզնիկ Կողբացի):

60. Ով այս կյանքում մարմինն է գիրացնում, հավիտենական հանգիստ չի մտնի (Եզնիկ Կողբացի):

61. Տրտմեցնող բնավորությունդ սանձի՛ր չորակերությամբ և սրտիդ խստությունը փափկացրու տքնությամբ, մարմնիդ ցանկությունը վերացրո՛ւ նեղությամբ, ապա կկարողանաս վերցնել Քրիստոսի Խաչը: Սիրտդ սովորեցրու սիրել ցեղակցիդ, մարմնդ էլ այնպես սիրիր, ինչպես կսիրես նենգավոր մարդուն (Եզնիկ Կողբացի):

62. Ուստի աղաչում եմ՝ եթե անգամ շատ ուտելիք և ըմպելիք ունենաք ձեր ձեռքում և տանը, ձեր հոգիները խնայելով՝ ագահությամբ ու որկրամոլությամբ մի՛ վարվեք դրանց հետ, այլ ...պարկեշտությամբ և օրի-

նավոր կերպով: Եվ ինչ ձեզանից նվազեցնում եք ըստ Աստծո պատվիրանի՝ ի սեր կարոտյալ և չքավոր եղբայրների, ծերերի և տկարների, նրա՛նց տվեք, որով ձեր հոգիների համար կրկնակի բարիք կամբարեք (Ներսես Շնորհալի):

63. Առաջին սուրբերը, երբ կամենում էին մերձենալ Աստծուն, նախ մաքրվում էին պահքով, ապա մերձենում Մաքուրին և աստվածատեսներ լինում: Իսկ ովքեր հեռացան պահքից, հեռացան Աստծու շնորհներից և բազում չարիքներով չարչարվեցին: Ահա Ադամը հեռացավ պահքի պնդությունից և դուրս ելավ դրախտից դեպի տատասկոտ երկիրը: Նոյի ժամանակների ազգի որդիները հեռացան պահքի պնդությունից և համաջինջ ջրհեղեղով սատակվեցին և հեղձվեցին: Եբրայեցի ժողովուրդը հեռացավ պահքի պնդությունից, և ընտիրները սատակվեցին (Սաղմ. Հէ 31): Սոդոմի բնակիչները հեռացան պահքից, և կայծակների հրացայտ անձրև տեղաց նրանց վրա: Եվ տուժեցին բոլոր նրանք ովքեր արհամարհվեցին Աստծուց և Նրա ողորմությունից հեռացան (Հովհան Մանդակունի):

64. Պահք է նաև, երբ մարդ բնական քնի կարիքը միայն սպառի և ցանկության քուն չունենա, այլ միայն առաջինով գոհանա և ապա, վեր կենալով, գործի կամ աղոթի (Հովհան Մանդակունի):

65. Ովքեր որովայնին են ծառայում, հնարավոր չէ, որ լինեն Աստծո հավատարիմ ծառա, քանզի ովքեր պահքով սրբանում և սրբվում են, ոչ միայն անօրենությունների պղծություններն են սրբում, այլև սուրբ Աստծուն իրենց մեջ են բնակեցնում (Հովհան Մանդակունի):

66. Այս է սուրբ և աստվածահաճ պահքը, և սրանով են ընդունելի լինում բոլոր վշտաբեր ճգնությունները, որ բժշկում են մեղքերով վիրավորվածներին, սատանայից գերվածներին, կանգնեցնում անօրենությամբ կործանվածներին, հարություն տալիս ամբարշտությամբ հիվանդացածներին, սրբում պղծությամբ աղտեղվածներին, մաքրում ու արդարացնում պահողներին և մեծապայծառ լույսով կանգնեցնում Աստծո ահավոր և լուսավոր Բեմի առաջ. և պահեցողները Նրա հետ ժառանգում են անանց բարության վայելչություններն ի Քրիստոս Հիսուս՝ ի Տեր մեր: Նրան փառք հավիտյանս հավիտենից. ամեն (Հովհան Մանդակունի):

67. Վարդապետներն ասում են, որ ամեն կերակուր բաժանվում է երկու մասի: Մեկը, որ երկրի տարերքից՝ այսինքն, տունկերից և բույսերից է առաջ գալիս, պահոց կերակուր է: Մյուսը կենդանական է և կամ առաջանում է կենդանուց, ինչպիսիք են միսը, կաթը և նման այլ բաները, հանդիսանում են, որպես ուտիքի կերակուր: Եվ պետք է իմանալ և այն, որ պահոց կերակուրը հասարակ է և ամեն օր էլ կարելի է օգտագործել թե՛ պահքի, թե ուտիքի ժամանակ: Իսկ ուտիքի կերակուրը միայն ուտիքի ժամանակ է թույլատրելի և ոչ պահքի, քանի որ ուտիքի կերակուրն ունի զանազանություն, այսինքն՝ կենդանու մարմինը և այն, որ առաջանում է կենդանուց: Պահքն էլ ունի զանազանություն: Առաջինը կոչվում է պահք, երկրորդը՝ սրբապահք և երրորդը ծոմապահք: Պահքն այն է, որի

ժամանակ ուտիքի կերակուր չի օգտագործվում, ինչպես որ ասացինք, այլ պետք է ուտել միայն այն, ինչը պտուղներից և բույսերից է: Իսկ սրբապահքն այն է, որի ժամանակ պահոց կերակուրից էլ որոշ բան զատվում: Չնայած տունկերից է առաջ գալիս, սակայն պարարտացնում է մարմինը, ինչպիսիք են ձեթը, գինին և նմանօրինակ այլ բաներ: Ըստ Սուրբ Գրքի, ձեթը և յուղը միանման կերպով պարարտացնում են մարմինը, իսկ գինին առաջացնում է հարբեցողություն և բորբոքում է մեղքի ցանկությունը: Սրանցից պետք է հրաժարվել սրբապահքերի ժամանակ: Ծոմապահքի ժամանակ օգտագործվում է միայն հաց և ջուր, իսկ մնացած ամեն բաներից պետք է հրաժարվել: Եվ այս միջոցով անձը մաշեցնում է մարմինը սովով և ծարավով, Աստծու սիրուց ելնելով, և բերանին արգելք է դրվում փափուկ, անուշահամ կերակուրների համար, ու մարմինն սկսում է տկարանալ մեղքի գործեր գործելու համար: Սա է պահքի արժանիքը (Գրիգոր Տաթևացի): (Ոչ վաղ անցյալում մեծ պահոց շրջանի պահքը պահվում էր միայն կիրակի, շաբաթ օրերին և Ավետյաց տոնին, իսկ մնացած օրերը սրբապահք էր: Մեծ պահոց առաջին շաբաթը և վերջին՝ Ավագ շաբաթը ծոմապահք էր, այսինքն՝ միայն հաց և ջուր, իսկ Սուրբ Հաղորդության մոտենալու ժամանակ, այսպես կոչված՝ անսվաղ, այսինքն՝ բացարձակապես ոչինչ չօգտագործել, հրաժարվել հացից և ջրից: Այսօր, քանի դեռ կոնկրետացված կարգ չկա, ամեն մարդ պետք է կողմնորոշվի ըստ իր կարողության, կամ ըստ հոգևոր հոր խորհրդի: Քանի որ պահքի հանդեպ անհոգ գտնվելը մեղք է և վնասակար հոգուն, իսկ ուժերից վեր պահեցողությունը ոչ միայն անօգուտ է, այլ նույնպես խիստ վնասակար, քանի որ հայրերն ասում են. «Ինչը որ ուժերից վեր է, սատանայից է»:

68. Բարեկենդանը պահքի սկիզբն է: Ինչպես մենք այսօր ստանում ենք պահքի պատվիրանը մարգարեներից, առաքյալներից ու ավետարանիչներից, այնպես էլ առաջին մարդը դրախտում Տիրոջից պատվիրան ստացավ. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի կեր» (Ծննդ. Բ 16:17): Եվ ըստ այդ օրենքի՝ ամեն ծառից ուտելը խորհրդանշում է բարեկենդանը, իսկ մեկից չուտելը, որը դրախտի մեջտեղում է, խորհրդանշում է պահքը, որը բարեկենդանի և Զատկի մեջտեղում է: Արդ, բարեկենդանի ու Զատկի օրերը պահքի հետ միասին, կազմում են հիսուն օրը, որը հոբելյանական թիվ է և խորհրդանշում է մեր ազատությունը մեղքերի ծառայությունից ու դարձը՝ դեպի մեր հայրենին, ըստ հոբելյանի օրենքի (Ղևտ. ԻԵ 10): Բարեկենդանի օրը վանքերում, անապատներում, ամենուր չափավոր վայելքներ է թույլատրվում, որը վերցված է Եղիային ուղղված հրեշտակի խոսքից. «Ելի՛ր, կե՛ր, որովհետև երկար ճանապարհ ես գնալու» (Գ Թագ. ԺԹ 7), և այդ երկար ճանապարհը քառասնօրյա պահքի շրջանն է: Ինչպես օրինակ՝ հասնելով լեռան ստորոտին՝ գրաստի վրայից վերցնում ենք բեռները՝ թույլ տալով մի որոշ ժամանակ արածել, նույնպես և վարվում ենք բարեկենդանի ժամանակ, քանի որ պահքի լեռն ենք բարձրանալու:

Բարեկենդանը խորհրդանշում է հոգու ամբողջովին փարթամացած առաքինությունները, իսկ պահքը՝ չարությունը, որովհետև չարությունից հոգին նվազում է ու կարոտում ամեն բարիքների, ինչպես մարմինն է նվազում պահքից (Վարդան Արևելցի): (Ըստ եկեղեցական օրացույցի, բարեկենդանի օրը պահք է, և եկեղեցում կատարվում են պահոց ժամակարգություններ, սակայն կերակրի տեսանկյունից այդ օրը ուտիք է:)

69. Նավակատիքը թարգմանվում է ուրախության և նորոգման տոն: Ամբողջ տարում երեք տեսակի օրեր կան՝ պահք, ուտիք և սրա միջինը, որը նավակատիք է կոչվում, քանի որ մարդը երեքից է գոյացել, հոգուց, մարմնից և երկուսի խառնումից՝ անձից: Պահքը հոգու համար է, ուտիքը՝ մարմնի, իսկ նավակատիքը՝ անձի: Նմանապես և կերակուրը երեք տեսակի է լինում, նախ՝ միսը, որը կատարյալ կենդանուց է առաջ եկել: Կենդանին կատարյալ է կոչվում, երբ շնչավոր է, ունի հինգ զգայարաններ և շարժվում է: Եվ այս կերակուրը ուտիքին ուտելու համար է: Իսկ խոտը, ընդեղենը և պտուղները պահքի կերակուրներ են, քանի որ անզգա են և անշարժ, այսինքն՝ տեղից տեղ չեն տեղափոխվում և չունեն շունչ: Իսկ նավակատիքի կերակուրը այս երկուսի, այսինքն՝ կենդանիների և բույսերի միջինն է, ինչպես ձուկը, ձուն և կաթնամթերքը: Քանի որ ձուն և կաթը կենդանուց են, սակայն կենդանիներ չեն, իսկ ձուկը կենդանի է կատարյալ զգայարաններով ու շարժմամբ, սակայն օդ չի շնչում, որի համար էլ պակաս է (Ստեփանոս Օրբելյան):

Հայրերի վարքից

1. Հայր Պախոմի մասին ասում էին, որ մի անգամ երբ մի մահացածի դի էին տանում, ճանապարհին նրանց հանդիպելով, հայր Պախոմը տեսավ երկու հրեշտակների, որոնք ուղեկցում էին մահացածին, գնալով թափորի ետևից: Այս մասին խորհելով ծերը խնդրեց Աստծուն, որպեսզի Նա բացի իրեն այս խորհուրդը:

Այդժամ հրեշտակները մոտեցան նրան, և ասաց նրանց հայր Պախոմը. «Ինչո՞ւ եք դուք հրեշտակներ լինելով, ուղեկցում մահացածին»: Պատասխանեցին նրան հրեշտակները. «Մեզանից մեկը չորեքշաբթի հրեշտակն է, իսկ մյուսը՝ ուրբաթի: Իսկ նա մինչ իր մահը երբեք չդադարեց չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահք պահելուց, դրա համար էլ մենք ուղեկցում ենք նրա աճյունը: Մահվան մահճում իսկ նա չզլացավ պահքերը պահել, մենք էլ հիմա փառավորում ենք նրան իր ջանքերի համար, որ արեց հանուն Աստծու» («Հարանց Վարք»):

2. Մի տկար ու որկրամոլ մենակյաց ծերից անընդհատ ձմեռվա պաշարած հացն էր գողանում: Ծերը տեսնելով այդ՝ ոչինչ չէր ասում, և երբ պաշարը վերջացավ, ծերը ուժաթափ լինելով պառկեց՝ պատրաստվելով մահվան: Այնժամ եղբայրները շրջապատեցին նրան, որ հրաժեշտ տան: Նա կանչեց այդ մենակյացին և նրա ձեռքերը համբուրելով ասաց. «Սըրանց շնորհիվ ես ժամանակից շուտ եմ գնում իմ Տիրոջ մոտ» («Հարանց Վարք»):

3. Հայր Հովսեփը հարցրեց հայր Պիմենին. «Ինչպե՞ս պետք է պահք պահել»: «Ես նախապատվությունը տալիս եմ նրանց, ովքեր ամեն օր են կերակուր օգտագործում, բայց մնում են քիչ հագեցած: Ես կերակուր օգտագործել եմ և երեք օրը մեկ, և չորս օրը մեկ, նաև՝ շաբաթը մեկ, բայց զորավոր հայրերը բոլորը փորձեցին և ընդունեցին ամենաօգտակարը՝ ամենօրյա կերակուրի օգտագործումը, բայց չհագենալով, մեզ տալով արքայական ուղիղ՝ ամենահարմարը» («Հարանց Վարք»):

4. Մի անգամ հայր Եվագրը գալով Մակար Մեծի խուցը ջուր խնդրեց՝ ծարավը հագեցնելու: Եվ պատասխանեց նրան ծերը՝ ասելով. «Բավարարվիր ստվերով» («Հարանց Վարք»):

5. Մի ճգնավոր եղբայր, որ ուտելու ժամանակ հաց չէր օգտագործում, եկավ մի մեծանուն ծերի մոտ: Այնտեղ կային նաև այլ հյուրեր: Ծերը նրանց համար պատրաստել էր մի փոքր եփած կերակուր: Երբ նրանք նստեցին ճաշելու, ճգնավոր եղբայրն իր առջև դրեց միայն թրջած ոսպ, և նրանք ճաշեցին: Երբ վեր կացան, ծերն ասաց նրան. «Եղբայր, երբ դու գնում ես որևէ մեկի մոտ, ի հայտ մի բեր քո կենցաղավարությունը ներկաների առջև, իսկ եթե չես ուզում այն խախտել, ավելի լավ է մնաս խցումդ և ոչ մի տեղ չգնաս»: Ընդունելով ծերի խոսքը, նա սկսեց ավելի զիջող լինել եղբայրների հետ հանդիպման ժամանակ:

Այսպիսի մի բան էլ պատահեց անապատի ճգնարաններում: Երբ մի անգամ տոն օրը եղբայրները նստած էին ճաշի, նրանց մեջ կար մեկը, որ չէր ուտում եփած կերակուր: Վերակացուին ասացին, որ այս եղբայրը կերակուր չի ճաշակում, այլ միայն աղ ու բանջարեղեն: Իսկ սա էլ իր հերթին, բոլորի ներկայությամբ ձայնեց մատուցողին, ասելով, որ այս եղբայրը եփած բան չի ուտում, նրան աղ ու բանջար բեր: Այն ժամ ծերերից մեկը, վեր կենալով, ասաց այդ եղբորը. «Ավելի լավ էր քեզ համար նստեիր քո խցում և միս ուտեիր, քան թե, բոլոր եղբայրների մոտ ի հայտ գար քո կենցաղավարությունը»:

Անապատի այս ճգնավորների մասին ասում էին, որ երբ մեկը տեսնում էր իրենց գործերը, նրանք դա այլևս որպես առաքինության գործ չէին համարում, այլ որպես մեղք («Հարանց վարք»):

Աղոթք

Անոխակալ Տե՛ր, մի՛ անտեսիր ինձ իմ բազում չարիքների պատճառով, այլ դարձի՛ր դեպի ինձ և իմ բոլոր ցանկությունները դարձրո՛ւ դեպի Քեզ և ինձ ամբողջ սրտով միայն Քե՛զ սիրել տուր: Ողջ պահիր իմ մարմինը նվազ և անպաճույճ կերակուրներով:

Ճանաչեցրո՛ւ ինձ, Տե՛ր, Քո ճանապարհը, և ուսուցանի՛ր ինձ Քո արդարությունը: Հեռացրո՛ւ Տե՛ր, իմ մարմինը չար խորհուրդներից և հաստատի՛ր բարի երկյուղի մեջ, որպեսզի մշտապես սուրբ և անարատ ապրեմ Քո առաջ:

Տե՛ս, Տե՛ր, իմ որովայնի ընդվզումը, որ զորացել է ինձ վրա, հանապազ ցանկանում է կերակուր, ըմպելիք և խորտիկների համեղություն: Սակայն Դու՛, Տե՛ր Ամենակարող, կտրի՛ր մարմնիս տենչանքների ցանկությունը:

Ազատի՛ր ինձ, Տե՛ր, մեղքերի ծառայությունից և դասի՛ր Քո ծառաների շարքում, ովքեր սիրեցին Քեզ և պահեցին Քո պատվիրանները: Տու՛ր իմ սրտին նրանց երկյուղը և ուսուցանիր ինձ գնալ նրանց ընթացքի շավիղներով: Եվ քանզի ճաշակման ցանկությունն ամբողջապես զբաղեցնում է իմ միտքը, արդ, հալածի՛ր ինձանից որկրամոլությունը, որից միշտ խաբվեցի, և կերակրիր ինձ Քո սուրբ երկյուղով, քանի որ Դու գալու ես և հատուցես յուրաքանչյուրին ըստ գործերի:

Տո՛ւր ինձ իմաստնություն և հաստատի՛ր, Տե՛ր, իմ սրտում Քո ահն ու երկյուղը: Լուսավորի՛ր իմ խորհուրդները, կարո՛ղ դարձրու իմ մարմինը՝ հարաժամ ժուժկալությամբ մնալու Քո պատվիրանների մեջ:

Ձնջի՛ր, Տե՛ր, իմ անօրենությունները, ամրացրո՛ւ միտքս բարի հույսով և Քո երկյուղով՝ սիրով լցված սպասելու և ակնկալելու Քո մեծ Գալուստը:

Հասցրո՛ւ ինձ, Տե՛ր, Քո արդարների օթևանը և պարգևի՛ր ինձ սուրբ հայրերի ճգնության բնակավայրը, անտեսի՛ր իմ հանցանքները և պայծառացրո՛ւ՝ դասելով Քո սուրբերի և Քո անվան սիրելիների հետ:

Մի՛ հապաղիր տալ ինձ հոգու փրկություն և սիրո ջերմություն, կերակրի պարկեշտություն և մարմնի ժուժկալություն, արտասուքների բխում, անդադար աղոթք, հնազանդություն և լույսի համբերություն:

Ցո՛ւյց տուր, ինձ, Տե՛ր, Քո շնորհները՝ Քո գութն ու ողորմությունը Քո ծառային և տաճարացրո՛ւ ինձ՝ Ամենասուրբ Հոգուդ բնակարան լինելու, այլևս մի՛ թող, որ ծառայեմ մեղքի և ապականության:

Ողորմի՛ր ինձ, Տե՛ր Կենաց և Քավիչ մեղքերի, Կատարի՛չ խնդրվածքների և Արձակի՛չ կապվածների, Բաշխո՛ղ պարգևների և Տվիչ բոլոր շնորհների, և Քեզ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):

Մովսեսի մասին

«Ես բոլորից շատ աշխատեցի, բայց՝ ոչ ես, այլ Աստծո շնորհն իմ մեջ»:

Եգիպտոսի գերության ժամանակ ծնվեց Մովսեսը և, մանուկների կոտորածից փրկվելով, Տիրոջ կամքով որդեգրվեց փարավոնի աղջկան: Եվ մեծանալով այդ միջավայրում՝ կրթվեց Եգիպտոսի ամբողջ իմաստնությամբ, և զորավոր էր իր խոսքով և գործերով (Գործք 1, 21-22):

Երբ նա դարձավ 40 տարեկան, որոշեց մտնել իր իսրայելացի եղբայրների մեջ և տեսավ նրանց չափազանց ծանր վիճակը: Եվ երբ տեսավ, որ մի եգիպտացի անիրավությամբ է վարվում իսրայելացու հետ, վրեժխնդիր եղավ և սպանեց եգիպտացուն:

Եվ Մովսեսը հայտնություն ուներ, թե ինքը պիտի լինի Իսրայելի փրկիչը (Գործք 7, 25), դրա համար էլ համարձակորեն սպանեց եգիպտացուն, քանի որ մտածում էր, թե. «էլ ո՞վ պիտի լինի փրկիչ, եթե ոչ՝ ես», փարավոնի դստեր տղան, հարուստ, իշխանության տեր, 40 տարեկան ամրակազմ տղամարդ, վարժ պատերազմի արվեստին, ունի եգիպտոսի ամբողջ գիտությունը և խոսքով էլ՝ հզոր: Եվ այս բոլորը պատճառ էր Մովսեսի ինքնավստահ քայլին: Եվ վստահ լինելով խոսքով զորավոր լինելուն, սկսեց քարոզել և վարդապետել իսրայելցիների մեջ, նրանց կոչ անելով, որ որպես Աստծո ժողովուրդ, բարեպաշտ կենցաղ ունենան և իրար մեջ խռովություններ չառաջացնեն: Բայց երբ մի իսրայելացի սպառնաց Մովսեսին, թե նրան կմատնի սպանության համար, հանկարծ ինքնավստահ Մովսեսն իսկույն վերափոխվեց՝ զարհուրելով, որ կարող են իրեն սպանել եգիպտացուն սպանելու համար: Եվ մոռանալով իր բոլոր առանձնաշնորհները, ամեն ինչ թողեց և փախավ Սինայի անապատ և 40 տարի անցկացրեց անապատում: Ամուսնանալով և երկու երեխա ունենալով՝ այս իշխանազունը որպես մի հասարակ հովիվ ապրեց:

Եվ երբ նա 80 տարեկան մի ծեր էր և, միգուցե կասկածում էր, թե հայտնությունն արդյոք իսկապես իրե՞ն էր վերաբերվում, թե՞ սխալմունք էր, քանի որ այս 40 տարում սնանկացավ, կորցրեց իր իշխանությունը, 40 տարեկան ամրակազմ տղամարդուց վերածվեց 80 տարեկան ծերունու: Արդեն մի կողմ թողած պատերազմական զենքերը, դրա փոխարեն հովվի գավազանը վերցնելով՝ գիտությունից զրկվեց, քանի որ Եգիպտոսում գիտությունը և իմաստությունը 40 տարով առաջ էին գնացել, իսկ ինքն անապատում մնացել էր հին իմաստության չափանիշներով, և խոսքով զորավորը դարձել էր ծանրախոս նաև ամուսնացավ այլազգի կռապաշտ կնոջ հետ, որ դեմ էր Աբրահամի պատվերին: Ինչ խոսք, որ աչքի տեսածով և մարդկային մտածողությամբ, նման մարդն արդեն ոչնչի պիտանի չէր կարող լինել: Բայց Աստծո խոսքն ասում է. «Աչքի տեսածով մի՛ դատեք», և՝ «Իմ ճանապարհները ձեր ճանապարհները չեն»: Այս 40 տարին Մովսեսին սնանկացրեց ամեն ինչից՝ ինքնավստահությունից, հպարտությունից, մեծամտությունից, ինքնակամությունից, փառամոլությունից, մարդահաճությունից և այլ ուրիշ՝ մեղավոր մարդուն հատուկ կրքերից:

Բայց Աստված այս սնանկացած Մովսեսի վրա էլի բան տեսավ, որ խանգարում էր Մովսեսին օգտագործելու Իր կամքի համեմատ, և այրվող մորենու մոտ ասաց նրան. «Հանի՛ր ոտքերիցդ այդ կոշիկները, քանի որ այս երկիրը, որի վրա կանգնել ես, սուրբ է»: Այսինքն՝ քո կամքն էլ թոթափի՛ր քեզ վրայից և այս ոտքերով կգնաս այնտեղ միայն, ուր որ Իմ կամքը քեզ կառաջնորդի: Եվ ահա արդեն սրբված մի անոթ էր Տիրոջ առջև՝ զրկված իր մարդկային զորությունից և պատրաստ՝ Աստծո զորությունն իր մեջ կրելու:

Եվ երբ Աստված իր փրկարար ծրագիրը հայտնեց Մովսեսին՝ ասելով, որ ինքը պիտի լինի Իսրայելին Եգիպտոսից հանողը, Մովսեսը զարմացավ, չհասկացավ, ապշեց և ասաց. «Ես ո՞վ եմ, որ գնամ եգիպտացիների արքա փարավոնի մոտ և իսրայելացիներին հանեմ եգիպտացիների երկրից» (Ելք 3, 11):

Եվ Տերը նրան ասաց, որ Իր զորությունը կտա իր՝ Մովսեսի փուչ ու անպիտան անձի զորության փոխարեն, որ նա ուներ Եգիպտոսում: 80 տարեկան ծերուկին կտա Իր զորությունը, քանի որ «Աստծո զորությունը տկարության մեջ է գործում»: Զենքերի փոխարեն գավազանին կտա հրաշագործ զորություն, քանի որ «մեր պատերազմը մարմնի ու արյան դեմ չէ, այլ չար զորությունների» «անմարմին փարավոնի» դեմ: Սնափառության փոխարեն Աստված կփառավորի Եգիպտոսում և Իսրայելի մեջ: Եգիպտոսի աշխարհական իմաստության փոխարեն կընդունի երկնայինը: Եվ իր անձի փոխարեն կրակե և ամպե սյունը կառաջնորդի: Եվ իր խայտառակ փախուստի փոխարեն ամբողջ Իսրայելը հաղթական դուրս կգա Եգիպտոսից դեպի անապատ և դեպի Քանան:

Բայց Մովսեսն այն աստիճան էր իր անպիտանությունը տեսել այս 40 տարվա մաքրողական շրջանում, որ չէր հավատում, թե ինքը կարող է պիտանի լինել նման ծրագիրն իրականացնելու համար: Եվ ասաց. «Աղաչում եմ Քեզ, Տե՛ր, մի այլ կարող մարդու ընտրիր, նրա՛ն ուղարկիր» (Ելք 4, 13), մինչև որ Տերը բարկանալով՝ նրան օգնական կարգեց Ահարոնին:

Եվ շատերս էլ այսօր, ցավոք, քայլում ենք այն հին Մովսեսի պես՝ գործելով մեր անձի ջանքերով, և մեր բազում վրիպումներն ու սայթաքումները մեզանում Մովսեսի պես վախ չեն առաջացնում, որպեսզի ամեն բան

թողնելով՝ փախչենք անապատ՝ փոխարեն մարդկանց քարոզելու, վարդապետելու և առաջնորդելու աշխարհից՝ դեպի երկնային Քանան: Լավ է, թե մենք մեր անձերը քննենք. արդյոք մենք ինքներս քայլո՞ւմ ենք այդ ճանապարհով, թե՞ ոչ: Արդյոք, Տիրոջ շնո՞րհն է մեր մեջ գործում, թե՞ հին մարդը՝ իր կրքերով հանդերձ:

Վա՜յ նրան, ով իր տկարությունը տեսնելով՝ չի փախչի ամեն բանից և չի ջանա մաքրվել իր հին մարդուց, որպեսզի արժանի լինի 80 տարեկան Մովսեսի պես մաքուր անոթ լինելու Տիրոջ ձեռքում: Որովհետև գիշեր ու զօր գործել Աստծո փառքի համար՝ ոչ Աստծո առաջնորդությամբ և զորությամբ՝ նշանակում է՝ գիշեր ու զօր վնաս հասցնել Աստծո գործին և վերջում էլ լսել զարհուրելի խոսքեր, թե՝ «Հեռո՛ւ գնացեք Ինձանից, ես ձեզ չեմ ճանաչում», և կամ՝ «Կապե՛ք դրա ձեռքերը և ոտքերը և դո՛ւրս նետեք արտաքին խավար՝ դասելով անհավատների հետ»:

Ուրեմն, իմաստուն լինենք, ավելի մեր ներսում փնտրենք թշնամուն և ոչ թե դրսում, ինչպես Մովսեսը անապատի 40 տարում ազատվեց ներքին թշնամուց՝ հին Մովսեսից՝ իր կրքերով հանդերձ: Մենք, ըստ Մակար Մեծի, մտնենք մեր սրտերի մեջ և այնտեղ պատերազմենք բարի պատերազմը սատանայի դեմ: Եվ եթե մենք չենք տեսնում մեր մեջ հին մարդուն, ապա ուշադիր լինենք այս գրքի վերնագրերի հանդեպ, և սրանք կօգնեն տեսնելու մեր մեջ բազում բաներ հին մարդուց, որոնցից եթե չմաքրվենք, անպիտան գործիքներ կլինենք միայն, և հիմար կույսերի պես կմնանք դռան ետևում:

Ուրեմն, խնդրենք Տիրոջը՝ ասելով. «Ո՛վ ամենազոր Աստված, ինչպես որ Քո բարի կամոք շնորհ արեցիր և մեզ քաշեցիր դեպի փրկություն՝ դեպի Միածին Որդիդ, Որի Արյան քավչարար զորությամբ արժանացրիր մտնել փրկարար տապանի դռնով ներս, այժմ էլ խնդրում ենք Քեզ. տապանի հին բնակիչներին՝ մեր սուրբ հայրերին, նմանվելու շնո՛րհ արա: Մտցրո՛ւ մեզ ապաշխարության բովը, այրի՛ր մեր միջի աղտեղութունը, մաքրի՛ր, սրբի՛ր և վերստին նորոգելով՝ արժանի արա մաքուր և սուրբ գործիք լինելու Քո օրհնյալ ձեռքում, անկամք գործիք, որպեսզի Քո փրկարար կամքը լինի մեզ համար առաջնորդ: Շնորհի՛ր Մովսեսի 40 տարվա անապատը, որի ընթացքում նա թոթափվեց անձի խաբուսիկ զորությունից և արժանացավ Քո ճշմարիտ և սուրբ, ամենահաղթ զորությամբ պատերազմելու և լինելու պատճառ փրկության՝ թե՛ իր և թե՛ ամբողջ Իսրայելի համար: Նմանօրինակ ընթացքով շնորհի՛ր մեզ էլ փառավորել Ամենազոր Տերությանդ, հավիտյանս. Ամեն»:

Նարեկ
Բան Լէ

Կշտամբանքներս գալիս են, ավա՜ղ,
Ըստ Հոբի խոսքի, ոչ թե մարդկանցից,
Այլ ամենատես աչքերից վերին հրամանի քո,
Որի երկյուղից սոսկում եմ, դողում՝
Խղճով վարանած ու տագնապահար.
Եվ արդ, սրտաբեկ ապավինում եմ
Հույսիդ հաստատուն, կենդանի, անեղծ,
Որպեսզի նայես ինձ ողորմությամբ՝
Իբրև կորստյան դատապարտվածի,
Երբ ներկայանամ երկնավոր մեծիդ բարերարության
Իսպառ անպաշար, ձեռնունայն, դատարկ,
Երախտիքները անպատում փառքիդ
Բերելով ինձ հետ՝ քեզ հիշեցնեմ,
Քեզ, որ չես նիրհում մոռացմամբ տարված,
Ոչ էլ երբևէ գեթ մի ակնթարթ
Հեծեծանքներս ես անտեսում վշտի:
Վերացրու՛ ինձնից, աղաչում եմ քեզ,
Խաչվդ լուսավոր՝ խեղդը վտանգիս,
Հոգածությամբ քո՝ տխրություններս ամենավարան,
Փշե պսակվդ՝ բողբոջը մեղքի,
Գանահարությամբ՝ հարվածը մահու,
Ապտակի հիշմամբ՝ տանջանքն ամոթի,
Թքի անարգմամբ՝ գարշություններս ամբաստանելի,
Լեղու ճաշակմամբ՝ դառնությունն հոգուս:

Քոնն են այս բոլոր բարությունները,
Միածի՜ն Որդի միակ Աստծո,
Որոնց համեմատ չարություններն իմ հիշատակելով՝
Քո ամենօրհնյալ անվանն եմ դիմում, արդ, բարձրաղաղակ
Պաղատանքներով մտքիս ու հոգուս:
Նայի՛ր այս զղջման խոստովանության
Մեղապարտությամբ ամոթահարիս.
Սատակման որդուս ողորմիր՝ անմահ մահով մեռնելու,
Որպեսզի անթիվ մեղքերիս չափով՝
Ողորմությունդ բազմապատկվելով առավելապես՝
Կրկին ու կրկին ավետարանվի,
Բարեհռչակված հնչի վեհորեն
Թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա.
Եվ քեզ, քո Հոր և Սուրբ Հոգուդ հետ փա՜ռք հավիտյանս. ամեն:

(Սբ. Գրիգոր Նարեկացի)

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Ես ինչպե՜ս **խրատը** ատեցի, ու իմ սիրտը հանդիմանությունը անարգեց, և իմ ուսուցիչների խոսքին ուշադրություն չդարձրի, իմ ականջը դաստիարակողներին չտվեցի, ժողովրդային հավաքույթի մեջ ծայրաստիճան թշվառության հանդիպեցի (Առակ. 5:ը2-14):*
*Գավազանը խնայողը ատում է իր որդուն, բայց իր որդուն սիրողը վաղ է **խրատում** (Առակ. ը3:24):*

Աստվածաշնչից

1. Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է (Մատթ. 3:2):
2. Ասում եմ ձեզ, սակայն, եթե չապաշխարեք, ամենքդ էլ նույնպես պիտի կորչեք (Ղուկ. 13:3):
3. Ամեն մեկդ ձեր անձը փրկեցեք Տիրոջ ցասումից ու բարկությունից (Երեմ. 51:45):
4. Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին (Մատթ. 9:13):
5. Ասում եմ ձեզ, որ այսպես ուրախություն կլինի երկնքում մի մեղավորի համար, որն ապաշխարում է, քան իննսունինն արդարների համար, որոնց ապաշխարություն պետք չէ (Ղուկ. 15:7):
6. Եթե արհամարհում ես Նրա բարության առատությունը, ներողամտությունն ու համբերությունը, չգիտե՞ս, որ Աստծու բարությունը քեզ ապաշխարության է տանում: Եվ քո խստասրտությամբ ու անզիղջ սրտով քո անձի դեմ բարկություն ես դիզում բարկության օրվա և Աստծու արդար դատաստանի հայտնության օրվա համար (Հռովմ. 2:4-5):
7. Տերը չի ուշացնի Իր խոստումը, ինչպես կարծում են ոմանք, թե ուշացած է, այլ համբերատար է ձեր հանդեպ, քանզի չի ուզում, որ որևէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ ամենքը ապաշխարեն (Բ Պետ. 3:9):
8. Քանզի Աստված չխնայեց մեղանչած հրեշտակներին, այլ խավարի կապանքներով գցեց տարտարոսը, որպեսզի նրանք պահվեն դատաստանի օրվա համար (Բ Պետ. 2:4):
9. Կան մարդիկ, որոնց մեղքերը հայտնի են նախքան որևէ դատաս-

տանի ենթարկվելը: Մարդիկ էլ կան, որոնց մեղքերը հետո են հայտնի դառնում (Ա Տիմ. 5:24):

10. Եթե ասենք. «Մենք ոչ մի մեղք չունենք, մենք մեզ ենք խաբում, և ճշմարտություն չկա մեր մեջ: Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է Նա և արդար՝ մեր մեղքերը ներելու և մաքրելու համար մեզ ամեն անիրավությունից: Եթե ասենք՝ «Չենք մեղանչել», սուտ ենք հանում Նրան, և Նրա խոսքը մեր մեջ չէ (Ա Հովհ.1:8-10):

11. Որդյակնե՛ր իմ, այս բանը գրում եմ ձեզ, որպեսզի չմեղանչեք. իսկ եթե մեկը մեղանչի, Աստծու առաջ բարեխոս ունենք Հիսուս Քրիստոսին՝ Արդարին և Անարատին. և Նա՛ է քավությունը մեր մեղքերի, և ոչ միայն մեր մեղքերի, այլև՝ ամբողջ աշխարհի (Ա Հովհ. 2:1-2):

12. Ուստի մեղքն այլևս թող չթագավորի ձեր մահկանացու մարմնի վրա, որ նրա ցանկություններին հնազանդվեք: Եվ ձեր անդամները մեղքի մի՛ ընծայեք, անիրավության գործիք լինելու համար, այլ ձեր անձերը Աստծուն ընծայեք՝ մեռելներից կենդանացածների պես և ձեր մարմնի անդամները՝ արդարության գործիքներ՝ ի ծառայություն Աստծուն: Քանզի մեղքը ձեր վրա պիտի չիշխի, քանի որ օրենքի տակ չեք, այլ՝ շնորհի (Հռովմ. 6:12-14):

13. Կտրիճ եղե՛ք, ու ձեր սիրտը թող զորանա՛, դուք ամենքդ, որ Տիրոջն եք հուսացել (Սաղմ. 31:17):

14. Տիրոջ փրկությանն սպասելը ու լռությամբ հուսալը բարի է (Ողբ Երեմ. 3:24):

15. Եթե Տիրոջը դառնաք, Նա ձեզանից երես չի թեքի (Բ Մնաց. 30:7):

16. Պատվիրում եմ քեզ, զորացի՛ր ու քաջ եղի՛ր. Տերը քեզ հետ է (Հեսու 1:9):

17. Օգնելու կամ կործանելու զորությունը Աստծո ձեռքին է (Բ Մնաց. 25:8):

18. Մի՛ լռիր, մի՛ դադարիր, աչքդ արտասուքից թող հանգիստ չառնի: Վե՛ր կաց խոստովանության գիշերը, քո պահեցողության սկիզբը, քո սիրտը, ինչպես ջուր թափի՛ր Տիրոջ առաջ (Ողբ Երեմ. 2:9):

19. Ի՛նձ դարձեք ձեր բոլոր սրտով, ծոմապահությամբ, լալով ու սգալով ձեր սրտերը պատռե՛ք և ոչ թե ձեր հանդերձները (Հովել 2:12):

20. Ինձ փնտրե՛ք, որպեսզի ապրեք (Ամովս 5:4):

21. Մի՞թե ես ամբարիշտի կորուստն եմ ուզում: Ես ուզում եմ, որ նա իր ճանապարհներից ետ դառնա ու ապրի (Եզեկ. 18:23):

22. Ձեր հանցանքները նետեցե՛ք, նոր սիրտ ու նոր հոգի ստացե՛ք. ինչո՞ւ մեռնեք, ով Իսրայելի տուն, քանի որ մեռնողի մեռնելը չեմ ուզում (Եզեկ. 18:31):

23. Կենդանի եմ Ես՝ ասում է ամենակալ Տերը և ամբարշտի մահը չեմ ուզում, այլ նրա հետ կանգնելն իր չար ճանապարհից ու ապրելը: Դարձե՛ք, հե՛տ դարձեք ձեր չար ճանապարհներից, ինչո՞ւ մեռնեք, ո՛վ տուն Իսրայելի (Եզեկ.33:11):

24. Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, ասա՛ քո ժողովրդի զավակներին. «Արդարի

արդարությունը նրան չի փրկելու այն օրը, երբ մոլորվի, անօրենի անօրենությունն էլ նրան չի չարչարելու այն օրը, երբ հետ կանգնի իր բոլոր անօրենություններից: Արդարը չի կարողանալու ազատվել իր մեղքերի օրը: Երբ ես արդարին ասեմ՝ ապրելով ապրելու ես, իսկ նա էլ, հույսը դնելով իր արդարության վրա, անօրենություն գործի, նրա բոլոր արդար գործերը չեն հիշվելու, այլ իր կատարած անօրենության համար մեռնելու է: Իսկ երբ ես ամբարշտին ասեմ՝ հաստատ մեռնելու ես, բայց նա հետ կանգնի իր մեղքերից, իրավ դատաստան և արդար գործ կատարի, պարտապանին ետ տա գրավը, վերադարձնի հափշտակվածը, անիրավություններ չգործի, հաստատ ապրելու է ու չի մեռնելու: Նրա գործած բոլոր մեղքերը չեն հիշվելու, որովհետև իրավ դատաստան ու արդար գործ է կատարել, դրա համար էլ ապրելու է (Եզեկ. 33:12-16):

25. Ես սիրում եմ ինձ սիրողներին: Ինձ վաղ փնտրողները Ինձ կգտնեն (Առակ. 8:35):

26. Երանի՜ այն մարդուն, որ Ինձ լսում է, ամեն օր հսկում է Իմ դռների մոտ և Իմ դրանդիքի մուտքերն է պահում, քանի որ Ինձ գտնողը կյանք կգտնի և Տիրոջից շնորհք կստանա: Բայց Իմ դեմ մեղանչողը իր հոգու դեմ անիրավություն է անում: Բոլոր Ինձ ատողները մահն են սիրում (Առակ.8:34-36):

27. Մարդու հոգուն անարգանք են իր սրտի վատ խոսքերը, և նրա ամոթը միշտ մնում է իր հետ: Որդյակ, պահիր իմ խոսքերը և օր ու գիշեր դրանց մասին մտածիր՝ իբրև հարազատ որդի և ազնիվ ժառանգ (Սիրաք 20:28):

28. Երբ դարձի գաս և հոգոց հանես, այն ժամ կապրես և կիմանաս, թե որտեղ ես գտնվում: Որովհետև հույսդ դրել էիր սնոտի բաների վրա, դրա համար էլ սնոտի դարձավ և ձեր զորությունը (Ես. 3Ձ:ը5):

29. Նախ, դու քո անօրենությունները պատմիր, որպեսզի փրկվես (Ես. 43:26):

30. Նեղության օրը ինձ կանչիր. ես քեզ պիտի ազատեմ, ու դու ինձ պիտի փառավորես (Սաղմ. 50:15):

***

31. Ամաչում եմ և իմ երեսը վեր չեմ բարձրացնում, քանի որ մենք մեղավոր եղանք (Եզր. 9:6):

32. Ոսկորներիս մեջ հանգստություն չկա՝ մեղքերիս պատճառով (Սաղմ. 37:3):

33. Մեկն իմ գլուխը բազում ջրերի շտեմարաններ դարձներ և աչքերս՝ արտասուքների հորդ աղբյուրներ (Երեմ. 9:11):

34. Աչքս արցունք է թափում իմ հոգու համար (Ողբ Երեմ.):

35. Եվ ահա Դու բարկացար, որովհետև մենք մեղք գործեցինք և դրա համար էլ մոլորվեցինք: Մենք ամենքս պիղծ դարձանք և մեր ամբողջ արդարությունը դաշտանի շորերի նմանվեց, մեր անօրենությունների

պատճառով մենք ամենքս ցած թափվեցինք ինչպես տերև, հողմերը քշեցին մեզ: Ոչ մեկը չի կանչում Քո անունը, ոչ ոք չի մտածում քեզ ապաստան դարձնել. ահա թե ինչու Քո երեսը մեզնից շրջեցիր և մեր մեղքերի համար մեզ դատապարտեցիր (Եսայի 64:5-7):

36. Ինչո՞ւ մեզ թողեցիր, որ մոլորվենք Քո ճանապարհներից, ո՛վ Տեր, ինչո՞ւ կարծրացրիր մեր սրտերը, որ Քեզանից չվախենանք. դարձիր ի սեր Քո ծառաների, դարձիր ի սեր Քո ժողովրդի, որ Քո ժառանգությունն է: Գուցե Քո սուրբ լեռը չկարողանանք ժառանգել: Մեր թշնամիները նեղեցին մեզ և ոտնակոխ արին Քո սրբությունը: Եղանք, ինչպես առաջ էինք, երբ Դու մեզ չէիր տիրում, և մենք Քեզ չէինք պատկանում (Ես. 63:17-19):

37. Նա պիտի դառնա ու գթա մեզ, պիտի թաղի մեր մեղքերը և ծովի խորքը պիտի նետի մեր բոլոր անօրինությունները (Միք. 7:19):

38. Ով Տեր, Դու իմ վիճակս գիտես, ինձ հիշի՛ր և ինձ այցելություն արա (Երեմ. 15:15):

39. Ով Տեր, բժշկի՛ր ինձ ու պիտի բժշկվեմ (Երեմ. 17:14):

40. Քո ականջն իմ աղաչանքներից մի՛ ծածկիր, ազատություն տուր ինձ, փրկիր ինձ (Ողբ Երեմ. 3:55):

41. Ես ասացի. «Ով Տեր, ողորմի՛ր ինձ, բժշկի՛ր իմ անձը, քանի որ ես Քո դեմ մեղանչեցի» (Սաղմ. 40:4):

42. Ինձ մի՛ թող, ով Տեր, ով իմ Աստված, ինձնից մի՛ հեռացիր, ինձ օգնելու շտապի՛ր, ով Տեր, իմ փրկություն (Սաղմ. 37:21):

43. Ո՛վ Զորաց Աստված, մեզ դարձի՛ր ու Քո երեսը փայլեցրո՛ւ, ու պիտի ապրենք (Սաղմ. 79:7):

44. Ցերեկը աղաղակում եմ ու գիշերը Քո առջև եմ, իմ աղոթքը թող Քո առջև բարձրանա (Սաղմ. 87:1):

45. Ինչո՞ւ ես տրտում, ով անձ իմ, և ինչո՞ւ ես շփոթված ինձանում. Աստծուն հուսա (Սաղմ. 42:5):

46. Թեև Նա ինձ սպանի, ես Նրան պիտի հուսամ (Հոբ 13:15):

47. Ով Տեր, ինձանից մի՛ հեռացիր, ինձ օգնելու հասի՛ր (Սաղմ. 70:12):

48. Ով իմ անձ, միայն Աստծուն սպասի՛ր, քանի որ Նա է իմ հույսը (Սաղմ. 61:6):

49. Տառապանքի գուբից քո անունը կանչեցի, Տե՛ր, և դու լսեցիր իմ ձայնը: Քո ականջը իմ աղաչանքներից մի՛ ծածկիր, ազատություն տուր ինձ, փրկի՛ր ինձ: Դու մոտեցար, որպեսզի ինձ օգնես, և ասացիր, թե. «Այն օրը, երբ ինձ կանչես, չվախենաս» (Ողբ Երեմ. 3:55-57):

50. Սպասելով սպասեցի Տիրոջը, որ խոնարհվեց դեպի ինձ և լսեց իմ աղաղակը և ինձ կորստյան փոսից, տղմալից կավից հանեց ու ոտքերս վեմի վրա ամրացրեց ու քայլվածքս հաստատեց (Սաղմ. 39:1):

51. Քանի դեռ վշտացած չէի՝ սխալվում էի, բայց հիմա Քո խոսքը կպահեմ: Բարի ես դու ու բարերար: ... Լավ եղավ ինձ, որ վշտացա, որպեսզի Քո կանոնները սովորեմ: Ինձ հազարավոր ոսկուց ու արծաթից

ավելի լավ է Քո բերանի օրենքը (Սաղմ. 119:67-71):

52. Թիկունքս հարվածի տվեցի, ծնոտներս՝ ապտակի, և երեսս շուռ չտվի նախատինքներից: Տեր Աստված եղավ ինձ օգնական, դրա համար էլ ամոթ չզգացի, այլ իմ երեսը դարձրի ինչպես կարծր քար: Գիտեմ, որ չեմ ամաչելու, քանզի մոտ է Նա , ով արդարացնելու է ինձ: Ո՞վ է իմ ոսոխը, թող գա և կանգնի մեջտեղը. ո՞վ է նա, որ դատապարտելու է ինձ, թող մոտենա ինձ. քանզի ահավասիկ Տերը, Տերն է ինձ օգնական, և Ո՞վ է, որ չարչարելու է ինձ: Ահա դուք բոլորդ, ինչպես ձորձեր, պիտի հնանաք, ցեցն ու որդը պիտի ուտեն ձեզ (Եսայի 50:6-9):

53. Այս բոլոր խոսքերի վախճանը լսեցե՛ք: Աստծուց վախեցի՛ր, ու Նրա պատվիրանները պահի՛ր, քանի որ մարդու բոլոր պարտականությունն այս է: Քանի որ Աստված ամեն գործ ամեն ծածուկ բաների հետ, թե՛ բարին և թե՛ չարը դատաստանի պիտի բերի (Ժողով. 12:13-14):

Հայրեր

1. Ապաշխարիր յուրաքանչյուր մեղքի համար և մահվանից առաջ տարակուսանք չես ունենա (Անտոն Անապատական):

2. Նախկինում կատարած մեղքերիդ մասին հոգումդ հիշողություններ մի թող, որպեսզի նորից չկրկնվեն: Համոզված եղիր, որ երբ ապաշխարությամբ Աստծո ձեռքը հանձնեցիր՝ ներվեցին: Համոզված եղիր (Անտոն Անապատական):

3. Ասում են՝ փրկվելը դժվար է, բայց և ամոթ է ու աններելի, եթե չփրկվես քեզ տրված բոլոր հնարավորություններից հետո (Հովհան Ոսկեբերան):

4. Ոչ հուսահատվենք մեղքերի մեջ ընկնելիս, ոչ էլ ավելորդ հույս դնենք մեր բարի գործերի վրա (Հովհան Ոսկեբերան):

5. Երբեք մի վախեցիր պատժից, այլ վախեցիր մեղքից, որ այդ պատիժն է ծնում (Հովհան Ոսկեբերան):

6. Ով մեկին տխրեցնի ապաշխարության համար՝ բարություն արած կլինի (Հովհան Ոսկեբերան):

7. Ապաշխարությունն այնտեղ տանող աստիճաններն են, որտեղից որ ընկանք (Եփրեմ Ասորի):

8. Երբ մոտենում է մահվան ժամը, ուղարկվում են հոգեառ հրեշտակներ, որպեսզի վերցնեն հեռացող հոգին և ներկայացնեն Աստծո

դատաստանին: Տեսնելով նրանց, խեղճ մարդը, եթե նույնիսկ թագավոր է կամ իշխանավոր, կամ աշխարհական, ամբողջովին համակվում է սարսափով՝ ինչպես երկրաշարժի ժամանակ, դողդղում է ինչպես տերևը քամուց, թփրտում է ինչպես բռնված թռչուն, տեսնելով ահավոր զորությունները, իր համար նոր և հզոր երևույթները, նաև տեսնելով ահեղ և խիստ դեմքեր, տեսնելով բաներ, որոնք առաջ չի տեսել: Դա տեսնում է միայն նա և մեր վրա այլևս ուշադրություն չի դարձնում: Ինքն իր մեջ աղոթում է, որքան որ ուժերը ներում են: Նրա վիճակից մենք էլ եզրակացնում ենք, որ նա տեսնում է վերին զորությունների, և միմյանց ասում ենք. լռեք և մի անհանգստացրեք այլևս պառկածին, որպեսզի նրան խռովության չմատնեք: Ավելի լավ է աղոթենք նրա համար, որպեսզի խաղաղությամբ ավանդի հոգին և ողորմություն գտնի Դատավորից (Եփրեմ Ասորի):

9. Մահացավ, այլևս նա չկա, ապրեց իր դարը և պառկած է անշարժ, անշունչ և լուռ: Ի՞նչ է մարդը, երազային տեսիլք և ստվեր: Հոգեառ հրեշտակները՝ առնելով հոգին, բարձրանում են օդով, որտեղ գտնվում են թշնամու իշխանությունները, պետությունները և տերությունները: Սրանք մեզ չարախոսողներ են, այստեղ մեզ գայթակղող և մեր չար գործերը գրի առնող, իսկ այնտեղ՝ տանջահար անող: Սրանք ճանապարհին դիմավորում են վեր ելնող հուգուն, զննում են նրան և հաշվում նրա մեղքերն ըստ իրենց գրառումների՝ երիտասարդության և ծերության մեղքերը, կամա թե ակամա գործածները, նաև գործով, խոսքով և մտքով գործվածները: Օ,՜ ինչ սարսափ և ինչ երկյուղ խեղճ հոգուն: Աննկարագրելի է սարսափը, որ կրում է նա իրեն զրպարտող անհամար խավարային թշնամիներից, որոնք ջանում են չթողնել նրան երկինք բարձրանալու, մտնելու կյանքի դռներով և բնակվելու ողջերի երկրում (Եփրեմ Ասորի):

10. Արթնանանք քնից: Դադարենք ինքներս մեզ սին ու փուչ հույսերով խաբելուց: Թույլ չտանք այլևս խորամանկ թշնամուն մեզ ծաղրելու: Եվ թող երկար ապրելու հույսի խորամանկ միտքը չխաբի մեզ: Շատերը շատ բաներ ծրագրեցին, սակայն չապրեցին նույնիսկ մինչև առավոտ, այլ հանկարծակի մահվամբ խլվեցին, ինչպես թռչունը բազեի կողմից: Ոմանք երեկոյան առողջ քնելով՝ չարթնացան, ոմանք ճաշկերույթի մեջ ավանդեցին իրենց հոգին, ուրիշները զբոսանքի և զվարճության, ոմանք էլ բաղնիքում լողանալիս՝ մահանալով, այնտեղ գտան իրենց թաղման լվացումը, ուրիշները մահը գտան ամուսնության ժամանակ և հարսանեկան զգեստները դարձան մահվան զգեստներ, հարսանեկան ուրախությունը վերածվեց սգի:

Այս ամենը մենք գիտենք, բայց այնուամենայնիվ չենք դադարում ինքներս մեզ խաբելուց: Դրա համար էլ ոչ մի զիջում չենք գտնի մենք Աստծո մոտ, որովհետև ոչ թե անգիտությամբ, այլ իմանալով ենք տրվում խաբկանքներին: Աղաչում եմ ձեզ, դարձեք վերջապես ձեզ տրված ուսմունքի ոչ միայն լսողներ, այլև՝ կատարողներ (Եփրեմ Ասորի):

11. Վախեցիր նորից ընկնել այն մեղքերի մեջ, որոնք ողորմած Աստվածը ներել է քեզ ապաշխարության խորհրդով, բայց եթե տկարության պատճառով նորից մեղանչես, մի ընկիր հուսահատության փոսը (Եփրեմ Ասորի):

12. Ինքը՝ Տերը, հանձնարարում է բոլորին այստեղ պատրաստվել հաջորդ կյանքի համար: Այդպես էլ անենք, իսկ եթե սայթաքելով մեղանչենք, բժշկենք այն արցունքներով, քանի դեռ ապաշխարության ժամանակ կա: Ապաշխարության ժամանակը կարճ է, իսկ երկնքի Արքայությունը վախճան չունի (Եփրեմ Ասորի):

13. Փորձությունների և ընկած վիճակի մասին պատմելը մյուսներին, հատկապես հոգևոր հորը, հաճախ բավարար է լինում, որ փորձությունն անցնի: Չար ոգիները վախենում են լույսից, վախենում են իրենց հայտնաբերումից և հեռանում են, երբ իրենց հնարքներն ուրիշների առջև ի հայտ են բերվում: Ահա թե ինչու, վանքերում գնահատվում է հայրերին խորհուրդները և մտքերը խոստովանելը (Մակար Մեծ):

14. Ձղջումը փրկարար փայտ է նավաբեկությունից հետո (Կյուրեղ Երուսաղեմցի):

15. Երբ ինքդ քեզ արդարացնես՝ Աստված քեզ կմեղադրի, բայց երբ դու քեզ մեղադրես՝ Աստված քեզ կարդարացնի (Օգոստինոս Երանելի):

16. Չկա ոչ մի ակնթարթ, որ չկարողանա լինել վերջինը մեր կյանքում, միգուցե ոմանք, որ այսօր կարդացին այս տողերը, չտեսնեն վաղվա օրը (Օգոստինոս Երանելի):

17. Փորձությունների ժամանակ անհնար է, որ Տերը ու Նրա սուրբ հրեշտակները օգնության չհասնեն, միայն թե դու մի դադարիր խոնարհությամբ կանչել Նրան (Հայր Պիմեն):

18. Ով չի լացում մեղքերի համար, նա կլացի մեղքերի պատժի համար (Հայր Արսեն):

19. Վշտերը անտանելի են, ես էլ եմ դրան համաձայն, բայց և մեծ է դրանց վարձը, որ պատրաստել է Աստված համբերողներին (Բարսեղ Կեսարացի):

20. Սուրբ Հոգին մեզ սովորեցնում է փախչել մեղքից և այլևս չընկնել նրա մեջ, դա է ապաշխարությունը (Աբբա Եսայի):

21. Առաքինության պսակը սերն է: Մոլորության պսակը՝ սեփական մեղքերի արդարացումը (Աբբա Եսայի):

22. Եթե ապաշխարություն չլիներ՝ չէին լինի նաև փրկվողներ (Աբբա Եսայի):

23. Ով արդարացնում է ինքն իրեն, նա հեռացնում է իրեն ապաշխարությունից (Աբբա Եսայի):

24. Ապաշխարությունը վերադարձ է հակաբնական վիճակից՝ բնականի, սատանայից՝ Աստծուն (Հովհաննես Սանդուղք):

25. Եթե ընկել ենք մեղքերի խորխորատը, ապա այնտեղից չենք կարողանա դուրս գալ, մինչև չընկղմվենք ապաշխարողների խոնարհության անդունդը (Հովհաննես Սանդուղք):

26. Պառկելով անկողնում, պատկերացրու քեզ դագաղի մեջ և կսկսես քիչ քնել: Երբ նստես սեղանի առջև, հիշիր չսատկող որդերի ողբալի ճաշկերույթը և կսովորես չափավորություն: Երբ ջուր ես խմում, մի մոռացիր անշեջ կրակների մեջ լինելիք ծարավի մասին և, անկասկած, կզսպես քո իսկ բնական կրքերը (Հովհաննես Սանդուղք):

27. Միևնույն մեղքը, որ կատարվել է մեկի կողմից, երբեմն հարյուր անգամ ավելի է արժանի պատժի, քան եթե այդ նույն մեղքը գործած լիներ մեկ ուրիշը: Դատելով մեղսագործի բնավորությունից, այն վայրից, որտեղ մեղքը գործվել է, հոգևոր աճից, որի մեջ եղել է մեղք գործողը և էլի ուրիշ շատ այլ պատճառներից (Հովհաննես Սանդուղք):

28. Ինչպես մահացածի համար անհնար է քայլելը, այնպես էլ հուսալքվածի համար՝ փրկվելը (Հովհաննես Սանդուղք):

29. Չնայած, ոչ բոլորը կարող են ազատվել կրքերից, բայց փրկվել և հաշտվել Աստծո հետ՝ բոլորի համար էլ հնարավոր է (Հովհաննես Սանդուղք):

30. Ինչպես ջուրն է ճնշումից վեր բարձրանում, այդպես էլ փորձություններով հալածված հոգին է ապաշխարությամբ մոտենում Աստծուն (Հովհաննես Սանդուղք):

31. Մինչ մեղանչելը դևերն Աստծուն ներկայացնում են որպես մարդասեր, իսկ մեղանչելուց հետո՝ անողորմ (Հովհաննես Սանդուղք):

32. Հաճախակի ընկնելը ուղղել է անհիրավներին, անկախ իրենց կամքի՝ նրանց նվիրելով փրկություն և անհիշաչարություն (Հովհաննես Սանդուղք):

33. Ով չի ուզում կրել ապաշխարության կամավոր տրտմությունը, նրան Աստծո նախախնամությունը ակամա վշտերի է ենթարկում (Աբբա Փաղաքիա):

34. Ոմանց շուրթերին մաքսավորի խոսքն է, իսկ սրտինն ու մտքինը՝ փարիսեցունը (Գրիգոր Երկխոս):

35. Ապաշխարությունը բժշկում է հոգիները (Իսահակ Ասորի):

36. Ինչպես ծովի մեջ նետված մի բուռ ավազը, այդպիսին են յուրաքանչյուր մարդու մեղքերը Աստծո ողորմության և նախախնամության համեմատ (Իսահակ Ասորի):

37. Ապաշխարությամբ մաքրվում ենք մեղքերի թույնից ու ապականությունից (Աբբա Ստիփատ):

38. Աստծո շնորհի սպասավորները Սուրբ Հոգու միջոցով խոսեցին զղջման մասին և Ինքը՝ ամեն ինչի Տերը, զղջման մասին խոսեց երդմամբ. «Կենդանի եմ Ես, -ասում է Տերը, -չեմ կամենում մեղավորի մահը, այլ՝ զղջումը». և Նա կցեց հետևյալ բարի միտքը. «Տո՛ւն Իսրայելի, հե՛տ դարձեք ձեր անօրինություններից»: «Ասացի Իմ ժողովրդի որդիներին՝ թեև ձեր մեղքերը ձգվեն երկրից մինչև երկինք և թեև լինեն որդան կարմրից ավելի կարմիր և ավելի սև, քան քուրձը, սակայն եթե դուք ամբողջ սրտով դառնաք դեպի Ինձ և ասեք՝ Հա՛յր, Ես կլսեմ ձեզ՝ որպես սուրբ ժողովրդի»:

Եվ մի այլ տեղում այսպես է ասում. «Լվացվեցե՛ք, սրբվեցե՛ք, ձեր հոգիներից դեն նետեք չարիքը Իմ աչքերի առջև, հե՛տ կանգնեցեք ձեր չարիքներից. սովորեցե՛ք բարիք գործել, արդարություն փնտրեցեք, սատարե՛ք զրկվածին, որբի դա՛տը պաշպանեցեք, արդարացրե՛ք այրուն. և եկեք քննենք միասին,- ասում է Տերը,- և եթե ձեր մեղքերը բոսորագույն լինեն, ձյան նման սպիտակ կդարձնեմ, և եթե որդան կարմիրի պես լինեն, ճերմակ գեղմի նման կսպիտակեցնեմ. և եթե ախորժեք լսել Ինձ, երկրի բարիքները կճաշակեք, իսկ եթե չկամենաք Ինձ լսել, ապա սուրը կուտի ձեզ, քանզի Տիրոջ բերանը խոսեց այս ամենը»: Եվ այսպես, Նա Իր բոլոր սիրելիներին կամենում է զղջման մասնակիցներ դարձնել, և այդ հաստատեց Իր ամենակարող կամքով (Կղեմես Հռովմեացի):

39. Մեր Տեր Աստված Հիսուս Քրիստոսը ամբողջ աշխարհի մեղքերը Իր վրա վերցրեց, և բոլոր ապաշխարողներին թողություն է տալիս, իսկ դու մտածում ես, որ չի ներվի մեղքերը միայն մի մարդու, և այն էլ՝ հատկապես քոնը: Ամբողջ աշխարհի համար Նա հեղեց Իր Արյունը, իսկ դու ինչո՞ւ ես կարծում, թե միայն քո մեղքերին չի տա թողություն՝ Իր Արյամբ: Միայն թե դադարիր մեղանչելուց, միայն թե ապաշխարիր, միայն թե խոստովանիր մեղքերդ և արդարացման կարժանանաս. «Մեղքերս քեզ ցույց կտամ, և անօրենությունս չեմ ծածկի քեզանից: Ասացի, թե կխոստովանեմ մեղքերն իմ, և Դու թողություն կտաս իմ մեղքերի ամբողջ ամաբարշտությանը» (Սաղմ. 31:5) (Եպիսկոպոս Դիմիտրիուս):

40. Աղոթքից առաջ անհրաժեշտ է հիշել մեր ոչնչությունը և սգալ մեղքերի համար, դա փրկարար է անմահ հոգու համար: Սակայն ով չափազանց ողբա իր պղծության համար և, հետևաբար, չհուսա Աստծո ողորմության վրա, այնպիսինին, իբր բարի պատրվակով, դևերը կարող են ենթարկել ծայրագույն տխրության և անհուսության առ Աստված, մինչև իսկ, հասցնելով ինքնասպանության, դևերի այսպիսի հարձակումը պետք է ետ մղել՝ ասելով. «Հենց այսպիսի մեղավորի համար, ինչպիսին ես եմ, Տեր Աստված իջավ երկնքից երկիր և խաչի մահը կրեց բոլորի և հատկապես իմ համար» («Վանական ուսմունք» գրքից):

41. Ահա թե որոնք են Ս.Հոգու դեմ գործվող մեղքերը՝ ա) չափից դուրս հույս ունենալ Աստծո ողորմության վրա, բ) հուսահատություն՝ սեփական փրկության հանդեպ, գ) ակնհայտ ընդդիմություն՝ հաստատված ճշմարտության և ուղղափառ հավատքի մերժում, դ) Աստծուց ստացած հոգևոր բարիքների համար մերձավորին նախանձելը, ե) մեղքերի մեջ հարատևելը և չարության մեջ քարանալը, զ) մինչև կյանքի վերջը ապաշխարության և զղջման մասին չհոգալը (Հոգեշահ գրքերից):

42. Ինձ անհանգստացնում է այս միտքը. արդյոք Աստված կների՞ ինձ: Դու հարցնում ես. «Կների՞ արդյոք ինձ Տերը»: Սա դիվային միտք է: Նա իր չարությամբ վախեցնում է քեզ, մի՛ լսիր նրան: Չկա այնպիսի մեղք, որ գերազանցի Աստծո ողորմությանը («Հազար ու մի հարց» գրքից):

43. Երբ խղճիդ կամ Աստծո օրենքի շնորհիվ քո մեջ նկատես մտքի,

խոսքի, մտածումի մեղք կամ որևէ կիրք կամ չար սովորություն, նույն պահին, թեկուզ մտովի, ապաշխարի՛ր, այսպես դիմելով Աստծուն. «Տեր, ներիր և օգնիր»: Այսինքն, ներիր, որ մեղանչեցի և օգնիր, որ չմեղանչեմ Քո հանդեպ: Այս աղոթքով դիվային ազդեցությունները վանում ենք մեզանից: Եթե նորից կրկնվի, նորից այս աղոթքով անհրաժեշտ է վանել և դրանով հետզհետե կնվազեն չար մտքերը և մեղսալից սովորությունները:

Քնից առաջ հիշիր, ինչպես ես անցկացրել օրդ, որտեղ ես եղել, ինչ ես տեսել, ինչ ես խոսել և ինչ վատ բան արել հակառակ Աստծո, հակառակ մերձավորիդ, հակառակ խղճիդ, և եթե կտեսնես մեղքդ՝ ապաշխարի՛ր, իսկ եթե ոչինչ չես հիշի, չի նշանակում, թե մեղք չես գործել, այլ ցրվածության պատճառով մոռացել ես: Այդ դեպքում պետք է ապաշխարել նաև մոռացության համար, ասելով. «Մոռացել եմ ես Քեզ, Տեր, վա՜յ ինձ, մի մոռացիր ինձ, Քեզ մոռացողիս»: Եվ այս աղոթքը. «Տեր, ներիր և օգնիր»: Ասա դանդաղ, զղջումով, մի քանի անգամ, մինչև որ ճշմարիտ զղջման հոգոցները դուրս գան սրտիցդ:

Երեկոյան ապաշխարության այս սովորույթը շուտով սովորույթ կդառնա նաև օրվա ընթացքում, ապա և մեղք գործելիս կսովորես անմիջապես զղջալ և ապաշխարել: Այսպիսի ապաշխարությունը առաջնորդում է կատարելության՝ առանց հատուկ ճգնությունների: Ինչպես և ասում են սուրբ հայրերը, Աստված չի պահանջում մեզանից արտակարգ ճգնություններ, այլ փոքր, բայց հարատև, ըստ Հովհան Ոսկեբերանի («Վանական ուսմունք» գրքից):

44. Տիրոջ հետ լինելը Թաբոր լեռան վրա շատ հաճելի է, բայց երբ պետք լինի հայտնվել Գողգոթայի վրա, այն ժամանակ՝ դիմացի՛ր (Հոգեշահ գրքերից):

45. Կան մարդիկ, որոնք վշտացյալներին մխիթարելու փոխարեն, անհեթեթ խոսքերով գցում են տարակուսանքի մեջ և հասցնում հուսահատության: Այսպիսի մարդիկ կամ տգետ են, կամ դևերի կողմից դրդված չարամիտ թշնամիներ (Պողոս Պատրիարք):

46. Եթե չես կամենում հուսահատվել, մի հայտնիր քո սրտի ցավն այնպիսիներին, որոնք համբերությամբ չեն կրում իրենց վշտերը, կամ տկար ու երկչոտ են, կամ անտեղյակ են վիճակների դյուրափոփոխ հանգամանքներին, կամ բնավ չեն տառապել: Քանզի այդպիսիք անփորձ և անգետ լինելով վշտերին և փորձությունների մեջ եղողների որպիսությանը և իրավիճակին, այլ և այլ բաներ են խոսում՝ դրանով ավելի խորացնելով վերքերը, հուսահատական կամ անտեղի խոսքերով, քան թե՝ բժշկում: Որովհետև չգիտեն, թե ինչպես կարելի է մեկին համոզել՝ համբերատար լինել վշտերի մեջ, կամ թե ինչպես կարելի է հուսադրական քաջալերությամբ թեթևացնել դիմացինի ցավերի և կրքերի ծանրությունը: Նրանք, որոնք փորձ չունեն նեղություն և վիշտ կրելու, ինչպե՞ս կարող են փորձվողներին օգնական լինել: Սրանք և սրանց նմանները կարող են հավիտյան հուսաբեկ անել՝ մխիթարելու փոխարեն, դրա համար նեղության

մեջ ընկածները չպետք է իրենց ցավը հայտնեն այդպիսիներին (Պողոս Պատրիարք):

47. Աստված ողորմած է՝ ասենք, ոչ թե այն հույսով, որ չարիք գործենք, այլ որպեսզի մեղանչելիս ապաշխարանքի հույս ունենանք (Բարսեղ Մաշկևորցի):

48. Հաճախակի դժոխքի մասին ենք խոսում, որպեսզի վախի միջոցով ձեր սրտերը փափկեցնենք և ձեզ պատրաստենք Արքայությանն արժանանալու: Ինչպես որ մուրճը իր ծանրությամբ ծուռ բաները շտկում է, նույնպես և մեր խոսքերը՝ եթե ծանր չլինեին, չէին կարող հոգիներն ուղղել: Թեև գիտենք, թե ինչպես Աստծո շնորհով սաստում ու հարվածում ենք ոչ թե փշրելու, այլ Տիրոջ համար ընտրյալ անոթ պատրաստելու և այցելության օրը ջինջ ու սուրբ ներկայացնելու, երբ հրեղեն գետը պիտի հոսի: Լավ է մի քիչ մեր խոսքով տոչորվեք, քան թե այնտեղ բոցով այրվեք (Բարսեղ Մաշկևորցի):

49. Աստված ինչո՞ւ անմիջապես չի պատժում, որովհետև քեզ զղջալու առիթ է տալիս, նա մեղավորի մահը չի ուզում, այլ զղջալն ու ապրելը (Բարսեղ Մաշկևորցի):

50. Խաղաղություն հաստատենք և՛ մեր անձերում, և՛ Աստծո, և՛ մարդկանց մեջ: Քանի որ մեր մեղքերը մեզ թշնամացնում են Աստծու հետ, ուրեմն պարզ է, որ բարի գործերով խաղաղություն ենք հաստատում Նրա հետ: Քանզի նախ Նա՛ խաղաղություն հաստատեց Իր խաչի արյամբ և այժմ, ըստ Իր կատարածի, մեզանից նույնն է պահանջում: Իսկ ինչպե՞ս է այս լինում. երբ սիրենք միմյանց, երբ տանենք միմյանց բեռները, երբ ընկերոջ կարիքները սեփական անձինը համարենք, երբ լաց լինենք լացողների հետ և խնդացողների հետ զվարճանանք, երբ վերացնենք մեր միջից թշնամությունը և լինենք Աստծո որդիներ և Քրիստոսի նման խաղաղարար: Երբ համարձակ ասենք. «Ես եղբայրն եմ, և եղբայրը՝ ես»՝ թե՛ վշտի և թե՛ ուրախության մեջ (Խոսրով Անձևացի):

51. Բազմաթիվ են նրանք, որոնք առանց խոստովանության ու հաղորդության են մնում: Արդ, մի՛ անգիտանաք, խոստովանությունը բժշկություն է հոգիների համար, փախուստ է դժոխքից, ազատություն է սատանայից և հարություն՝ մահից: Հետևաբար, պատվիրում ենք, որ ամեն կիրակի եկեղեցի գնաք և խոստովանվեք: Ողորմեցեք ձեզ, ով քրիստոնյաներ, և մի՛ մնացեք մեղքի մեջ: Մեղավորը նման է հիվանդի, որ եթե ծածկի իր ցավերը և չխոստովանի բժշկին, հիվանդության դեմ դեղ չի գտնի (Հովհաննես Երզնկացի):

52. Եթե մեր բազմաթիվ մեղքերի պատճառով անհուսությամբ տանջվում ենք, թե Նրանից ողորմություն չենք գտնի՝ չհուսահատվենք, այլ հույսով ամրանանք, որովհետև Նա ողորմած է ու գթած և ցավում է մարդկանց չարիքների վրա: Նա մեր մեղքերի համեմատ չի վարվում, մեր անօրենության համեմատ չի հատուցում և հավիտյան ոխ չի պահում, որովհետև անոխակալ բնություն է: Թեև մեր կողմից արհամարհվում է, անարգվում, նախատվում, սակայն չի զայրանում ոչ էլ ոխ պահում,

ընդհակառակը՝ աղաչում է, աղերսում և մեր դարձն ուզում, որովհետև հեզահամբույր, ողորմած և անհիշաչար բնություն է (Սարգիս Շնորհալի):

53. Արդ, չդադարենք ապաշխարության համար ճգնելուց, դուռը կրկին բախելուց, որը մեղքով փակեցինք, թերևս բացվի մեզ համար (Սարգիս Շնորհալի):

54. Նա մեզ ապաշխարության է կանչում՝ խոսքով և գործով: Խոսքով, երբ ասում է. «Մեղավորի մահը չեմ ուզում, այլ նրա դարձը և ապրելը» (Եզեկ. 18:32). և թե՝ «Ինձ մոտ եկեք բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և ես պիտի հանգստացնեմ ձեզ» (Մատթ. 11:29): Իսկ գործով՝ երբ ապաշխարած ենովքին այս աշխարհից երկինք փոխելով՝ պատվեց (Ծննդ. 5:24), երբ Դավթին ընդունեց ապաշխարությամբ և Մանասեի մեղքը ներեց, մաքսավորին արդարացրեց, պոռնիկին ընդունեց և ավազակին դրախտ մտցրեց, երբ Փրկչի (չարչարանքները լսելով՝ մարդկորեն ախտացած Պետրոսին մեկ արցունքով լվաց և երեք անգամ կատարված խոստովանությամբ նրան բժշկեց), և այսպիսի ուրիշ բյուրավորների ապաշխարությամբ ընդունեց, ոմանց հորդորական խոսքերով, իսկ ուրիշներին՝ տպավորիչ օրինակով (Սարգիս Շնորհալի):

55. Արդ, սիրելիներ, հիշենք Աստծուն Իր գթությամբ և չհուսահատվենք մեր անձի փրկությունից, այլ Դավթի հետ դարձյալ ասենք. «Ինչու՞ ես տրտում, ով իմ անձ, կամ ինչո՞ւ ես խռովվում: Աստծուն հուսա, հավատա՛ Նրան, անձիս փրկությունը Աստված է» (Սաղմ. 41:6):

Այս հույսով, աներկմիտ հավատով ու սիրով գործենք Աստծո պատվիրանների մեջ և նրանցով ավարտենք մեր կյանքը, որպեսզի խոստացված բարիքներին արժանի լինենք մեր Տիրոջ ու Փրկչի Հիսուս Քրիստոսի շնորհքով և մարդասիրությամբ (Սարգիս Շնորհալի):

56. Ապաշխարությունն ընկած հոգիներին կանգնեցնում և բարձրացնում է Աստծո մոտ. մեղքերով աղտոտված մարմինը լվում է և ձյունից ավելի ճերմակ դարձնում: Ապաշխարությունը մեղքերից մեռած հոգուն հարություն է տալիս և նրան մշտնջենավոր անմահություն է պարգևում. դժոխքի հատակը ընկղմված հոգիները արծվի նման սլացնելով դեպի բարձունքներն է հանում և Աստծո դրախտին արժանացնում. հոռետեսներին հույսով է լցնում և Աստծո հույսին է արժանացնում: Ապաշխարությունը մարդկանց բանսարկուի ձեռքից կորզելով՝ ընծայում է Աստծուն. բացում է երկնքի դռները և մեղքով տարագրվածներին Արքայություն մտցնում. մարդկանց հրեշտակ է դարձնում և երկնավորներին պսակակից և համապատիվ է անում (Սարգիս Շնորհալի):

57. Ուղիղ մտքով եղած խոստովանությունն ու ապաշխարությունը մխիթարում է սգավոր հոգին, առողջացնում է վիրավոր մարմինը, թեթևացնում է ծանրաբեռնված հոգիները և արծվի ձագերի նման զարդարում առաքինության թռիչքներով: Տաք սրտից բխած ապաշխարությունն ու արցունքները լվանում են մեղքերի թարախը, բժշկում խոցվածները և չարի նետն ու մուխը մարում: Անկեղծ հավատից բխած ապաշխարությունն

ու խոստովանությունը քանդում են մեղքի կապը, խզում անօրենության պարանները, տանջանքների փակ դռները բացելով՝ մարդկանց հանգստության մեջ են պահում: Հեծությամբ և արցունքով ապաշխարությունը Աստծուն խոնարհեցնում է դեպի մարդը, որովհետև Բարերարը տեսնելով մեզ լացի մեջ, չի կարող մեզ անտեսել (Սարգիս Շնորհալի):

58. Խոստովանությունն ու ապաշխարությունը մեզ մոտեցնում են Սուրբ սեղանին և հաղորդակից դարձնելով հոգևոր հացին՝ կատարյալ սրբություն են պարգևում մեզ: Ապաշխարությունն ու արցունքը մեզ՝ դատապարտվածներիս, սպասվող ահավոր Դատավորի սարսափելի դատաստանը անգործ են դարձնում, որովհետև ապաշխարությամբ մենք մեզ արդեն դատապարտել ենք: Ապաշխարությունը ներկայի և հանդերձյալի համար բյուրավոր բարիքների պատճառ է. և ո՞վ կարող է թվել նրա շնորհները, որոնք Արարչի կողմից մեզ են շնորհվել և ոչ հրեշտակներին: Արդարև, մեղանչած հրեշտակը չի կարող ապաշխարել, և սա հայտնի է մեղանչած և չապաշխարած բանսարկուից. մինչ մարդ, երբ մեղանչի, բյուր դատապարտության կենթարկվի, սակայն ապաշխարությամբ մեղքերը դարձյալ ջնջելով, նորից կարող է մտնել երկնքի արքայություն (Սարգիս Շնորհալի):

59. Չկա մի բան, որ ավելի ցավ և խռովք պատճառի բանսարկուին, որքան ապաշխարությունը. նա ապաշխարության համար եղած գովեստի վրա խռովվում և տագնապում է, որովհետև ապաշխարությունը իրապես խլում է նրանից իր մեծագույն զենքերը: Ո՞ր զենքերը՝ պոռնիկին ու մաքսավորին, ագահին ու կռապաշտին, ավազակին ու հմայողին և այլ այսպիսիներին: Արդարև, ապաշխարությունը նրա պողպատյա զենքերը կորզելով, նրան մերկ, կողոպտված և խայտառակ է թողնում:

Արդ, եթե այսպիսին է ապաշխարությունը, ամբողջ զորությամբ նրանով վարենք մեր կյանքը և դեպի մեզ հրավիրենք, որպեսզի նրա միջոցով մեղքերի թողություն գտնենք և Աստծո արքայությանն արժանի լինենք՝ հասնելու մեր Տիրոջ և Փրկչին՝ Հիսուսի Քրիստոսի շնորհքով և մարդասիրությամբ (Սարգիս Շնորհալի):

60. Աստված չի կամենում մարդուն փորձության տանել, այլ՝ ազատել փորձությունից և փրկել մահվանից: Քանզի նա, Ով Իր Որդուն չխնայեց, այլ մեր բոլորի համար մահվան մատնեց, Նրանով շնորհում է ամեն տեսակ բարիքներ բոլոր նրանց, ովքեր խնդրում են Իրենից: Թեպետ մենք ի վիճակի չենք փոխհատուցելու Աստծուն, սակայն չծուլանանք, այլ ջանանք, որչափ որ մեր կարողությունն է. քանի որ մեր սակավակերությունը որպես պահք է դիտում, չափավոր ըմպելը՝ գինեհատություն, միջին հանդերձը՝ համեստություն և անհրաժեշտ ստացվածքը՝ աղքատություն: Բոլորին վայել է փութաջան լինել Աստծո պատվիրանները պահելու և գործելու մեջ՝ տղամարդկանց և կանանց, ծառաներին և ազատներին, քանի որ մեր Տերը բոլորի թողության համար եկավ (Եղիշե):

61. Այս տոթ քարանձավում՝ իբրև կամավոր բանտում և

կապանքներում փակված, խոսքի փոխարեն մեր գրածով ենք խոսում բոլոր նրանց հետ, ովքեր լսելու ականջ ունեն: Ձեր լսողությանն ենք երկրորդում ոչ թե մեր խոսքը, այլ՝ առաքյալների, մարգարեների և Եկեղեցու վարդապետների խոսքի զորությունը: Եթե դրանք լսելու հոժարությամբ ձեր մտքի մեջ պահեք, ինչպես բարի և պարարտ հողում սերմացուն, և գործելով պտղաբերեք Աստծուն, թե՛ ձեր փրկության և թե՛ մեր վարձատրության պատճառ կլինեք: Իսկ եթե մեկը հոժարությամբ չլսի, այլ արհամարհի այն՝ որպես Աստծո դեմ ապստամբող, կամ թե լսելով հանդերձ, գործով արդարություն չպտղաբերի, այլ անզեղջ հոգով, անզգամ սրտով և անհուսությամբ մինչև վերջ անդարձ մնա մեղքի մեջ, Աստծո և Իր բոլոր հրեշտակների և ձեր՝ բոլոր լսողներիդ վկայությամբ՝ Քրիստոսի առջև մենք անհատույց կլինենք նրա արյան համար, քանզի չխորշեցինք և ոչ էլ դադարեցինք նրան Աստծո խոսքը պատմելուց (Ներսես Շնորհալի):

62. Եվ որովհետև հասանք առաքինության սկզբին ու մորը՝ խոստովանությանը՝ զղջմամբ և ապաշխարությամբ հանդերձ, որն Աստծո սուրբ Եկեղեցու բարձրագույն աշտարակն է և սուրբ Ավազանի բոլոր ծնունդների հույսը, որը շատ է կամենում և սիրում Աստծուն և գովում Հին և Նոր Կտակարաններով, և բոլոր սուրբերը իրենց գրվածքներով հորդորում են մեղավորներիս՝ դառնալ, ապաշխարել և ընկնել Աստծո առաջ: Որովհետև Աստված շատ է կամենում, սիրում և գորովով կանչում ամեն մեկին և ուրախությամբ ցնծում մեղավորի դարձի համար: Եվ խիստ տրտմում է, երբ Իր անարատ ձեռքի ստեղծածն անզեղջ է մնում: Արդ, Աստծո մարդկանց համար ստեղծած բոլոր բարիքներից առավել մեծ և զարմանալի են խոստովանությունը և զղջման հույսը (Գրիգոր Վկայասեր):

63. Աստված ուրախանում է, և հրեշտակները ցնծում են մարդկանց զղջումով, որ արտասուքներով և խոստովանությամբ է լինում, ցնծում են և արդարների դասերը երկրի վրա, երբ տեսնում են սրտանց և անկեղծ ապաշխարությունը: Ով դու, մարդ, մի հապաղիր և մի ասա, թե՝ «Վաղը կելնեմ մեղքերից և կգնամ առ Աստված»: Մի խորհիր այդ քո մտքում, որովհետև չար դևն է սերմանում այն խորհուրդներիդ մեջ, որ հապաղես և հանկարծակի անհույս մեռնես և իր հետ այրվես հավիտենական հրում (Գրիգոր Վկայասեր):

64. Այն սիրտը, որը չի զղջում և ապաշխարում, նման է սատանայի սրտին, որը նման է դարբնի սալի: Որ բոլոր սրբերը, աստվածային խոսքերով՝ որպես մտրակով հանդիմանում են նրան և զարկում, բայց դրանք ամենևին չեն ազդում և հետք չեն թողնում նրա մեջ, ինչպես փարավոնի, Հուդայի և սոդոմացիների և Նոյի ժամանակակիցների սրտերում (Գրիգոր Վկայասեր):

65. Այնքան կարևոր և բարձրագույն գործ են խոստովանությունն ու զղջումը, որ ոչ միայն Եկեղեցու վարդապետները և Աստվածային Գրքերն են գովում այն, այլև արտաքին իմաստասերները սրա համար ասպարեզ մտան և հույժ գովեցին նրան, ով առավել ունի այն: Որովհետև կռապաշտ

էին, բայց այս բարվոք խորհեցին, քանզի Պյութագորասն ասում է, թե՝ «Մի ծածկիր քո մեղքերը, այլ հանդիմանիր, որ բժշկվես»: Տիմոսթենեսն ասում է, թե՝ «Ով մարմնի ցավերը թաքցնում է բժիշկներից, չի կարող առողջ լինել, նույնպես էլ, ով թաքցնում է մեղքերը՝ չի բժշկվի»: Արիստոտելն ասում է, թե՝ «Ով հեզությամբ խոստովանում է, հավասար է լինում անմեղներին»: Կլիտարքոսն ասում է, թե՝ «Մի տախտակի վրա հուրը հանդերձի հետ մի դնիր, նույնպես և, մի պահիր մեղքերը քո սրտում»: Թեոդիմոսն ասում է, թե՝ «Աշխարհում կան մեղքեր, որոնք խափանում են Աստծո բարերարությունը» (Գրիգոր Վկայասեր):

66. Քանզի Տիրոջ խոսքը ծանրաբեռնվածներին խոստովանությամբ դեպի ապաշխարություն է կանչում, մեղքերով խավարածներին՝ դեպի արդարության լույսը, մոլորվածներին՝ դեպի ճշմարտության գիտությունը, արդարության ճանապարհներից շեղվածներին ուղղության բերում՝ խոստովանությամբ մահաբեր վարքը վերստին նորոգելու և սատանայի բոլոր խարդավանքները լուծարելու: Քանզի «Կամենում է, որ ամեն մարդ ապրի, - ասում է առաքյալը, - և ճշմարտության գիտությանը հասնի ամենագյուտ սիրո տեսչություններով» (Բ Պետ. 3:9) (Գրիգոր Լուսավորիչ):

67. Ճշմարիտ խոստովանողներն ու ապաշխարողներն ազատվում են Քրիստոսի փրկավետ Մարմնով ու Արյամբ: Քանզի դա է մեր հույսն ու քավության առիթը, և դրանով են լինում ազատություն և մուտք դեպի արդարների ուրախություն ու ժառանգություն՝ Քրիստոսի սուրբ սիրո երախտիքներով, որն արդարացնում է ապաշխարող մեղավորներին (Գրիգոր Լուսավորիչ):

68. Ապաշխարությունն է սեփական անձն ամբաստանելը և վնասակար ու չար ցանկություններից հրաժարվելը (Գրիգոր Լուսավորիչ):

69. Ում մեղքերի վերքերը սաստիկ են, և ինքնակամ է բռնվել նրանցից, որ օրենքով ունի Տիրոջից տրված քրիստոնեության անունն ու կարգը, այդպիսին ունի սպառնալիքների հանգամանքներ: Ուստի, ըստ հանցանքների չափի, թող մեծ ջանք, ջերմեռանդ արտասուք, սրտի փշրվածություն ձեռք բերի՝ որոշակի ժամանակով հեռացվելով Եկեղեցուց՝ խափանելու համար խիստ մեղքերի դժնդակ ձմեռը: Որպեսզի Հոգու հարավային տաք քամու փչմամբ ժամանի հոգևոր գարունը, սաստիկ անձրևների պես վերից թափվեն արտասուքի հոսանքները, որ թարմ հողը ծլեցնի բույսեր ու ծաղիկներ, տունկերը սաղարթավորվեն ու պտուղներ տան, որոնք վայելելով՝ թագավորներն ու ռամիկները զվարճանում են: Նույնպես էլ, ով Հոգու ջերմությամբ հեղում է արտասուքի հոսանքներ և խզում ձմեռային մեղքերի կապանքները, առաքինության բույսեր են արձակում, և արդարության տնկիները պտուղներ են տալիս, որով երկնավորներն ու երկրավորները ուրախանում են Աստծո փառքի համար (Գրիգոր Լուսավորիչ):

70. Ապաշխարողները այսպիսի միտք և բարք պետք է ստանան, որպեսզի ազատվեն գեհենի անշեջ հրի և անմահ որդերի հարվածների պարտքերից: Եվ, հաստատվելով արտասուքի ավազանով՝ ստույգ

ապաշխարությամբ, արքայության ժառանգավորներ լինեն՝ հագնելով սրբության լույսով ճառագայթող, առաքինության վկայություններով զարդարված պատմուճանը՝ սուրբերի հետ պսակվելու և վայելելու անվախճան երանությունների մեջ (Գրիգոր Լուսավորիչ):

71. Եվ այսպես, ապաշխարության կյանքի դուռը չի փակվելու մինչև աշխարհի վախճանը: Որպեսզի ապաշխարության ավազանի հանապազօրդ արտասուքով լվանանք ու սրբենք մեր գործած ամենօրյա սխալները, որովհետև ամեն օր մեղանչում ենք՝ թե՛ խորհրդով, թե՛ խոսքով, թե՛ լսելով, թե՛ տեսնելով և թե՛ որևէ շարժմամբ: Ուստի, թող հանապազօրդ աղոթքներն ու արտասուքով լվացումները չպակասեն (Գրիգոր Լուսավորիչ):

72. Ցանկանում եմ զղջալ, խոստովանել, իսկ թշնամին հապաղեցնում է, ցանկանում եմ մտնել ապաշխարության վարքի մեջ, իսկ թշնամին ծուլացնում է, ցանկանում եմ Աստծո առաջ ընկնել, իսկ թշնամին հեռացնում է, ցանկանում եմ պաղատել, աղերսել, աղաչել, իսկ թշնամին կարծրացնում է, ցանկանում եմ ողբալ ու արտասուքներով լալ, իսկ թշնամին ցամաքեցնում է. ցանկանում եմ ողորմել աղքատին, իսկ թշնամին հիշեցնում է իմ աղքատությունը. ցանկանում եմ մաշել ինձ պահքով, իսկ թշնամին հիշեցնում է ինձ մարմնով տկարանալը. ցանկանում եմ խոնարհվել և հնազանդվել եղբորը, իսկ սիրտս խստանում է ամբարտավանությամբ. քանզի ինչով որ կարող եմ մեղքերս քավել, նրա դեմ պատրաստված եմ գտնում թշնամու չար որոգայթները (Հովհան Մանդակունի):

73. Գող է այն օրը, հափշտակող է վախճանի օրը. անտեսանելի է այս աշխարհից ելքը, հանկարծահաս և ստիպող, և չի թողնում աղաչել ու աղերսել, լալ ու ողբալ, ողորմել ու ապաշխարել: Բռնում է ինչպես որոգայթ, հափշտակում ինչպես առյուծ և, անողորմ վարելով, տանում ինչպես գերեվարների գերի. արտասվելով հառաչում ես և ողբալով հեծում, սակայն օգուտ չես գտնում: Քանզի, ժամ առ ժամ հետաձգելով, բաց թողեցիր ապաշխարության ժամանակը, որով կարող էիր մեղքերիդ բեռները թեթևացնել և անօրենությունների տիղմը մաքրել, լինել արդարներին երամակից, երկնավոր Հոր որդի և անանց բարիքների ժառանգորդ:

Եվ արդ, կա՛մ ըղձալի փափկության բաղձանքով, կա՛մ ահեղ տանջանքների սպառնալիքներով փութանք ապաշխարել և բեռը բեռի վրա չկապենք և ցավը ցավի վրա չավելացնենք: Եվ թող չխաբի մեզ սատանան, թե երկար է այս կյանքը, չսպասենք աններելի վախճանին և անողորմ պահանջողներին, անվաստակ չծուլանանք և անվարժ չգնանք (Հովհան Մանդակունի):

74. Եվ արդ, դու ի՞նչ ունես ասելու, ա՛նձ իմ բազմամեղ, եթե այսքան դեղերով չես բժշկվում: Սակայն փութա՛, մի՛ հապաղիր, զարթնի՛ր դառնանիրի քնից, դարձի՛ր կորստական ճանապարհից, փարատի՛ր անգիտության խավարը, սթափվի՛ր անզգամ մոլորությունից և ուշքի՛ եկ, թոթափի՛ր մեղքերիդ սաստկությունը, թեթևացրո՛ւ անօրենության բեռներիդ ծանրությունը, քավի՛ր հանցանքներիդ անթիվ բազմությունը, բժշկի՛ր չարաչար վերքերիդ

խոցվածքները և լվա՛ ամբարշտությանդ տիղմի ժանտահոտությունը, որպեսզի սրբված և մաքրված հոգով, լուսազարդված և մեծապայծառ մարմնով կարողանաս համարձակադեմ և զվարթերես անցնել տիեզերական ահեղ և անթիվ բանակների միջով, կանգնել Աստծո ահավոր ու մեծ Բեմի առաջ և լսել Նրանից երանության քաղցրալուր բարբառը և աշխարհատես հրապարակի ավետիսը, թե՝ «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալնե՛ր, և մտե՛ք, ժառանգեցե՛ք երկնքի բարության վայելչությունը՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ» (Հովհան Մանդակունի):

75.Դու մի՛ հուսահատվիր մարդասեր Աստծո ողորմությունից, այլ հիշի՛ր, թե քանի՞-քանի՞ մաքսավորներ արդարացան, պոռնիկներ սրբացան, ավազակներ մաքրվեցին և դրախտ մտան (Հովհան Մանդակունի):

76. Ուստի մեղքերի բազմությունից մի՛ երկնչիր ապաշխարության մեջ մտնել, միայն Աստծո առա՛ջ ընկիր. Նա ոչ թե դատավոր է, այլ բժիշկ, ոչ թե սպանող դահիճ է, այլ՝ գորովագին Հայր: Քեզ ընդառաջ է ելնում, ինչպես անառակ որդուն, քո պարանոցով է ընկնում, որ դարձար դեպի ապաշխարություն, երկնավոր Հայրը համբուրում է քեզ՝ բերանը հպելով աչքերիդ, հրամայում է քեզ հագցնել անմեղության առաջին պատմուճանը, ամրացնում է քեզ կոշիկներով՝ թշնամու հետագա թույների դեմ: Կերակրվում ես Որդու Մարմնի Պատարագով, քեզ հետ պատարագից վայելում են ընտրյալ ծառաները, քո անառակությունից դառնալու առթիվ բոլոր սուրբերը երգում և պարում են, որից սարսափած փոքր-ինչ նախանձում է առաջին թլպատված ժողովուրդը՝ չմտնելով Աստծո Որդու զենման ուրախության մեջ. որոնց մոտ ելավ ու եկավ էական Աստված Մարմնով՝ աղաչելու Հորը հավատացող հրեային, հավատի կոչելու ապաշխարող հեթանոսին և ուրախ լինելու իր անառակ եղբոր դարձով, միասին վայելելու Աստծո Որդու զենումից և ժառանգելու անանց բարիքների վայելչությունը Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ. Նրան փառք և պատիվ հավիտյանս հավիտենից: Ամեն (Հովհան Մանդակունի):

Հայրերի վարքից

1. Եղբայրներից մեկն ասաց հայր Պիմենին. «Հայր, ես մեծ մեղք եմ գործել և ուզում եմ երեք տարի ապաշխարել»: Ծերն ասաց. «Դա շատ է»: Եղբայրը հարցրեց. «Իսկ մեկ տարվա ընթացքո՞ւմ», «Դա էլ շատ է», - ասաց ծերը: Եղբայրը նորից ասաց. «Հայրերը ապաշխարության համար քառասուն օր են նշանակել»: Այդ ժամ ծերը պատասխանեց. «Շատ է նաև դա: Ես հավատում եմ, որ եթե մեղք գործողը ամբողջ սրտով զղջա և այլևս չընկնի այդ մեղքի մեջ, ապա Աստված նրա ապաշխարությունը երեք օրում էլ կընդունի» («Հարանց Վարք»):

2. Եղբայրը հարցրեց հայր Սիսոյին. «Հայր, ի՞նչ անեմ, ընկել եմ»: Ծերը պատասխանեց. «Վե՛ր կաց, կանգնի՛ր»: Եղբայրն ասաց. «Ես վեր կացա, բայց նորից ընկա»: Ծերն պատասխանեց. «Նորից վեր կաց»: Եղբայրը հարցրեց. «Մինչև ե՞րբ վեր կենամ ու ընկնեմ»: Պատասխանեց նրան ծերը. «Մինչև կյանքիդ վերջը» («Հարանց Վարք»):

3. Երբ հայր Ագաֆոնի մահվան ժամանակն եկավ, նա երեք օր բաց աչքերով անշարժ պառկեց անկողնում: Եղբայրները հարցրեցին նրան. «Հայր, որտե՞ղ ես հիմա դու»: Նա պատասխանեց. «Աստծո դատաստանի առջև եմ կանգնած»: Եղբայրները ասացին. «Մի՞թե դու էլ ես վախենում, հայր»: Պատասխանեց ծերը. «Չնայած ամեն ջանք արել եմ, որ կատարեմ Աստծո պատվիրանները, բայց ես մարդ եմ ու չգիտեմ, արդյոք Աստծուն հաճելի՞ են եղել իմ գործերը, որովհետև ուրիշ են Աստծո դատաստանները և ուրիշ են մարդկանցը»: Երբ եղբայրները նորից էին ուզում հարց տալ, նա ասաց. «Ներողամիտ եղեք ու մի խոսեք ինձ հետ, որովհետև զբաղված եմ»: Այս ասելով նա ուրախությամբ ավանդեց հոգին: Եղբայրները տեսան, որ նա ննջելիս կարծես սիրելիներին ողջունեց («Հարանց Վարք»):

4. Մի ավազակ փախչում էր իր թշնամիներից և տեսնելով, որ արդեն շրջապատվել է, և փրկություն չկա, ընկավ գետին, ձեռքերը վեր բարձրացնելով բազկատարած ասաց. «Արժանի եմ այս մահվանը, որովհետև բազում և պես-պես անօրինություններով բարկացրեցի Աստծուն»: Եվ լացով խոստովանում էր իր բոլոր մեղքերը՝ մեծ աղաչանքով խնդրում էր հետապնդողներին, որ Աստծու կողմից վրեժխնդիր լինեն իր յուրաքանչյուր անդամի համար՝ չարչարանքով մաշեցնելով նրանց: Եվ հայտնություն եղավ մի ճգնավորի, որը մեծ ժուժկալությամբ և ապաշխարությամբ ապրում էր մոտերքում: Նա տեսավ, որ հրեշտակների գնդերը ավազակի հոգին փառքով երկինք տարան: Ճգնավորը չփառավորեց Աստծուն այս բանի համար, այլ նախանձով լցված զայրացավ և թողեց իր խուցը, գնաց աշխարհ, այսպես ընկավ սատանայի ճիրանները և կորցրեց իր թշվառ հոգին: («Հայելի վարուց»)

5. 390 թվականին մեծ խռովություն ծագեց Թեսաղոնիկե քաղաքում:

Երբ, չարախոսություններով հանդերձ, լուրը Թեոդոս թագավորի ականջը հասավ՝ բարկությամբ լցված՝ զորք ուղարկեց Թեսաղոնիկեի վրա:

Նրանք գազանաբար հարձակվեցին թե՛ փոքրերի, թե՛ մեծերի, թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, ծերերի և մանուկների, բնիկների և եկվորների վրա, և անխտիր կոտորեցին անմեղին ու մեղավորին, սպանեցին յոթ հազար հոգի և վիրավորեցին շատ ուրիշների: Եվ սուգ պատեց ողջ քաղաքը:

Մի որոշ ժամանակ անց Թեոդոսը գնաց Իտալիայի Միդուլե (Միլան) քաղաքը և, ըստ սովորության, ուզեց եկեղեցի մտնել: Այդ պահին նրա առջև ելան քաղաքի եպիսկոպոսն ու քաջ հովիվ Ամբրոսիոսը: Նա, բռնելով թագավորի ծիրանին, կանգնեցրեց տաճարի արտաքին սրահում և չթողեց,

որ տրորի Աստծո տան հատակը՝ ասելով.

- Ո՞ւր ես գնում, այր արյունարբու, չե՞ս ամաչում, որ արյունով շաղախված, ուզում ես Աստծո տաճարը մտնել ու տրորել սուրբ եկեղեցու գավիթը: Չգիտե՞ս քո գործած անիրավությունները, թե՞ արքունականի փառքն է կուրացրել հոգուդ աչքերը, որ այլևս երկինք չնայես և չտեսնես արդարադատ Աստծո վերին դատաստանը: Եվ ի՞նչ աչքով պիտի համարձակվես նայել Տիրոջ սուրբ տաճարին և անմեղների արյան մեջ թաթախված ձեռքերդ վեր բարձրացնես՝ աղոթելու համար: Կամ ինչպե՞ս պիտի պիղծ ձեռքերով ընդունես Տիրոջ պատվական մարմինը և ինչպես պիտի քո շրթունքներին մոտեցնես Աստծո Որդու արյունը, դու, որ բարկությանդ մեջ այդքան արյուն թափեցիր: Դարձի՛ր, ե՛տ դարձիր և ընդունիր այն կապանքները, որ Աստված է տալիս քեզ իմ բերանով, մինչև որ Երկնավոր Բժշկի կողմից քո թարախոտված վերքերը ապաքինվեն:

Թագավորը սարսռեց Աստծո մարդու կրակոտ խոսքերից և ամոթահար ետ դարձավ՝ գլխիկոր ու հեծեծանքներով, ու ասաց.

- Հնազանդ եմ քո աստվածադիր հրամաններին, ո՜վ սուրբ հայրապետ. միայն թե թող, որ ինձ ապաշխարության տեղ տրվի:

Այդ պահին բոլոր ներկա գտնվողները սքանչացան և չգիտեին՝ սուրբ հայրապետի աներկյուղ համարձակության վրա՞ զարմանան, թե՞ աստվածասեր թագավորի խոնարհ հպատակության:

Այս դեպքից ութ ամիս էր անցել, երբ եկավ Քրիստոսի հրաշափառ Ծննդյան տոնը, և մինչ հավատացյալների բազմությունը խուռներամ գնում էր դեպի եկեղեցի, Թեոդոս արքան պալատի մեջ նստած դառնապես լալիս էր: Երբ Ռուփինոս Մագիստրոսը (կառավարիչը) ներս մտավ, թագավորին տեսավ ողբի ու արտասուքի մեջ, ասաց նրան.

-Թագավոր իմ, ինչո՞ւ ես լալիս:

Թագավորը հառաչելով պատասխանեց.

-Ինչո՞ւ ես հարցնում իմ դառնացած հոգուն, իբրև թե տեղյակ չես իմ անտանելի ցավերին: Ահա իմ ծառաներն ու երկրի մուրացիկներն ազատ են, իսկ ես՝ թագավորս, կապված եմ երկնքի մեջ և երկրի վրա, քանի որ լավ գիտեմ տերունական հրամանը՝ թե նա, ում կկապեք երկրի վրա, կապված կլինի նաև երկնքում, դրա համար երկնքի դռներն էլ առջևս փակված եմ տեսնում, ինչպես որ երկրի վրա՝ Աստծո տան դուռը: Այսօր տեսնում եմ ահա, որ ամեն մարդ Աստծո տունն է մտնում ու վայելում է օրվա տոնի երկնավոր պարգևները, և ես եմ միայն զրկված Աստծո շնորհներից:

Ռուփինոսն ասաց.

-Արքա՛, անմիջապես հայրապետի մոտ կգնամ և կաղաչեմ նրան, որ կապանքներդ բացի: Ութ ամիս չանցա՞վ ապաշխարությունիցդ:

- Ոչ, այդպես չի լինի. ես անձամբ պիտի գնամ իմ հովվի և հոգուս տեսուչի մոտ և նրանից պիտի առնեմ հանցանքներիս արժանի նախատինքը:

Հասնելով եկեղեցու սրահը, թագավորը ներս չմտավ, այլ դռնից դուրս մնալով բարձրաձայն գոռում էր և կապանքների արձակում էր խնդրում: Իսկ սուրբ հայրապետը, որ նստած էր եկեղեցու ատյանում, թագավորի ձայնից դուրս եկավ ու ասաց նրան.

-Ամբարտավանորեն հանդգնում ես բռնի մտնել Աստծո եկեղեցին և ոտնակոխ անել Տիրոջ օրենքնե՞րը:

Եվ թագավորը ասաց.

-Ո՛չ, հայր սուրբ, առանց քո կամքի ոչինչ չեմ անի: Միայն աղաչում եմ, արձակես ինձ մեղքի կապանքներից ու իմ առջև չփակես տաճարի դուռը, որ Աստված բացեց բոլոր ապաշխարողների առջև:

Ամբրոսիոսն ասաց.

-Դու ի՞նչ ապաշխարություն ես ցույց տվել, որ ես քեզ ցույց տամ Աստծո եկեղեցին: Եվ ի՞նչ դեղ ես առել կարեվեր խոցերդ բժշկելու համար:

Թագավորն ասաց.

-Դո՛ւ պետք է ցույց տաս դեղը և պատրաստես սպեղանին, իսկ ես պարտավոր եմ առանց դիմադարձության ընդունել այն: Պահքերը, աղոթքներն ու ողորմությունը, որ պատվիրեցիր, հա՛յր, բոլորն էլ ահա, ուր ամիս է կատարում եմ: Եվ ինչ որ պիտի հրամայի սրբությունդ՝ ահա պատրաստ եմ:

Այնժամ սուրբ հայրապետն ասաց նրան.

-Բարկասիրտ ես և խիստ՝ հանցավորների նկատմամբ, և դյուրահավատ՝ զրպարտիչների, վնասախոսների ու քսուների հանդեպ. և դատաստանի վճիռը բարկության թելադրության ներքո ես արձակում, որով ոչ թե բանականությունը, այլ բարկությունն է լինում վճռատու: Ուրեմն քո ձեռքով մի արքունական հրամանագիր գրի, որպեսզի ամբաստանողների չարախոսությունը երեք օր քննվի, և անգամ հայտնի մահապարտներին 30-40 օր պահեն, մինչև որ հարցուփորձ անեն ամեն բանի մասին, և քո խիղճն էլ հանդարտվի: Եթե այդքան ժամանակ անցնելուց հետո ուրիշ համոզման գաս, ծանր թող չթվա քեզ նախապես տված վճիռդ բեկանել: Եվ այս օրենքը պետք է պահեն նաև այն բոլոր դատավորներն ու իշխանները, որոնք քո հրամանի տակ են:

Երբ Թեոդոս արքան լսեց այս ամենը, զարմացավ սուրբ եպիսկոպոսի իմաստուն խրատների վրա, և անհապաղ նրա պատվերը գործի դնելով՝ հրովարտակներ գրել տվեց ու իր ստորագրությամբ վավերացնելով՝ ուղարկեց բոլոր դատավորներին:

Ապա եպիսկոպոսը թագավորի կապանքներն արձակեց ու եկեղեցի մտնելու հրաման տվեց:

Թագավորը ներս մտավ ահով և դողով և երեսի վրա ընկնելով՝ արցունքներով թրջեց տաճարի հատակը: Եվ աղոթք անելով՝ Դավթի ձայնով ասում էր.

-Իմ անձը հողին մերձեցավ, Տեր, ապրեցրու ինձ Քո խոսքիդ համաձայն:

Այս ասելով կուրծքն էր ծեծում ու ճակատին էր խփում. մազերն էր

պոկոտում՝ Աստծուց թողություն խնդրելով:

Ժողովրդի բազմությունն այս տեսնելով ձայնակցում էր գորովագին և դառնապես լալիս էր թագավորի հետ:

Այս ասելով՝ թագավորը խոնարհությամբ ու զվարթ դեմքով ելավ և ետին տեղերը գնալով՝ ապաշխարողների շարքերում մնաց:

Այսպիսին էր թագավորի հավատն ու երկյուղը առ Աստված և սերն ու հնազանդությունը Նրա քահանաների հանդեպ («Վարք սրբոց»):

Աղոթք

Տե՛ս, Տե՛ր, ողորմելիիս և ողբալիիս, պաղատելիիս և եղկելիիս, ողորմի՛ր ինձ՝ անօրինացածիս, և շնորհի՛ր ինձ գիշերը հորդ արտասուք և առավոտյան՝ շնորհներիդ շողը: Բա՛ց իմ սրտի խավարած աչքը և բժշկի՛ր իմ հիվանդացած հոգին, ընդունի՛ր մեղավորիս դարձը և մի՛ բարկացիր բազմամեղիս վրա, Տե՛ր իմ Հիսուս: Եվ քանզի անթիվ չարիքներ ունեմ, ջնջի՛ր ինձանից և տու՛ր ինձ բարի շնորհները:

Տո՛ւր ինձ, Տեր, ապաշխարության վայր, ճգնության օթևան, խաղաղության հոգի և արդարության ճանապարհ, ամրության սպառազինություն, հաստատության հույս և տոկունության երկյուղ:

Աղբյո՛ւրդ կենդանության, հագեցրո՛ւ իմ ծարավ հոգին Քո առատաբուխ վտակից, որ ցամաքած տոչորվում եմ բազում անօրենություններից: Ցնցի՛ր իմ քարացած սիրտը և ինձանից ապաշխարության արցունքնե՛ր քամիր:

Մի՛ հանդիմանիր ինձ, Տե՛ր, մեծ Օրը ահեղ և մի՛ կանգնեցրու հրապարակի ամոթալի Ատյանում և մի՛ խայտառակիր ինձ, մի՛ կշտամբիր Դատաստանի Ատյանում և մի՛ թող ինձ լսել «չեմ ճանաչում»-ը և ահավոր բարբառն ահաբեկ, որ ասում է. «Գնացե՛ք Ինձանից գեհենի հուրը»: Եվ մի՛ վտարիր ինձ ծույլ և չար ծառայի հետ ու մի՛ մատնիր ինձ անօրեն կապողի ձեռքը, մի՛ դարձրու կերակուր՝ թունավոր որդերին, բորբոքված բոցի մեջ, և մի՛ նետիր ինձ տարտարոսի սառնամանիք խավարը: Այլ փրկի՛ր ինձ հրի սաստիկ կայծակներից, բոցեղեն գետերի արշավանքներից, սաստիկ լալագին ու խիստ տանջանքներից և տարակուսական ողբերից, ատամների կափկափումից ու սարսռելի կսկիծներից, խավարային բոցի տոչորումից և խորովվելուց դժնդակ, դառն աղետներից, բոցածավալ ու պարուրող հրից. և կողկողածայն և անդադար վայից փրկի՛ր և ազատի՛ր ինձ, Տե՛ր:

Եվ այժմ, Տե՛ր, մի սպասիր, այլ փութապես նետի՛ր ապաշխարության և

մաքրողական հրի բովը՝ սրբելով և ազատելով մեղքերից: Մեծ ջերմով եռացրո՛ւ և տո՛ւր հորդ արտասվել, պաղատել ու խնդրել և պատկերի՛ր իմ մեջ նախկին լուսավոր կերպարանքը:

Սրբուհի Աստվածածնիդ՝ միշտ սուրբ Կույսիդ և Հովհաննես Կարապետի, առաջին մարտիրոս Ստեփանոսի, սուրբ Գրիգոր Լուսավորչի և Քո բոլոր սուրբ վկաների բարեխոսությամբ լսի՛ր ինձ՝ եղկելիիս: Եվ ձեռք մեկնի՛ր գլորվածիս, առաջնորդի՛ր մոլորվածիս, հանի՛ր ինձ խավարից դեպի լույս և ազատություն շնորհի՛ր իմ հոգուն: Հաստատի՛ր Քո սիրո մեջ և բևեռի՛ր Քո երկյուղին: Մաքրի՛ր իմ հոգու տաճարը և օթևանի՛ր ինձ մոտ: Փակի՛ր իմ մեղքերի դուռը և շուրջբոլորս պարսպապատի՛ր իմ ոսոխից, չար ու անիրավ մարդուց փրկի՛ր ինձ, առաքինությամբ ազատի՛ր և պարգևի՛ր ինձ Քո անճառ երանությունը: Ողորմի՛ր մեզ՝ ողջերիս և պայծառացնելով լուսավորի՛ր մեր ննջեցյալների հոգիները:

Երբ գաս երկնքից ահեղ փառքով և հրեշտակների անթիվ դասերով, զարհուրելով կդողան ողջ տարերքը, երկնայինները և երկրայիններս, նայելով Քո զորությանը՝ կսարսեն անմահ Թագավորիդ անճառ Դատաստանիդ և աններելի պատուհասիդ ահեղ փառքից:

Այն Օրը և ինձ ընդունիր, Տե՛ր, Քո արդարների և կատարյալների հետ, կարգի՛ր աջակողմյան դասում, պակի՛ր Քո սուրբերի հետ, շնորհի՛ր ինձ հավիտենական կյանքը և պարգևի՛ր ինձ Քո անճառ բարիքները... և զուգահավասար դարձրու՛ Քո սուրբերին՝ միշտ արժանավայել օրհնաբանելու, հանապազ պայծառացրու՛ Քո աստվածային անստվեր լույսով: Եվ անդադար երգով կփառավորեմ Ամենասուրբ Երրորդությանդ այժմ և հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):

Սուրբ Հայր Եփրեմ Խուրի Ասորու Ապաշխարության հորդորակը

1. Այսպես է ասում երանելի մարգարե Եզեկիելը. «Եթե անօրենը իր գործած անօրենություններից ետ դառնա և արդարություն և ողորմություն անի, ապրելով կապրի և չի մեռնի»: Իր կատարած բոլոր հանցանքները և գործած անօրենությունները չի հիշեցվի, այլ ողորմությամբ, որ արել է՝ պիտի ապրի:

Սրա համար զանց արեք ձեր զբաղվածությունները, փութացեք հասնել ամենակալ Հոր առատաձեռն Որդուն, Որի անունն է՝ Կյանք, Լույս և Փրկիչ: Որին հավատացիք և մկրտվելով՝ լուսավորվեցիք: Ով Հորից առնում և յուրայիններին է հագցնում. «Փառքը, որ տվեց ինձ, տվեցի նրանց»: Որ բռնելով յուրայինների ձեռքից, մտցնում է ամենակալ Հոր մոտ. «Կամենում եմ, որ ուր ես լինեմ, սրանք էլ այնտեղ ինձ հետ լինեն»:

Ո՞վ հրաշալիք, ով Ավետիս երջանկության, ով անչափ մարդասիրություն:

Մատթեոսը, որ երեկ մաքսավոր էր կողոպտիչ և անողորմ, այսօր ելած բազմել է երկնքում, Պետրոսը՝ ուրացողը Հիսուսի, այսօր փառավորվում է փառքի լուսեղեն գահին բազմած: Պողոսը, որ հալածիչ էր և հայհոյիչ եկեղեցու, այսօր անճառելի փառքը մտնելով, հանգչում է Աստծու մոտ:

Էլ ինչու ե՞ք դանդաղում, փութալով ելեք դեպի այսպիսի ողորմած Տերը, մի՛ հեղգացեք, և մի՛ հապաղեք: Ավելի արագ և ավելի ջանքով պետք է ընկնել նրա գթության և մարդասիրության առջև, թեկուզ պետք լինի դրա համար անցնել բազում երկրներով և գավառներով:

2. Նա՝ գիտենալով մեր հեղգությունը և անփույթ ծուլությունը, դուրս է գալիս, մոտենում շեմին, ձայնում է մեզ՝ ուժգին գոչելով. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես ձեզ կհանգստացնեմ: Վարանյալներ և ծանձրացողներ, հանգիստ կգտնեք ձեր անձերին, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև: Ոչ պահանջող եմ և ոչ էլ՝ դատող, ոչ՝ կշտամբող և ոչ՝ հանդիմանող, միայն թե շարժիր լեզուդ և խոստովանիր ինչ որ արել ես. բեռն իմ փոքր է, թեթև, անաշխատ, եթե կամենաս՝ դյուրին կտանես: Իսկ դու ինչո՞ւ ես տարակուսում, դանդաղում և վախվորում, կարծես թե մեծ տանջանքների մեջ ես մտնելու և կամ նեղության, կամ վտանգի և չես ուզում շտկվել:

Դարձյալ նայելով մեր տկարությանը, հարցնում է՝ ցույց տալով ամենակալությունն Իր. «Ի՞նչ ես կամենում, ո՞րն է քո բաղձանքը, հիվա՞նդ ես դու, բժիշկ եմ ես ճարտար, առողջներին պետք չէ բժիշկ, այլ հիվանդներին: Ձրի եմ բժշկում և չեմ պահանջում քեզանից ոչինչ, ոչ վաճառականի մոտ եմ ուղարկում՝ ունեցվացքդ վաճառելու, ոչ ուրիշներից մի բան աղերսելու: Մտիր միայն քո սրտիդ սենյակը և տուր արտասուք ինձ կարողությանդ չափ, մի կաթն էլ բավ է քեզ մկրտելու և երկրորդ անգամ արժանացնելու առաջին փառքին: Թե մեղավոր ես՝ ողորմած եմ ես, չեկա կանչելու արդարներին, այլ մեղավորներին՝ ապաշխարության: Ովքեր ինձ դարձան՝ նրանք չամաչեցին: Եվ նրանցից չկորսվեց ոչ-ոք, այլ միայն նրանք, ովքեր շեղվեցին ճշմարտությունից:

Մաքսավորին իր մի խոսքով ես արդարացրի, պոռնիկին իր արտասուքով սրբագործեցի և բժշկություն ու ողորմություն ամենքին պարգևեցի:

Ես, երեք անգամ ինձ ուրացողի՝ Պետրոսի դառնապես հեղած արցունքները տեսնելով, ողորմեցի. ինձ մոտ կանչեցի և առաքյալների կարգի մեջ նրան պահեցի: Ինձ ձաղկեցին և խաչեցին, դատապարտեցին, իսկ ես խաչ հանողների համար աղոթք էի անում: Նրանք բարկությամբ և ցասումով իրենց գլուխներն էին շարժում, իսկ ես քաղցրությամբ և ողորմությամբ թողություն էի խոստանում:

Եվ ահա ինչ եղավ վախճանը, բոլոր հեթանոսներին կանչեցի որդեգրության, օտար ոչխարներին իմ սրբության գավիթում հավաքեցի, և եղավ մի հոտ և մի հովիվ: Եվ Ես նույնն եմ երեկ, այսօր և հավիտյան:

3. Ծարա՞վ ես՝ մի՛ դանդաղիր: Ես եմ աղբյուրը կենաց և քաղցրաբուխ և անուշաճաշակ: Թե մեկը ծարավ է, թող գա ինձ մոտ և խմի, և ով որ խմի՝ հավիտյան չի ծարավի, այլև նրա որովայնից կենդանի գետի ջրեր կբխի: Քաղցա՞ծ ես՝ մի հեռացիր, Ես եմ հացը կենաց, երկնքից իջած, թե մեկը ուտի՝ կապրի հավիտյան:

Մերկացա՞ր, ով մեղավոր, Ես քեզ համար պատմուճան եմ և վերարկու, միայն թե չարիքներիցդ հեռացիր և ես կհագցնեմ քեզ հանդերձն առաջին, որովհետև, եթե Քրիստոսով եք մկրտված, Քրիստոս եք հագած:

Եթե կոշիկի կարիք ունենաս, Ես կհագցնեմ քեզ կոշիկներ լավագույն,

որով կկոխոտես օձերին, կարիճներին և թշնամու բոլոր զորություններին:

Եթե դարձար մեղքերի ծառա, Ես քեզ կազատեմ, քանի որ, ով մեղք է գործում, ծառա է մեղքին, իսկ եթե ձեզ ազատի Որդին Աստծո, ճշմարտապես ազատ կլինեք:

4. Ով մեղավոր, խուսափում ես իմ ահեղ և հրատեսիլ զորությունից, մի երկնչիր, օտար չեմ, ազգականն եմ քո, Որդին եմ Դավթի, թոռն Աբրահամի, խոսակից և մարմնակից եմ քեզ և ապա, ասա ինձ, ինչ բարի բան որ կամենում ես քեզ համար, և ես կկատարեմ անհապաղ, քանի որ չեկա, որ ինձ ծառայեն, այլ ձեզ ծառայելու և բազմաց փրկության համար իմ անձը մատնելու:

Ի՞նչ ես կամենում, որ ես անեմ քեզ համար, ասա ինձ, չեմ հրաժարվի, քանի որ սովոր եմ անել: Եթե ինձ մահվան մատնողի ոտքերը լվացի և չզլացա, ապա որչափ առավել ինձ խոստովանողիդ գլուխը և ոտքը կըլվամ առանց դանդաղելու: Այլ բաներից չեմ լվանում, այլ մեղքերդ եմ սրբում ու վերստին մաքրում: Դու արտասուքի մի շիթ հեղիր կոնքի մեջ, և Ես իմ շնորհը կհեղեմ քեզ վրա, ավելի հորդառատ, քան ջրերը Հորդանանի, և կլուսավորեմ ավելի պայծառ, քան առաջին մկրտությունդ:

Ով մեղավոր, հաճախ մեղանչեցիր, զազրացար, երկնչեցիր քննողիցս, մի կապիր խոստովանությունդ, և Ես կարձակեմ բարերարությունս, ինչպես Պետրոսին չափ սահմանեցի, նորից քեզ համար էլ այն կսահմանեմ: Կամենում ես, որ հաշտվե՞մ քեզ հետ, հեռացիր չար սովորություններից, և Ես կհեռանամ իմ ցասումից:

Դու խնդրում ես քո յոթնյակ մեղքերի համար թողություն: Ես կպատասխանեմ քեզ. յոթանասուն անգամ յոթին էլ կշնորհեմ թողություն, քանի որ այն, ինչ-որ ելավ իմ բերանից, սուտ չի կարող լինել:

Ճահաչիր չափդ, իմացիր վիճակդ և հաշիվդ և մի տրտնջա տանտիրոջիցս: Կամենո՞ւմ ես թողնեմ պարտքերդ, ժլատ չեմ, այլ առատ, ընչավետ Հոր մեծատուն Որդի, տոկոս չեմ դնում, պարտապանիցդ պարտքս չեմ պահանջում, չեմ ճնշում, դու միայն հանձն առ և խոստովանիր, ինչ-որ գործել ես, և Ես չորս հարյուր հիսուն քանքարդ կթողնեմ և կարձակեմ քեզ ուրախ:

5. Ով մեղավոր, ինչո՞ւ ես փախչում ինձանից, որովհետև շատ մեղանչեցիր, եկ ինձ մոտ, իմ ողորմելի որդյակ, չեմ բարկանա, չեմ մեղադրի, քանզի իմ ստեղծածն ես, իմ պատկերն ես, իմ նմանությամբ, իմ անարատ ձեռքով ստեղծված: Եվ դրա համար խնայում եմ, չեմ եղծանում պատկերդ, չեմ անարգում ստեղծվածդ, չեմ ապականում նմանությունս, որովհետև ողորմած և գթած եմ, երկայնամիտ և բազմողորմ, դժվարին բան չեմ խնդրում քեզանից, ինչո՞ւ ես տարակուսում, միայն դարձիր ինձ, և Ես կդառնամ քեզ, միայն փութա ապաշխարության, միայն խոստովանիր մեղքերդ, միայն ասա՝ «մեղա», իմ

առաջ ընկնելով, և ես փառքով կպատվեմ քեզ:

Արդ, արի ինձ մոտ և մի ամաչիր, քանզի չեմ հայտնի մեղքերդ, չեմ անգոսնի գործողիդ, չեմ հանդիմանի մեղավորիդ, խայտառակությունդ երես չեմ հանի, բազում չարիքներդ չեմ հիշի, թշվառացածիդ չեմ մեղադրի, այլ կողորմեմ հանցավորիդ, այլ կգթամ կողոպտյալիդ, այլ կկենդանացնեմ մեռյալիդ:

Քո անդարձությամբ մի տրտմեցրու Արարչիդ, մեղքերդ մի պատճառաբանիր, մի արդարացիր, ապաշնորհ մի անիր իմ մարդասիրությունը, մի խանգարիր իմ արարչությունը, ինձ իմ տաճարից դուրս մի պահիր, մի զրկիր ինձ իմ բնակությունից, մի կողոպտիր իմ ստացվածքից, թափուր մի թողնիր ինձ իմ գանձից:

Ոչ թե ուրիշ մի բանով, այլ իմ Արյունը տվեցի որպես գին, և նրանով ճշմարտապես ստացա քեզ: Եվ եթե նայես ինձ, սուգ ունեմ քո կորստյան համար, զղջա քո չարությունը, այնպես ծարավ եմ քո փրկությանը, ինչպես եղջերուն՝ աղբյուրի ջրերին:

6. Ով մեղավոր, շնորհիր ինձ իմ խնդրանքը,
Տուր ինձ, ինչ որ կամենում եմ՝ ապաշխարություն,
Տուր ինձ, ինչ որ սիրում եմ՝ զղջում,
Տուր ինձ, ինչ որ ցանկանում եմ՝ մի կաթիլ արցունք,
Տուր ինձ, ինչ որ փափագում եմ՝ հոգոց սրտի խորքից,
Տուր ինձ, որից ուրախանում եմ՝ ձեռքերիդ բարձրացումը և մատներիդ տատանումը,
Տուր ինձ, ինչից որ ցնծում եմ՝ բերանով խոստովանելդ, և ես սերովբեներին և քերովբեներին հավասար կբարձրացնեմ քեզ:

Արդ, ասա ինձ, ի՞նչ վնաս եմ արել քեզ, որ այսքան սուգի և լացի մեջ ես պահում ինձ, քո Արարչին՝ չարիքից քո ետ չդառնալով: Նրա համա՞ր, որ անգոյությունից գոյացրի, որ անկենդաններից քեզ առանձնացրի, անասուններից բաժանեցի, որ մարդ արարեցի, որ իմ նմանությամբ ստեղծեցի, որ ձեռքերովս արարեցի, որ ինձ պատկերակից անվանեցի, որ բանականությամբ պատվեցի, որ իմաստությամբ զարդարեցի, որ բազում խելամտություններով ճոխացրի, որ տարբեր արհեստներով լիացրի, որ իշխանությամբ մեծացրի, որ ամենայնի վրա կարգեցի, որ երկինքը լուսավորներով, օդը թռչուններով, ծովը ձկներով և բույսերով քեզ հնազանդության և վայելչության համար տվեցի, և այժմ այս ամենի հետ էլ խոստանում եմ հավիտենական կյանք և երկնքի արքայությունը:

7. Արդ, հարցնում եմ քեզ, քաղցրությամբ և ոչ խստությամբ, ով մեղավոր, հիմա ասա ինձ, քեզ վնասակա՞ր եմ, թե՞ երախտավոր: Թե արդարությամբ խոսես, երախտավոր եմ, ոչ թե վնասակար, իսկ եթե երախտավոր եմ, ապա ինչո՞ւ ես միաբանվել իմ թշնամի սատանայի հետ և խոցում ես լարդս ամեն օր քառասայր սրով:

Իմացիր և հասկացիր, որ մեղավորի մեղքերի սուրն ավելի է ինձ խոցում և վիրավորում, քան կողքիս բացվածքը, որ գեղարդով խոցեցին խաչի վրա:

Սաստիկ կսկծեցնում է ավելի, քան խաչը հանողների մեխերը, որով մեխեցին ձեռքերս և ոտքերս: Ուժգին մորմոքեցնում է ինձ մեղքերի սուրը մեղավորի ավելի, քան փշե պսակի ծակծկոցը գլխիս, որ կսկծեցնում էր՝ հասնելով մինչև ոսկորս և ուղեղս: Առավել դառնացնում է քիմքս մեղավորի դառնությունը և գարշահոտությունը, քան լեղին և քացախը, որ խաչի վրա խմեցի: Գիտեմ, որ խաչը հանողների խմբին ատում ես և անարգում, նույնիսկ կամենում ես սպանել, քանի որ Տիրոջդ են խաչ հանել, և դու անմտությամբ ամեն օր ես նրանց գործը անում՝ իմ դեմ չարաչար մեղանչելովդ: Արդ, դադարեցրու չարությունդ և եկ զղջման, իմ սիրելի որդյակ, որպեսզի դառնության բաժակը, որ նրանց եմ խմեցնելու, քեզ չպարտադրեմ:



8. Ո՛վ դաս մեղավորների, ասացեք ինձ, ի՞նչ չար բան արեցի ես մարդկանց, որ այսպես երես եք շրջել ինձանից՝ ձեր քաղցրաբարո Արարչից, ինչպես թշնամուց: Արդյո՞ք մարդը չէր, որ ոտնահարեց հրամանը Արարչի և ցանկացավ աստվածանալ, իսկ ես նրա փոխարեն մարդ եղա և աստվածացրի մարդուն:

Մարդը չէր արդյո՞ք, որ մերձեցավ ծառին, և ես փայտե խաչին ինձ բարձրացրի:

Մարդը չէր արդյո՞ք, ոտքով ընթացավ, և ես ոտքերիս մեխեր ընդունեցի:

Մարդը չէր արդյոք, ձեռքը երկարեց ծառին, և ես ձեռքերս խաչին տարածեցի:

Մարդը չէր, որ քաղցրացավ պտղից, և ես քացախ և լեղի խմեցի:

Մարդը չէ՞ր արդյոք, որ իր կողակցին հավատաց և կերավ պտուղը, և ես կողս նրա համար խաչի վրա բացեցի:

Մարդը չէ՞ր, որ անեծքի գործ կատարեց, և ես նրա համար անեծք կոչվեցի:

Մարդը չէ՞ր, որ մեղա չասաց, և ես խաչի վրա «էլի, էլի»՝ Հորս գոչեցի:

Մարդը չէ՞ր, որ մահվան դատապարտվեց, և ես խաչի մահը հանձն առա: Եվ դուք, մեղավորներ, այսքան բարերար ձեր Արարչից երես եք դարձնում, որ քաղցրությամբ աղաչում եմ գալ ձեզ զղջման և ապաշխարության, որպեսզի թողություն ստանաք:

9. Ո՛վ մեղավոր, իմ դատաստանը տամ քո ձեռքը, և դու դատիր ինձ, եթե ես քեզ չեմ սիրում, դու էլ ինձ իրավունք ունես չսիրելու, իսկ եթե սիրում եմ, ինչո՞ւ ես փախչում ինձանից: Իսկ եթե մտքումդ ասես, թե կատարյալ չես սիրում ինձ, իմացիր, կարծիքդ ճիշտ չէ, որովհետև ամբողջ աշխարհը քեզ համար ստեղծեցի, դրախտը քո համար հորինեցի, երկնքի արքայությունը քո համար պատրաստեցի, ընկած հրեշտակների տեղը քո ժառանգության համար թողեցի, միայն դու դարձիր մեղքերից, և ես կարժանացնեմ քեզ, որ տեսնես և վայելես այդ ամենը իմ հրեշտակների հետ:

Տես, քեզ համար երկնքից երկիր խոնարհվեցի, Աստվածս մարդ եղա և Տերս՝ ծառա, քեզ համար ատյանում կանգնեցի իբրև չարագործ, հրեաներից դատապարտվեցի, Պիղատոսի կողմից գանահարվեցի, Հերովդեսից ծաղրվելով՝ արհամարհվեցի: Քեզ համար զինվորներից ծաղկվեցի, ծառաներից ապտակվեցի, քահանաներից երեսիս թուք ընդունեցի, ժողովրդից նախատվեցի: Քեզ համար խաչը ուսիս բարձած հանեցի Գողգոթա, քո սիրո համար հայհոյվեցի թշնամիներից և խաչվեցի: Քեզ համար մեխվեցի և տեգով խոցվեցի, փշե պսակ դրեցի, քացախ և լեղի խմեցի, նախատինքների հագուստ հագա, աստվածային գլուխս խոնարհեցրի, հոգիս Հոր ձեռքը ավանդեցի: Քեզ համար մարդկանցից պատանքվեցի, մարմնով գերեզման իջա, հոգով դժոխք գնացի և բանտարկված հոգիները ազատեցի, երրորդ օրը հարություն առա և քեզ մեղքերի մահվանից հարություն տվեցի:

10. Ով մեղավոր, տես, թե ինչպիսի սիրով սիրեցի քեզ, որովհետև, այնժամ որ քեզ համար մահը կրեցի խաչի վրա, Հայրս սրտնեղում էր, և Սուրբ Հոգին տրտմում էր մարդ ստեղծվածի համար: Ի՞նչ կասեք հրեշտակների դասին, գիտե՞ք, թե ինչպիսի անտանելի սուգ եղավ նրանց մեջ, քանզի կիզվում էր երկինքը երկնավորներով, երբ տեսնում էին իրենց Ստեղծիչին խաչի վրա մահացած: Եվ թե ինչպես արարածները սուգ էին անում, ողբում էին անմխիթար, երբ տեսան իրենց Արարչին՝ մերկացած խաչի վրա, և մահը հանձն առած: Արեգակը, լուսինը աստղերով հանդերձ, իրենց լույսից մերկացան և խավար հագան, և երկիրը հիմքից սասանվեց և դողաց, քարերը բացվեցին, և տաճարի վարագույրը պատռվեց երկու մասի, և մեռյալները գերեզմանում հանգիստ չկարողացան մնալ, այլ հարուցյալ, ողբում էին արարածների հետ և վկայում էին իմ հարության համար:

11. Գիտե՞ս արդյոք, թե գիշերը, որ բռնվեցի, որքան սուգ ու լաց կար իմ սիրեցյալ աշակերտների մեջ, և տես սուրբ առաքյալների սաստիկ տրտմությունը, քանզի մինչդեռ զինվորները չէին բռնել իրենց վարդապետին, նրանք չին կարողանում արթուն մնալ, այլ խիստ տխրությունից ընկան խոր քնի մեջ, ինչպես թմրածներ: Իսկ ես հեռացա նրանցից՝ քարընկեցի չափ և Հորն էի աղոթում:

Իհարկե, մարդ, երբ մահվան երկյուղ է կրում, քրտինքը որպես ջուր է հոսում, իսկ ես քո սիրո համար թույլ տվեցի մեծ երկյուղի մեջ ընկնել իմ Աստվածային մարմնին, և քրտինքն իմ արյունախառն վտակ-վտակ իջնում էր իմ ճակատով, և մարմինս սասանվում էր ահավոր երկյուղից և դողում էր ոտից գլուխ: Ես երեսնիվայր գետին ընկած բարձր ձայնով գոչում էի առ Հայր և աղոթում՝ ասելով, եթե հնարավոր է՝ հեռացրու այդ բաժակը ինձանից:

12. Ո՛վ մեղավոր, իմացիր, թե ինչքան սիրեցի քեզ, քանի որ այն ժամանակ, երբ հրեաները պաշարեցին ինձ սրերով և բրիչներով, ջահերով և լապտերներով, չկարողացան ինձ ճանաչել, որովհետև այնքան ծարավ էին իմ արյանը, որ ուղարկեցին նրանց ինձ բռնելու համար, որոնք ծանոթ

չէին իմ հրաշագործություններին և ինձ, որ չլինի՞ թե ինձ ողորմեն և ազատ արձակեն:

Իսկ ես հարցրեցի նրանց քաղցր ձայնով՝ ո՞ւմ եք փնտրում, և նրանք ասացին՝ Հիսուսին, ասացի՝ ես եմ, իսկ նրանք իմ ահից ընկան գետին: Եվ ես գթալով վեր կացրի նրանց, իսկ նրանք ինձ չողորմեցին: Խփեց Պետրոսը սրով, քահանայապետի ծառայի ականջը կտրեց, իսկ ես Պետրոսի սուրը ետ դարձրի, և կտրված ականջը տեղը դրեցի ու բժշկեցի, և սրանից հետո էլ չգթացին ինձ:

13. Եվ ինչ ասեմ նրանց՝ անողորմ բարքի համար, քանզի այն անդամալույծը, որ երեսունութ տարի մնացել էր Բեդհեզդայի սրահում, քանի որ տեր չուներ, որ ջուրը մտցնեին՝ բժշկվելու համար, մինչ ուրիշները վաղուց սուզվել էին ջուրը և բժշկված գնացել, իսկ ես՝ տեսնելով նրա տառապանքները, գթացի նրան և ողորմեցի, և բժշկելով՝ առողջացրի: Եվ ես նրան դարձյալ տեսա տաճարի մեջ և պատվիրեցի՝ ասելով. «Այլևս չմեղանչես, որ քեզ մի էլ ավելի չար բան չպատահի»:

Իսկ այն գիշերը, երբ դեռ զինվորները դուրսն էին և չէին մոտեցել ինձ, այն անդամալույծը ինձ տեսնելով՝ ճանաչեց, որովհետև բժշկել էի, իսկույն թռիչքով հասավ ինձ և առաջին ապտակը ինքը խփեց երեսիս, և ես ոչինչ չարեցի նրան, որովհետև մարդասեր եմ, այլև նրա զղջալուց արժանացրի իմ երկնային արքայությանը:

Արդ եթե նա այսպես վարվեց ինձ հետ, ապա անծանոթ հրեաները և զինվորները ի՞նչ կանեին ինձ այն գիշերը, և քո՝ մեղավորիդ, սիրո համար այսքան համբերեցի, և դու այսպիսի բարի Արարչից երես ես դարձնում և դառն սուգի մեջ ես պահում ինձ:

14. Ո՛վ մեղավոր, տես իմ սերը քո վրա: Այն ժամանակ, երբ բռնեցին ինձ, աշակերտներս ինձ մենակ թողեցին և փախան: Գառը մենակ էր և գայլերը՝ շատ, գառնուկը մեկ էր և արնախումները՝ շատ, անապատի անմեղս մենակ էր և շնաբարո որսողները բազում, պարարտ եզը մի էր, և մորթողները՝ շատ, արդար աղավնիս մենակ էր, և վայրի թռչունները՝ անթիվ, ողջախոհ տատրակս մեկ էր, և սևամորթ ագռավները՝ բազմերամ:



Ասեմ նաև այն, թե ինչ արեցին այն ժամ: Նախ՝ մերկացրին իմ անկար պատմուճանից, ապա հանեցին իմ պարեգոտը, բացին գլուխս, կապեցին ձեռքերս թիկունքիս, պարան գցեցին պարանոցիս և սկսեցին տանել, և թե ինչպես՝ լսիր: Նրանք, որ առաջն էին, ինձ քարշ էին տալիս երեսիս վրա, իսկ որոնք որ ետևն էին, ծաղկում էին թիկունքից, որոնք աջ կողմն էին, ապտակում էին ծնոտիս, իսկ նրանք, որ ձախ կողմն էին՝ թքում էին երեսիս, որոնք հեռու էին՝ հող էին լցնում գլխիս, իսկ ոմանք բարձր ձայնով հայհոյում և անարգում էին: Որոնք մի քիչ մոտ էին ծաղրում էին և նախատում, մի մասն էլ արագ գնաց քահանայի ապարանքը՝ ավետելու: Երբ լսեցին լրաբերներին, իրար ձայն արձակեցին, թե՝ կապել են Հիսու-

սին և կապած բերում են, եկեք շտապենք Նրան ընդառաջ:

Իսկ բազմությունից ո՞վ էր, որ չհարվածեց ինձ, ո՞վ էր որ չծաղկեց ինձ, ո՞վ էր որ չթքեց երեսիս, ո՞վ չխփեց գլխիս, ո՞վ չհարվածեց իմ պարանոցին, ո՞վ բրիչով չհարվածեց թիկունքիս: Ով խոսքով չանարգեց կամ չնախատեց, կամ չարհամարեց, կամ չծաղրեց, մինչև հասցրին Կայիափայի և Աննայի ապարանքը: Քո սիրո համար այս ամենը կրեցի, և դու ատում ես ինձ և մեղքն ես սիրում:

15. Իսկ որ ասեմ, թե ինչ արին ինձ հետ, երբ տարան Աննայի և Կայիափայի ապարանքը, կզարհուրես լսելուց: Ասացին, որ անօրինաբար չենք դատում մենք Հիսուսին, այլ օրենքով և դատաստանով, և տվին ատյան: Ու նստեցին քահանայապետները՝ ծերերով հանդերձ և սուտ վկաներ բերեցին, թե Աստծո հակառակ է, թե օրենքի խափանիչ է, թե շաբաթի լուծիչ է, թե տաճար քանդող է, թե Աստծո հայհոյիչ է, թե ծերերի ավանդը արհամարհող է, և այլն, և այլն: Եվ սրանից հետո սկսեցին աղաղակ բարձրացնել, թե մահապարտ է, ոմանք, թե արժան է խաչ հանելու, ուրիշները հանդերձներն էին պատռում, ասելով, թե՝ Աստված հայհոյեց, ոմանք՝ թե չարագործ է, և ես տարա այս ամենը՝ համբերելով մեղավորիդ համար: Եվ այնտեղից տարան Աննայի մոտ, այնտեղից՝ Պիղատոսի ապարանքը, այնտեղից՝ Հերովդեսի իջևանը, այնտեղից դարձյալ Պիղատոսի ապարանքը, և գիշերը չտվին հանգիստ աչքերիս, այլ պտտեցնում էին ապարանքից ապարանք: Էլ չեմ պատմում, թե որչափ անտանելի անարգանք և չարչարանք անցավ իմ գլխով այն գիշեր:

16. Այնպես, ինչպես ես քեզ սիրեցի, կա՞ ավելի մեծ սեր, քանզի նույնիսկ մորս՝ Մարիամին չողորմեցի: Այն ժամ, որ տեսնում էր մայրս իր Միածին Որդուն, երկրի և երկնքի Արարչին՝ խաչի վրա մերկացած և մարմինը արյունով շաղախված, կողը՝ ծակված, երեսը՝ այլանդակված, գլուխը խոնարհած, հոգին՝ ավանդած:

Արդ, կարո՞ղ է մեկը մարդկանցից կամ հրեշտակներից իմանալ, թե ինչքա՞ն էր սգում նա, ինչպե՞ս էր կսկծում, սրտով այրվում, մորմոքում, հեծեծում, ինչպե՞ս էր հառաչում, որչափ տխրում, խռովվում և տագնապում, որքան հոգոց էր հանում:

Ինչպե՞ս էր ողբում, որքա՞ն արտասուք էր թափում, ի՞նչ երգ էր երգում, ի՞նչ ձայն էր արձակում, ինչպիսի՞ բառեր էր բարբառում: Ինչպե՞ս էր

խաչը գրկում, ինչպե՞ս էր բազուկները ինձ ձգում և չէր հասնում, ինչպե՞ս գետին էր ընկնում, հողը գլխով էր տալիս, ինչպես լաց լինում, ինչպես թախանձում, ինչպե՞ս խանդաղատում մահացող Միածնի դեմ, ինչպես էր երկնային զորքերը խոնարհեցնում իր ողբով, ինչպես էր մարմնավորների արցունքը բերում, ինչպե՞ս յուղաբեր կանայք իր հետ գետին էին ընկնում: Այդ ժամին մայրն իմ, որ այսպիսի կսկիծ ուներ, մեռա՞ծ էր, թե՞ կենդանի, արթո՞ւն էր, թե՞ երազում, սթափ էր, թե՞ թմրության մեջ, այսքան աղետի մեջ չողորմեցի մորս հանուն քեզ, և դու երես ես շրջում ինձանից, և թշնամուս կողմն ես դառնում:

17. Ո՛վ մեղավոր, իմացիր, որ այժմ քաղցրությամբ կանչում եմ քեզ ապաշխարության, և դու չես լսում ինձ: Զգուշացիր, թերևս մեռնես առանց զղջալու: Մի՛ այդքան երկնչիր քո մեղքերի շատությունից, որքան իմ երախտիքներից և չարչարանքներից: Քանզի, որպես քո մեղքերի հատուցում հազարապատիկ ավելի եմ տանջելու քեզ հնոցի կրակներում, որ արհամարհեցիր իմ չարչարանքները և ունայնացրիր իմ մարդեղությունը և իզուր համարեցիր երկնքից երկիր իջնելս քեզ համար:

Չարչարանքը, որ կրեցի մեղավորների համար, պարտք է նրանց վրա և եթե ապաշխարությամբ չվճարեն իմ չարչարանքների պարտքը և թողություն չստանան, իմ դատաստանի ժամանակ մեղքերի հատուցումն այնքան եմ տալու, որքան որ գործել են, իսկ իմ չարչարանքների պարտքը՝ հարյուրապատիկ, որովհետև արհամարհեցին ինձ:

18. Ով մեղավոր, ասա՛ ինձ, ի՞նչ վնասակար բան ես տեսել քո Արարչից՝ Քրիստոսից, որ այսքան ատում ես ինձ, կամ ի՞նչ բարություն ես տեսել սատանայից, որ այդքան սիրում և նրա կամքն ես կատարում, զազիր գործերովդ, եթե ինձ ականջ դնես, հիմա ես քեզ ցույց կտամ սատանայի բարությունը, որ քեզ արել է: Սատանան չէ՞ր, որ քո մորը խաբեց օձի միջոցով, և նրանով էլ քո հորը՝ Ադամին: Սատանան չէ՞ր, որ տվեց պտուղը քո հորն ուտելու: Սատանան չէ՞ր, որ նրանց մերկացարեց լուսեղեն պատմուճանից: Սատանան չէ՞ր, որ նրանց փախցրեց Աստծո երեսից և թաքցրեց թզենու տակ: Սատանան չէ՞ր, որ անեծքի մատնեց քո հորը և մորը: Սատանան չէ՞ր, որ արտաքսել տվեց աստվածավայել անմահության դրախտից և մատնեց մահվան: Սատանան չէ՞ր, որ ինն հարյուր տարի կսկծեցրեց անմահական դրախտի մոտ սաստիկ արտասուքով: Սատանան չէ՞ր, որ քո հոր լուսեղեն պատմուճանի պայծառությունը փոխարինեց մաշկեղեն հանդերձներով: Սատանան չէ՞ր, որ դրախտի անաշխատ պտղի վայելումը դարձրեց երեսի քրտինքի ջանքով ուտելու: Սատանան չէ՞ր, որ զրկեց հրեշտակային աճից՝ և դարձրեց անասնական աճի, և այն էլ՝ ցավով և տրտմությամբ: Սատանան չէ՞ր, որ քո հոր հոգին իր ծնունդներով արգելված պահեց դժոխքում հինգ հազար տարի, մինչ ես գթալով՝ ողորմեցի և գալով, խա-

չովս նրանց ազատեցի: Արդ, եթե քո նախահորը՝ Ադամին, այս արեց, ապա քեզ ի՞նչ կկամենա անել, որ այդքան սիրում ես սատանային, դու ինքդ մտածիր այդ մասին:

19. Ո՛վ մեղավոր, կամենում է սատանան քեզ ջնջել Հոր Աստծո որդեգրությունից, կամենում է բաժանել Սուրբ Հոգու բնակությունից: Կամենում է բաժանել քեզ Աստծո որդիների եղբայրությունից: Կամենում է Հոր Աստծո քաղցր սերը, որ Միածնին տվեց քեզ համար մահվան, փոխել ատելության: Կամենում է Սուրբ Հոգու երթը քեզանից արգելել: Կամենում է աստվածային անճառ շնորհների վայելչությունից զրկել: Կամենում է տիրական տաճարդ հիմնահատակ քանդել: Կամենում է Արարչի իմաստությամբ հորինված պատկերդ գետին գցել: Կամենում է Երրորդության ցանկալի տիպարդ չար մեղքերով եղծանել և այլ նման բաներ:

20. Ո՛վ մեղավոր, որ սիրում ես սատանային, տե՛ս, դրա ցանկությունները քո համար: Ցանկանում է սատանան քեզանից վերցնել ավազանի շնորհը, որ ընդունեցիր Սուրբ Հոգուց: Ցանկանում է մերկացնել մկրտության լուսապայծառ պատմուճանից, որ հագար: Ցանկանում է իմ կենարար մարմնից ու արյունից սովամահ քեզ սպանել: Ցանկանում է երկնային հարսանյաց հանդերձդ աղտոտել: Ցանկանում է քո կուսության լապտերը հանգցնել: Ցանկանում է Երկնավոր Փեսայիս հարսնարանի դռները փակել քո առաջ:

Ցանկանում է անդենական դրախտի վայելուչ տունկդ արմատախիլ անել: Ցանկանում է սրով հատել գեղեցիկ որթդ, որ հաստատված ես ճշմարիտ որթատունկ Հիսուսի վրա: Ցանկանում է Արարչի անթառամ ծաղկիդ մեղքերի խորշակով թառամեցնել և այլ՝ ըստ կարգի:

21. Ո՛վ մեղավոր, քննիր և սատանայի չարանալը, որ սիրում ես նրան: Չարանում է սատանան, երբ զղջում ես քո կատարած մեղքերի համար, չարանում է, երբ գործածդ հանցանքներն ես խոստովանում: Չարանում է, երբ մեղա ասելով, դեպի քո Տերն ես դառնում: Չարանում է, երբ գետին ընկնելով արտասվոք ինձ ես պաղատում:

Վիրավորվում է դառնապես, երբ ինձանից մեղքերիդ թողություն ես ստանում: Հրաբորբոք նախանձում է, երբ ապաշխարությամբ վերստին Տիրոջը հոգուդ մեջ ես ընդունում: Տոչորվում է կսկիծով, երբ Արարչիցդ պատվով մեծարվում ես: Տագնապում է մեծ տանջանքներով, երբ պայծառանում ես անթառամ պսակներով: Կատաղում է չարաչար բարկությամբ, երբ իմ երկնային փառքով ես պսակվում: Մեռնում է չարությամբ, երբ անվախճան կյանքով իմ հրեշտակների հետ պարուրված, երկնքի արքայությունում բերկրությամբ հրճվում ես:

22. Տե՛ս, ով մեղավոր, որ սիրում ես սատանային և կատարում նրա կամքը, թե ինչ է խոստանում քեզ: Խոստանում է քեզ սատանան բարություն՝ անդունդների անդնդում: Խոստանում է քեզ վայելչություն՝ իր բորոտած և թարախոտ, տաղտկալի և զազրելի կերպարանքի տեսությամբ, որ դառնագույն է, քան գեհենի հուրը: Խոստանում է քեզ ժանտատեսիլ և գարշահոտ դևերի դասի պարակցությունը: Խոստանում է քեզ որպես հանգիստ՝ անդնդային եռման կաթսան և հրաբորբոք կրակարանը: Խոստանում է քեզ որպես պատմուճան, արտաքին խավարը, որ թանձր է և շոշափելի, ուր աչքերի լաց է և ատամների կրճտում: Խոստանում է քեզ սեղան՝ դժոխքի հատակի լայն ծոցում: Խոստանում է քեզ, անքուն որդերին և հրեղեն ծովի մեծ վիշապներին: Խոստանում է քեզ որպես կերակուր սարսռելի դժոխքի քուրաների հալոցների հալույթը: Խոստանում է քեզ, որպես ըմպելիք, հրեղեն գետերի սարսափելի հոսանքները: Խոստանում է քեզ, որպես լապտերներ՝ շանթերի ցոլումը և կայծակների հրաբորբոք փայլատակումը:

Թող տարտարոսը և ամեն ինչ որ խոստանում է սատանան՝ իրեն սիրողներին ու կամարարներին:

23. Ով մեղավոր, ինչո՞ւ քո Արարչի երախտիքները չես ճանաչում, քանզի սատանան ամեն օր մահվանդ է սպասում, որպեսզի մեղքերիդ մեջ մեռնես, իսկ Ես իմ աներևույթ զորությամբ, մշտապես կիզում եմ նրան, ինչպես հրով, և իմ հրեշտակները խոցում են նրան հրեղեն սրով և հեռու փախցնում քեզնից, որպեսզի քեզ մահացու վնաս չտա: Գիտե՞ չարը, որ Ես մարդասեր եմ, և երկնչում է, թե մեղավոր մարդը կենդանի մնալով՝ հանկարծակի կզղջա և ողորմություն կգտնի Աստծուց և իր ձեռքից կգնա: Ուրեմն, ինչո՞ւ ես հեռու փախչում քո քաղցր Քրիստոսից, որ հրեշտակները անդադար տեսնելով, չեն հագենում իմ քաղցրությունից, ի՞նչ չար բան եմ կամենում քեզ, որ այդպես հրաժարվում ես ինձանից: Նրա համար, որ մոլորվածիդ եմ փնտրում, որ կորուսյալիդ եմ գտնում, որ վիրավորվածիդ եմ սփոփում, որ հարվածյալիդ եմ բժշկում, որ ընկղմողիդ ձեռք եմ մեկնում, որ հողմերից տարուբերվածիդ եմ հանգստացնում, որ ալիքների խռովություններից ծփյալիդ նավահանգիստ եմ հասցնում:

24. Ո՛վ մեղավոր, հիշիր, թե ինչ եմ կամենում քեզ անել, և սիրիր ինձ, որ սիրեցի քեզ, և սիրում եմ ու կսիրեմ: Կամենում եմ հիվանդությունիցդ բժշկել, կամենում եմ մեղքերիդ մեռելությունից հարություն տալ: Կամենում եմ անփարատելի սգիցդ հանել: Կամենում եմ դառն տրտմությունիցդ մխիթարել: Կամենում եմ սաստիկ վերքերիցդ բժշկել, կամենում եմ չար տառապանքներիցդ ազատել: Կամենում եմ մեղքերիդ կապանք-

ներից արձակել: Կամենում եմ չարի ծառայությունից ազատել:

Ով մեղավոր, տես, թե անհիշաչար Տերս ինչ եմ խորհում քեզ համար: Խորհում եմ, որ անձամբ գալով՝ հոգուդ անբուժելի վերքերը տեսնեմ: Խորհում եմ, որ դրա գարշությունը իմ ձեռքով լվամ: Խորհում եմ, որ դրա աղտեղությունը իմ վարշամակով սրբեմ: Խորհում եմ, որ դրա նեխվածությունն ու փտածությունը հեռացնեմ: Խորհում եմ, որ հոգուդ մեջ բուն դրած թարախը քամեմ: Խորհում եմ, որ աստվածային արտասուքը հոգուդ աղտեղության վրա առատորեն հեղեմ: Խորհում եմ, որ բոլոր չարիքներիդ բազմությունը ջնջելով, մաքրեմ և առաջին փառքին քեզ հասցնեմ, միայն թե զղջա և դադարեցրու չարիքներ գործելդ: Խոստովանիր հանցանքներդ և «մեղա» ասա, և ես կջնջեմ քո մեղքերի բազմությունը, թեպետ և հույժ սաստիկ ես մեղանչել:

25. Ով արդարների դասեր, իմ հավատարիմ ծառաներ, մի զարմացեք ձեր անոխակալ Փրկչիս վրա, թե ինչո՞ւ է այսքան մեր Տիրոջ և Արարչի սիրտը ճմլվում մեղավորների վրա: Արդ, միտ դրեք, որ հայտնեմ ձեզ իմ սերը, որ ունեմ մեղավորների հանդեպ: Հրեշտակների ինը դասերի երամները, որոնց քանակը մարդկանց կողմից անթվելի է և անընկալելի, այդքան հրաբուն էությունները և լուսապսակ բազմությունները, երբ տեսնում են իմ սաստիկ սուգը, որ սգում եմ մի անդարձ մեղավորի վրա, ամենքը միաբան, մեծ դողով ջանում են մխիթարել ինձ և չեն կարողանում փոքր-ինչ հանդարտեցնել իմ սուգը, քանզի այն բանի համար խաչի մահը հանձն առա, որ ոչ մեկը երբեք չկորչի: Նաև բոլոր արդարների գնդերը, որ իմ մոտ են, իմ արքայության մեջ, ողբալով դողում են իմ առաջ և բավական չեն՝ փոքր-ինչ փարատելու իմ տրտմությունը:

26. Լսի՛ր մի այլ ահավոր բան, որ կպատմեմ քեզ, քանզի իմ մայր Աստվածածինը, երբ տեսնում է ինձ այսքան տարակուսանքների մեջ, ծնկի է գալիս իմ առաջ և ստինքները բացած, որոնցով սնվեցի, ողբալով աղաղակում է և դողացնում է մատները՝ ասելով. «Որդյակ իմ, Միածին, մի՞թե բավական չէր այն վիշտն ու տրտմությունը, որ կրեցիր աշխարհում հրեաների և խաչ հանողների կողմից, և դեռևս տրտմո՞ւմ ես, ինչո՞ւ չես ողորմում քո լալագին մորը և փոքր-ինչ չես հանդարտում տխրությունիցդ: Բավական չէ՞ր տառապյալ մորս այն կսկիծն ու մորմոքը, երբ տեսա Միածինս խաչի վրա՝ արնաներկ մարմնով մահացած, և դեռևս հրով կիզում ես իմ սիրտը սուգ

պահելովդ»:

Եվ այսուամենայնիվ, իմ սրտում ուրախություն չի գալիս, քանի տեսնում եմ անդարձ մեղավորին գավթից դուրս ելած և իմ հոտից հեռացած ու սատանայի ձեռքն ընկած:

Քանի որ այնքան է կսկծում իմ սիրտը և տրտմում իմ հոգին՝ մի անդարձ մեղավորի վրա, որ երկինքը երկնավորներով և երկիրը երկրավորներով և ծովը իր ամբողջ լրմամբ ոչինչ են համարվում իմ աչքում:

27. Եվ մի զարմացիր մեղավորների հանդեպ, այսքան սրտացավության վրա, իմացիր, ով մարդ, որ երբ մի այգի տնկես, և սա քո աշխատանքից երեք տարի, թե քեզ պտուղ չտա, դու կտխրես դրա համար, իսկ թե չորանա՝ կսգաս մեծ տրտմությամբ, թե երեք տարի իզուր աշխատեցի, և իմ ջանքերը կորան: Եվ ինչպե՞ս ես չտրտմեմ մեղավորի վրա, որ նրա համար երկնքից երկիր իջա, կույսից մարմին առա, Աստվածս՝ մարդ եղա, Տերս՝ ծառա եղա, երեսուներեք տարի երկրի վրա շրջեցի, կենարար վարդապետությամբս մեղավորներին միշտ քարոզեցի. աստվածային նշանով շատերին բժշկեցի, ամեն տեսակի չարչարանք և նախատինք կրեցի, խաչը բարձրացա, իմ արյունը փրկագին տվի և գերողից առնելով՝ փրկեցի:

Արդ, իմ այս չարչարանքների պտուղը մեղավորի փրկությունն է: Իսկ եթե մեղավորը մեղքի մեջ մեռնում է, իմ չարչարանքների պտուղը կորչում է, և ես չարաչար խոցոտվում եմ և վիրավորվում, քանի որ ունայն եղավ իմ տնօրենությունը նրա համար: Իսկ երբ մեղավորը զղջում է իր մեղքերի համար և ուղղվում, ուրախանում, ցնծում եմ. այն ժամանակ իմ հետ ցնծում են նաև իմ Հայրը և Սուրբ Հոգին: Ուրախանում են և իմ բոլոր հրեշտակները, հրճվում են արդարների բոլոր գնդերը և ցնծալով բերկում է իմ թագուհի մայրը, և միասին պարելով իմ առաջ մեծ տոնախմբություն են կատարում երկնքում, որովհետև իմ չարչարանքների պտուղը չկորավ:

28. Ով մեղավոր, սիրիր ինձ, որ սիրում եմ քեզ, հրավիրիր ինձ քեզ մոտ, հրեշտակների և հրեշտակապետների սիրելիս և արդարների ցանկալիս: Չեմ գարշում հողեղեն հարկիցդ, չեմ խորշում աղքատությունիցդ, չեմ մերժում անմաքրությունդ:

Մաքրիր սրտիդ առագաստը, ջանա բուրել աղոթքի անուշահոտություն, վարքդ, որպես սեղան պատրաստիր, ողորմությունդ որպես գինի պարգևիր, խոստովանությունդ սփռիր որպես բեհեզ, սերդ որպես վարդ ծաղկեցրու, ապաշխարությունդ դիր, որպես ճրագ, լարիր մատներիդ տասնաղեղը իմ առաջ, քնարահարության համար, կանչիր սուրբերին քեզ բարեխոսելու և ինձ մեծարիր որպես հյուր, ճաշդ բավական է, սեղանդ առատ է, կոչումդ պայծառ: Եվ եթե կամենաս, Հորս իմ հետ կբերեմ և ես ու

իմ Հայրը կգանք և կօթևանենք քո մոտ: Եթե այս ամենը այսպես անես, ինձ իմ Հոր առաջ, որպես երախտավոր կկանգնեցնես, քանզի իմ աշխարհ գալու խորհուրդը ունայն չի երևա, այլ մարդկային բնությունը կմեծարվի առավել, քան հրեշտակներինը և հրեշտակապետներինը: Եվ իմ ուրախացած Հայրը կօրհնի քեզ իր բերանով այնպիսի օրհնությամբ, որը չի անցնում և քեզ տեղ կպատրաստի հրեշտակների բնակությունից վեր, քանի որ ուր որ ես եմ, այնտեղ իմ պաշտոնյան կլինի և ձեր կյանքը իմ մեջ է պահված առ Աստված: Եվ իմ մյուս անգամ գալստյանը, իմ Հորից օրհնվածներին կմոտեցնեմ իմ Հորը և կասեմ, ահավասիկ Ես և իմ մանուկները, որ տվեցիր ինձ:

29. Ով մեղավոր, ինչո՞ւ չես երկնչում իմ ահեղ զորությունից և չես ուղղվում, մինչ սիրով և քաղցրությամբ կոչում եմ քեզ ապաշխարության:

Իմացիր, որ իմ հայացքից երկիրը հիմքից դողում է, լեռները մոմի նման հալվում են, և ծովերը խռիվի նման չորանում, և դժոխքը խորագույն անդունդի մեջ է ընկղմվում: Եվ ինչպես չես զարհուրում, քանզի իմ զորությունը հատում է հողմը և հուրը: Եվ կամ ինչպես չես սոսկում, որ անճառ բնություն ունեցող ահեղակերպները, մաշվելով, այրվում են իմ ահավոր փայլատակումների հրկիզումից: Կամ ինչպես չես սարսափում, երբ սերովբեներն ու քերովբեները իմ ահավորությունից ծածկում են իրենց երեսները բոցանյութ թևերով: Եվ ինչպես չես դողում, քանզի, եթե հնար լիներ փախչելու, երկինքը չէր կարող իմ առջև կանգնել, նաև բոլոր նյութական տեսակները և երկիրը իր լրմամբ՝ անդնդային հաստատությամբ հանդերձ, իմ երկյուղից հեղվում են դեպի անհուն խորություն: Եվ կամ ինչպե՞ս չես սասանվում, քանզի եթե երկինքների երկինքը թաքնվելու տեղ ունենար, իմ ահից չեր հանդուրժի մնալ իմ ոտքերի պատվանդանի տակ: Եվ կամ ինչպե՞ս չես զարհուրում, քանզի եթե ծածկվելու հնար լիներ, անմահների բանակները դրան դիմելով կթաքնվեին իմ երկյուղալի արփիափայլ ճառագայթներից: Եվ նրա համար եմ ներում քեզ, որ չկորչես հավիտենական կորստով, այլ զղջալով փրկվես գեհենի հրից: Իսկ դու արհամարհում ես քո Արարչին և չես երկրնչում և դողում իմ ահեղ զորությունից:

30. Ով մեղավոր, երկյուղիր ինձանից, քանզի դեռ Ես քաղցրությամբ եմ խոսում քեզ հետ, որովհետև եթե չխնայեցի իմ հրեշտակներին, որ հպարտացան իմ դեմ, այլ երկնքից անդունդ իջեցրի իմ բարկությամբ, մի՞թե կողորմեմ քեզ: Եվ հիշիր, Նոյի ժամանակ, մարդկանց այդքան բազմությանը, որ աճեցին պոռնկության մեջ, բոլորին էլ ջրհեղեղով խեղդեցի: Սոդոմը և Գոմորը, որ բնությունից դուրս չարիքներ էին գործում,

երկնատեղած բոցով կիզելով մաշեցրի: Գոռոզ փարավոնին, որ խստացավ իմ դեմ, իր զորքերի բազմության հետ, Կարմիր ծովի մեջ խորտակեցի: Կորխյաններին և Աբիրոնյաններին, որ իմ քահանայությունը կամենում էին բռնությամբ հափշտակել, երկու հարյուր հիսունին բուրվառների հրով այրեցի և Աբիրոնի բանակը՝ երկիրը պատռելով, անդունդի մեջ խորտակեցի: Իմ դեմ թշնամի դարձած, Երիքովի պարիսպները ջրի նման սփռեցի, և նրա բնակիչներին իմ Հեսու ծառայի ձեռքով սրի մատնեցի: Ասորեստանի Սենեքերիմ արքայի հարյուր ութսունհինգ հազարանոց բանակը, իմ սուրբ անունս հայհոյեց իմ Երուսաղեմ քաղաքի դռան առաջ, իսկ Ես էլ հրաման տվի իմ հրեշտակին, որ գիշերվա մեջ մի ակնթարթում կոտորի նրանց հրեղեն սրով:

Իսկ արդ, ո՞վ է, որ իմ կամքին հակառակ է գործում և չարաչար չի պատուհասվում. նույն Աստվածն եմ, եթե շատերին չխնայեցի, նույնպես մեկիդ էլ չեմ խնայի: Եթե իմ ձայնի քաղցրությանը չլսես և չզղջաս ու մեղքերիցդ չդառնաս, քեզ հարյուրապատիկ եմ տանջելու գեհենի հրում, քան նրանց, ինչպես ասացի, թե սոդոմացիների և գոմորացիների համար դատաստանի օրը ավելի հեշտ կլինի, քան այս քաղաքի համար:

31. Իսկ եթե ասես ինձ, Տեր իմ, այսուհետև ես մեծ երկյուղով սպասում և դողում եմ քո ահեղ զորությունից, ինչպես և բոլոր արարածները, բայց

ի՞նչ անեմ, քանզի տարակուսում եմ իմ մեղքերի բազմությունից և խորհում տրտմած, թե ինչպե՞ս կողորմես ինձ ու կթողնես իմ բազում մեղքերը: Իսկ արդ հիշիր իմ անունը և ուրախ եղիր և մի տարակուսիր քո մեղքերի բազմությունից:

Քանի որ իմ անունը Ողորմած է, իմ անունը Երկայնամիտ է, իմ անունը Բազմողորմ է, իմ անունը Անոխակալ է, իմ անունը Անհիշաչար է, իմ անունը Քաղցր է, իմ անունը Ամենաբարի է, իմ անունը Մարդասեր է: Իմ անունը Հիվանդների Բժիշկ է, իմ անունը Ընկածների Հարություն է, իմ անունը Մահացածների Կյանք է, իմ անունը Խավարածներին Լույս է, իմ անունը Գերյալների Փրկիչ է, իմ անունը Հնացածների Նորոգիչ է, իմ անունը Մոլորյալներին Գտնող է, և դու ինչո՞ւ ես տարակուսում քո մեղքերի բազմությունից:

32. Եվ որովհետև ինձ խոստացար, ասելով թե այսուհետև ես ևս պիտի երկնչեմ իմ Քրիստոսից, և թե քո տարակուսանքը մեղքերիդ բազմության համար էր, նմանապես և Ես պիտի առատացնեմ իմ սերը, իմ գութը և իմ ողորմությունը քո վրա և պիտի խրատեմ՝ ցույց տալով քեզ, թե ինչ պետք է անես դու: Ո՛վ մեղավոր, միայն այս պետք է անես, որ հրաժարվես սատանայի չար կամքին հնազանդվելուց և հեռանաս պիղծ գործերիդ սովորությունից. եկ և զղջա Դամեքի նման, ասա քո Հորը՝ մեղա, ինչպես անա-

ռակ որդին, խոստովանի՛ր քո մեղքերի բազմությունը՝ ինչպես Դավիթ մարգարեն, ապաշխարի՛ր քո անօրենությունները՝ ինչպես Մանասեն, մաքսավորի նման աղոթիր առ Աստված, ասելով՝ Աստված, քավի՛ր ինձ՝ մեղավորիս: Արտասվի՛ր քո հանցանքների համար՝ ինչպես Պետրոսը, դադարեցրու քո չար գործերը, ինչպես պոռնիկ կինը, ավազակի նման ասա. «Հիշիր ինձ քո Արքայության մեջ», և տե՛ս, թե ամենազոր Տերս ինչ կանեմ քո մեղքերի բազմության հետ:

33. Ով մեղավոր, եթե կյանքիդ ընթացքում յոթանասուն անգամ յոթ ես մեղանչել և թե անթիվ են քո չարիքները, քան երկնքի աստղերը, կամ անհամար են քո անօրենությունները, քան ծովի ալիքները և կամ շատ են, քան տիեզերքում տարածված ավազը և թե ավելի հաճախ են, քան անձրևի շիթերը կամ բազում են, քան մանրամաղ փոշիները, որոնք համատարած տարուբերվում են օդում: Եվ թե մեծ ու ծանր են քո չարիքները, քան երկրի երեսին եղած բոլոր լեռները: Եվ թե անօրենություններդ երկնքից էլ բարձր են, կամ երկրի ծագերի սահմաններից էլ ավելի լայն են, կամ տարածված են եթերական օդի շրջաններից էլ այն կողմ: Արդ եթե քո մեղքերը և չարիքները ասածիս չափ լինեն, եթե զղջաս՝ աչքերիդ թարթումից և շնչիցդ և արտաշնչումիցդ, արեգակի ճառագայթների արագությունից և օդում կայծակի երևումից և մտքիդ ընթացքից առավել ևս բյուրապատիկ արագ քավություն կշնորհեմ քո մեղքերի ամբողջ բազմությանը, քանզի ամենակարող Արարիչ եմ և մեղքերդ ներելու համար ժամանակի կարիք չունեմ: Եվ ինչպես ջրի պղպջակը չի կարող դիմանալ այնպիսի հողմին, որ աշտարակներ է քանդում և ծառեր է արմատից խլում, այնպես և ամբողջ տիեզերքի մեղքերը զղջալուց բյուրապատիկ առավել չեն կարող դիմակայել իմ ամենակարող զորությանը:

34. Ո՛վ մեղավոր, իմացիր, որ դու չափավոր մարդ ես և մեղքերդ, թեկուզ շատ թվան քեզ, սակայն այն էլ է չափավոր, ըստ քո նմանության: Այնպես որ, իմացիր, որ ես Աստված եմ անսահման, նմանապես, ըստ իմ անչափության, և իմ ողորմությունը անսահման է: Արդ դու, որժամ քո մեղքերը խոստովանության միջոցով իմ անչափ ծով ողորմության մեջ գցես, այնպես և հեշտությամբ կհանգչի, ինչպես մի փոքր կայծ՝ համատարած ծովի մեջ:

Արդ, ինչպես բազմազան են մեղքերը, նույնպես և զանազան են ապաշխարության դեղերը, քանզի ոմանք հող ու մոխրով արդարացան, ոմանք՝ լալով և արտասուքով Տիրոջը հաշտեցրին: Ոմանք միայն պահքով և աղոթքով ապրեցին, ոմանք ողորմությամբ ողորմություն գտան ինձանից: Ոմանք մարդասիրությամբ և տկարներին ծառայելով, ոմանք՝ գետնախշտությամբ, ոմանք՝ խոնարհությամբ մեղքերի թողություն ստացան:

Եվ դու ընտրիր սրանցից մեկը, որը քեզ թվում է հեշտ ու թեթև, և նրանով կարող ես բժշկել քո մեղքերի բոլոր հիվանդությունները: Ոչ թե տարիների թվով և կամ բազում ժամանակով, այլ միայն ուղիղ դարձով և ճշմարիտ սրտով չարիքներից հեռանալով կարող ես արդարանալ:

35. Դրա համար և դու շտապիր, առաջ քան աշխարհից ելնելդ, ինչ-որ կկարողանաս՝ առաքիր երկինք: Թե աղոթք՝ արտասուքով, թե տքնություն՝ մաքուր, թե սաղմոսերգություն՝ ապաշխարանքի, թե ժուժկալություն՝ խոնարհությամբ, թե հրաժարում՝ երկրային ինչքերից, թե սեր՝ անկեղծ, թե փափագ՝ Քրիստոսին, և թե պահք և ողորմություն: Թե առաջնահերթ սրանք երկինք առաքես, վստահ եղիր, գալու ես հանգստության և վայելքի, իսկ թե ոչ՝ ապա երկյուղիր:

36. Այս ամենը լսելով և իմանալով, ինչպե՞ս եք պատրաստվում Աստծուն պատասխան տալու: Նայիր՝ Նա թախանձանքով և իր անհիշաչար գութով յուրաքանչյուրիս պարտքերի պարտապանն է:

Եվ Նա իր գորովալից գթությամբ դարձյալ փարվում է մեզ, աղաչում է և պաղատում, խնամարկում է և խանդաղատում, պարգևներ խոստանում, ինչպես հայր, մեզ կարեկցում և մեզ համար մորմոքում: Չարերի վրա առավել է տարածում իր խնամքը, ինչպես որ ծնողները իրենց ըմբոստացած որդիներին, երբ տեսնում են՝ իրենց գիրկն են առնում, գգվում, համբուրում, երեսը երեսին դնում, թախանձագին կարեկցում, ձայնով երգում և ծափ են տալիս: Ամեն կերպ հնարք են փնտրում մանկանը հաշտեցնելու, որ լացն ու հեկեկոցը խափանեն: Թեպետ նրանք լացակումած դեմքերը շրջում են, հայհոյում, երեսն են ճանկռոտում, սակայն դա չի զայրացնում ծնողներին: Պարգևում են մանկանը իր ուզած խաղալիքը, պատվական անոթները, եթե կոտրում է՝ չեն ցավում, թե կորցնում է՝ չեն տրտմում, միայն թե տեսնեն մանկանը հաշտված: Սա առավել ցույց է տալիս մեզ Աստվածախնամ կարեկցանքը: Այս փորձառությունը ապրելով, հոգերգող Դավիթը մարդկանց հանդեպ Աստծո ունեցած անչափ սիրո մասին ասում է. «Ինչպես որ հայրը կգթա իր որդիներին, այնպես գթած է Տերը իր երկյուղածներին»:



37. Նա՝ իր անչափ և անեզր սիրո անպատմելի և անհիմանալի հոգատարության մասին ավանդում է մեզ Ղուկաս ավետարանչի ձեռքով, որը և ասում է. «Ձեզանից ո՞վ է այն հայրը, որի որդին, եթե ձուկ ուզի, մի՞թե ձկան փոխարեն օձ

կտա նրան և կամ ձու ուզի, մի՞թե կարիճ կտա նրան: Իսկ եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, որչափ ևս առավել, ձեր երկնավոր Հայրը բարիք կտա նրանց, որոնք ուզում են իրենից»:

38. Տեսե՛ք, որքան գեղեցիկ են Նրա սիրո պարգևները իր արարածներին, եթե ցանկանաք, նաև դուք կլինեք Նրա սիրո որդիները, որ անընդհատ հոգում, համոզում է գազանացած մարդկային բնությանը: Արդ, մի՞թե քարից էլ կարծր եք, որ նյութերով քայքայվում, փափկում է, գործիքով տաշվում է և դառնում պիտանի շինության համար: Կամ երկա՞թ եք, այն էլ է հալվում հրից և դառնում պիտանի անոթ, արհեստավորի ձեռքին: Կամ գազա՞ն, այն էլ ընտելացված, հարկադրված և պապանձված է թագավորական դռների առջև, պատրաստ հնազանդվելու և ծառայելու նրանց: Վիշապների չարամտությունը և թունավոր օձերի ցասկոտ բարքերը, հնազանդվում են ճարտար թովչի հմայքներին, և դառնալով ձեռնասուն, ընտանությամբ դարմանվում են մեկտեղ: Եվ արդ, մարդկային իմացական և բանական հնությունը, ինչո՞ւ գեթ նրանց չի նմանվում, որ թողնի իր անզգամությունը և ապրի: Եվ ահա Սաղմոսերգուի պատգամը կշտամբում է մարդկային բնությանը՝ հանդիմանելով և նմանեցնելով օձին, քարբին և կարիճին՝ ասելով. «Նրանց կատաղությունը նման է օձի թույնի, վիշապ օձի թույնի, ու խցել է իր ականջները, որպեսզի ճարտար օձահմայի ձայնը չլսի և դեղ չառնի իմաստուն դեղատուից»:

39. Բայց դու, ո՛վ մեղավոր, նմանվիր Դավիթ մարգարեին, որ ասում է. «Մի՞թե որ ընկնեն, էլ չեն վեր կենա», ինչպես և այստեղ տեսաք, որ կատարեց մարգարեն. ընկավ ցանկության ձեռքը և բարձրացավ ապաշխարության ձեռքով: Աչքերով մեղանչեց, շնացավ, սպանեց, լեզվով քավեց, որովհետև խոստովանեց և ապրեց: Խոստովանությունը թեթևացնում է մեղքերի ծանրությունը: Խոստովանությունը մեղքերի դեզը ցրում է իբրև փոշի: Խոստովանությունը մեղքերի փշերի սարը այրում է ինչպես հուր: Խոստովանությունը որտեղից ելնում է, այն դարձնում է ինչպես պայծառ ոսկի անոթ, և ով անզղջում է մնում՝ չի սրբվում: Խոստովանությունն է, որ զորացնում է ապաշխարությունը, և առանց նրա որչափ որ գործի, հավիտյան կտկարանա: Խոստովանությունը՝ զղջման դուռն է, ապաշխարության սկիզբը, առաքինության և արիության գլուխը, հաղթողի զենքը, մեղքերի դեմ վահանը: Խոստովանությունը՝ ապաշխարության առիթ է, ապաշխարողաց պարիսպ, գլորվածների կանգնում, տատանվողների գավազան, շնացողների՝ ցուպ: Խոստովանությունը՝ մեղքերի աղտեղությունը սրբող, անմաքուրներին մաքրող, տանջանքներից ազատող, գեհենի ահից փարատող է: Խոստովանությունը՝ երկնքի բացող, Տիրոջ առջև տանող, ապաշխարողներին հավաքող, մեղավորներին ապաշխարության հրավիրող, մոլորվածներին կանչող, դեպի երկնային քաղաք առաջնորդող է: Խոստովանությունը՝ խավարյալներին լույս է, ովքեր աչք ունեն՝ ճառագայթ, մանուկների դաստիարակ, անհույսներին հույսի օրինակ:

Խոստովանությունը եկեղեցու զարդ, քահանային՝ քարոզող, գործողին՝ պսակ, մանուկներին՝ առագաստի զգեստ, և հարսանյաց մուտքը բացողն է: Խոստովանությունը՝ մահվան դռներից փրկող է, Աստվածային սեղանին հրավիրող, Տիրոջ մարմնից սնող, պատվական արյունից խմեցնող և տրտմածներին ուրախացնող է: Խոստովանությունը՝ ապաշխարության դուռ է, հանցանքների քավիչ, այն ընդունողներին՝ մաքրիչ թագավորներին պիտանի, աղքատներին ընդունելի: Խոստովանությունը՝ մեծամեծների և տնանկների պատսպարանն է, պոռնիկների քավարան, ավազակների պաշտպանարան: Խոստովանությունը բանական մեղուների հավաքող է, քաղցր գործերի վաստակող, դառնություն քաղցրացնող և ամեն առաքինություններով զարդարող: Եվ արդ, ինչպես կկարողանամ գովել խոստովանությունը, քանի որ որտեղ հանցանք լինի, առանց սրա, թե բյուրապատիկ առաքինություններ գործեն, ոչինչ չի օգնի, եթե պահք պահես, աղոթես, ճգնես, ողորմություն անես, թե ամեն առաքինություն գործես, հնար չի քեզ առանց սրա քավել հանցանքդ և թողություն գտնել:

40. Դու, ո՛վ մեղավոր, որչափ կարողություն ունես, մարտնչիր քո մեղսավոր սովորությունների դեմ զորեղ աղոթքով և բարեխոսության կանչիր քեզ սուրբ հրեշտակների դասը և ամենայն սուրբերին և արդարներին, մանավանդ սուրբ Աստվածածնին և առավել, Քրիստոսի չարչարանքները, և աղաղակիր առ Աստված անդադար, որ ողորմի քեզ, և Սուրբ Հոգու ձեռքով տա քեզ կարողություն՝ ընդդիմանալ մեղքերին:

Եվ եթե պատահի, որ հաղթվես ինչպես տկար մարդ, դու դարձյալ կանգնիր, և ինչքան ընկնես, այնքան արագ ջանա վերստին կանգնել, և Աստված այնպես կընդունի քեզ, կարծես բնավ չես ընկել: Քանզի եթե հագուստդ ընկնի ցեխը և կեղտոտվի, այնժամ օճառով կմաքրվի և չի թվա հագնողի աչքին խոտան, և որչափ առավել ևս հոգին, որ ընկած է մեղքի մեջ, և եթե բարձրանա այնտեղից, խոտան չի համարվի Աստծո առջև: Քանի որ Նա կարող է առավել սիրել մարդկանց, քան մարդն իր հագուստը: Եվ տես, Նրա անչափ սերը, որ մեր՝ մարդկանց համար մարդացավ, և անմահ Աստվածը մարմնով մեռավ: Եվ Նա ոչ միայն սիրում է, այլև ուրախությամբ վերցնում և դնում է իր ուսերին:

Արդ, ով ունի լսելու ականջ՝ թող լսի և իմանա և վայելի ապաշխարության և խոստովանության միջոցով ստացվող պարգևների բարիքներից, որ փառքով պսակում է և մեր Տեր Հիսուս Քրիստոսի գահին է նստեցնում: Եվ Նրան՝ Որդուն, և Հորը, և Սուրբ Հոգուն, վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: **ԱՄԵՆ:**

Ապաշխարության աղոթք

Տե՛ր երկնքի և երկրի, Հիսուս Քրիստոս, իշխան կենաց և մահու, դատավոր կենդանիների և մեռյալների, հույս և ապավեն իմ հոգու, քեզ եմ մատուցում իմ աղոթքի երկրպագությունը: Լսիր ինձ և քավիր իմ մեղքերը, որ միակդ ես առանց մեղքերի, որ միակդ ես սուրբ և սուրբերի մեջ ես բնակվում, որ միակդ ես գթած ու ողորմած: Ողորմիր ինձ, Ստեղծիչ իմ, և օրհնիր ինձ: Հաշտվիր ինձ հետ, կենսատու իմ, և Արքայությանդ մեջ հիշիր ինձ, ինչպես ավազակին: Դարձիր դեպ ինձ, Փրկիչ իմ Աստված, և դարձրու ինձանից Քո ցասումը: Բարկությամբ մի խրատիր ինձ և Քո ցասումով մի հանդիմանիր:

Մի բարկացիր ինձ վրա հավիտյան և մի հիշիր իմ չարիքները և մի պարտավորիր ինձ ըստ իմ անօրենությունների: Մի վարվիր ինձ հետ ըստ իմ մեղքերի և մի հատուցիր ինձ ըստ իմ անօրենության: Մի զրկիր ինձ Քո երեսից և մի դատապարտիր ինձ, քանի որ ես ինքս գիտեմ, որ հանցավոր եմ իմ մանկությունից և անպատասխան եմ Քո առջև:

Բայց Դու, Թագավոր հզոր և անոխակալ, որ մեղավոր կնոջ հանցանքները ներեցիր, ներիր իմ՝ մեղավոր և անօրեն քո ծառայի պարտքերը: Քանզի քո առատ բարերարությունն այնժամ է երևում, երբ ողորմում ես ինձ, որ արժանի չեմ Քո ողորմությանը, երբ ինձ ցույց ես տալիս գթությունդ, որ արժանի եմ բյուր տանջանքների, քանի որ իմ բոլոր օրերն անցկացրի չարության մեջ և չմնացի Քո հրամանով:

Արդ, քաղցրացիր իմ նկատմամբ, բարի և քաղցր Թագավոր, հաշտվիր բազմամեղիս հետ և մի դարձրու Քո երեսն ինձանից և բարկությամբ մի հեռացիր Քո ծառայից: Մի անարգիր ինձ և մի թող ինձ, իմ Փրկիչ Աստված, քանի որ թեպետ ես Սուրբ Հոգուդ տաճարն ապականեցի անառակ վարքով, բայց Դու գթա ինձ, Ստեղծիչ իմ՝ ողորմած և անհիշաչար, և մի ապականիր իմ հոգին գեհենի հրում հավիտենական այրմամբ: Ներողամիտ եղիր իմ հանդեպ, մարդասեր, և շնորհիր ինձ ապաշխարության ժամանակ և արցունքով զղջում, և զորացրու սիրտն իմ՝ իմաստությամբ՝ խորհելու Քո օրենքների մասին օր ու գիշեր, բարություն և արդարություն գործելու Քո առջև:

Բարձրացնում եմ դեպի Քեզ իմ աչքերը և իմ ամբողջ սրտով կանչում Քեզ, Տեր Քրիստոս, Միածին Որդին Աստծո, որ Քո մարդասիրությունից հաղթվելով, կամովին խոնարհվեցիր անճառ փառքից և առար ծառայի կերպարանք, խաչի ու մահվան չարչարանքների համբերեցիր՝ Քո ստեղծածների փրկության համար:

Արդ, որ այսպիսի սեր ունես մարդկանց հանդեպ և կամենում ես, որ

ամեն մարդ ապրի և ճշմարիտ գիտությանը դառնա, գթա և ինձ՝ բազմամեղիս, մարդասեր Տեր, և կամեցիր իմ փրկությունը և արա ինձ ողորմություն, որ առավել եմ մեղանչել, քան բոլոր մարդիկ: Քանի որ Քեզ չսիրեցի իմ ողջ սրտով և իմ ողջ զորությամբ չպահեցի Քո պատվիրանները, այլ ունայնությամբ անցկացրի իմ օրերն ու կատարեցի իմ սրտի կամքը: Իմ օրերը պակասեցին, և անօրենությունները շատացան, և ինձ համար չկա հույս փրկության և տեղ՝ ապավինության Քեզանից բացի, քանի որ միայն Քո բարերարությանն եմ հուսացած և Քո առատ ողորմությանն ապավինած:

Եվ արդ, արտասուքների բխմամբ, աղաչում եմ քեզ, քանի դեռ իմ ժամանակը չի հասել, քանի դեռ իսպառ կորուսյալ չեմ, շնորհիր ինձ ապաշխարություն և վախճանիցս առաջ արձակիր ինձ իմ մեղքերի կապանքներից և անտեսիր իմ անթիվ անօրենությունները:

Որ ամեն բարու Տեր և մեղքերը ներող Իշխան ես, ծածկիր իմ բոլոր հանցանքները Քո բարեգթությամբ և մխիթարիր իմ վշտացած ու տարակուսած հոգին և առաջնորդիր ինձ այսուհետև ըստ Քո կամքի ապրել իմ պանդխտության մնացած ժամանակը, և մի թող ինձ իմ անձի կամքով ապրել, մինչև տանես, բնակեցնես երկնքիդ Արքայության օթևաններում:

Լսիր, Տեր, Քո անարժան ծառայի աղոթքներն ու խոնարհեցրու Քո ունկն իմ պաղատանքներին, որ ասացիր. «Փնտրեցեք և կգտնեք, բախեցեք, և կբացվի ձեր համար»: Եվ այժմ, բաց իմ առջև, Տեր, Քո ողորմության դուռը, որ ողբալով կանչում եմ քեզ, և մի անտեսիր իմ մեղավոր անձի աղաչանքները, որ չեկար կանչելու արդարներին, այլ մեղավորներին՝ ապաշխարության: Եվ արդ, խոնարհված հոգով, փշրված սրտով, ամոթալից երեսով պաղատում եմ Քո անոխակալ տերությանը և ատյան դնելուց առաջ աղաչում և նախքան դռան փակվելը և անփոփոխելի վճիռ սահմանելն իմ արտասուքը Քո առջև հեղում, ողորմած Տեր, քաղցր և անհիշաչար և ներողամիտ՝ արարածներիդ հանդեպ: Հիմար կույսերի հետ մի՛ դատապարտիր ինձ՝ փակելով ողորմությանդ դուռը, չար ու վատ ծառայի հետ մի՛ առաքիր ինձ արտաքին խավարն, ուր աչքերի լաց է և ատամների կրճտում: Մի՛ հեռացրու ինձ Քո սիրելիների դասից և տարագիր մի՛ արա երանավետ հավիտենական կյանքից: Անբաժին մի՛ հանիր ինձ հայրենի ժառանգությունից, որ պատրաստել ես Քո սուրբերի համար աշխարհի սկզբից, և մի զրկիր ինձ երկնավոր հարսնարանից:

Եվ հանուն Քո մեծ ու փառավորյալ թագավորության, դատաստան մի մտիր Քո ծառայի հետ և մի հատուցիր ինձ ըստ իմ բազում անօրենությունների: Այլ շնորհիր ինձ աջակողմյան դասի արժանավոր և կատարյալ հոգիների հետ, լուսեղեն ամպերին բազմած բարձրանալ օդի միջով Քեզ ընդառաջ, և Քո սիրելիների և կամարարների հետ ուրախացրու հարազվարճ ուրախություններում և առատապարգև փառքվդ փառավորիր ինձ արդարների երամներում, նրանց հետ բնակեցնելով Քո երկնային արքայության մեջ՝ Վերին Երուսաղեմում: Որպեսզի նրանց հետ ձայնակցելով, փառավորեմ Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: ԱՄԵՆ:

Սուրբ Եփրեմ Ասորի